

„Droschak”

ORGANE
de la Fédération

Révolut. Arménienne

ԴՐՈՇԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak”


GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈԿԱՆ ԴԱԶՆԵՍԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ



ԵՓՐԵՄ

EFREM



Ամենավառ ճրագն էր, որ մարեց իրանի գորշ հօրիզոններում, և գիշերն իջաւ երկրի վրայ — մոալլ, անաստղը գերեզմանային գիշերը:

Մահւան զօդանջն անցաւ, ոռումքի աղէտաւոր որոտի պէս, Պարսկաստանից գէպի հայկական ամենահեռաւոր վայրերը, և բոլոր սրտերը ճմլւեցին, բոլոր աշքերը շշմուր, ապշահար հայեցին իրենց շուրջը, որպէս մի վատ, անզորմ երազի մէջ, մի անհաւատալի և սոսկալի անակնկալի հանդեպ. Որովհետեւ Եփրեմը թւում էր անմահ, որովհետեւ ազատ, մարտնչող Պարսկաստանը աներևակաւելի է առանց Եփրեմի...

Քօմթը կանգ չ'առաւ Արեւելքի սահմաններում ։ Նա գնաց գէպի լուսաւոր աշխարհի բոլոր կողմերը՝ ծանուցանելու ազատասէր և ուամփավար մարդկութեան մի անսովոր մարդ է գերեզման իջնում, մէկը կլասսիկ և տիպար Հրամանատարներից, որոնց նմանները խիստ ստկաւ են ծնունդ առնում ժողովուրդների ծոցից...

ո Արեւելքի Դանտոնը՝ — ասացին ոմանք: Հայկական գուրելքի, Կրօսմէլ, Թօնապարս — ասացին ուրիշները:

ո Իրանի ճակատագիրը անդարմանելի հարւած կրեց՝ — ասացին ոմանք:

ո Իրանը կորցրեց իր ամենամեծ մարդուն, նրա միջազդային կացութիւնը վտանգի մատնեց՝ — ասացին ուրիշները:

Եւ բազմաթիւ յօդւածներ, և խանդավառ ներբողներ, և ցաւագին ափսոսանը. . . Ամբողջ համաշխարհային մամուլը:

Պարսկաստանը, այս', կորցրեց իր մեծագոյն ռահվիրային և նրա առջև մէկէն ի մէկ բացւեց անյայտութեան մութ անդունդը, բանի՛ անգամ նրա մանուկ աղատութիւնը տագնապի ու կորստեան վիշն էր հասել — և ամեն անգամ Եփրեմը հանդէս է եկել իրրե փըրկութեան խարիսխ, իրը ազատարար Հրեշտակ, Քանի՛ անգամ ռէակցիայի վայրենի խոժամութը նեղն է գցել սահմանադրական կառավարութիւնը — և ամեն անգամ նա կոչ է արել հայ ռազմավարի բազուկին և ուղեղին...

Ոչ ոք, սակայն, չի կարող այնքան ուժով զգալ ապրել այդ ահաւոր կորուստը, ինչպէս Տերութիւն ծնունդ տւող ժողովուրդը և կուսակցութիւնը:

Մի ահագին սոււեր իջաւ հայկական կեանքի վրայ, մի ահագին ճեղք բացւեց Դաշնակցութեան՝ պատնէշի մէջ:

Ամենից շատ մենք էինք թերահաւատ... Ընդամենը

մէկ շարաթ էր, ինչ ստացել էինք իր լակոնիկ հեռագիրը. Սալար Պօվլէի դէմ զրկւած կառավարական առաջին բանակը ջախջախւել է, Սալար Պօվլէն սպառնում է Համագանին, այսօր գնում եմ նրա դէմ”...

գնում էր պատերազմի գաշտ Յոռեաեսութեան մի շեշտ կար մեր թանկագին ընկերոջ այդ վերջին հեռագրի մէջ, ասես արդէն գուշակում էր գալիքը:

Գնաց, յաղթեց և յաղթեց... Զոհ գնաց իր յաղթանակին, իր դանտօնեան յանդգնութեան:

Եփրեմը անհամբեր առաջ է նետում և իսկոյն զարնուում՝ այսպէս է հեռագրում մեզ Հ. Յ. Դաշնակցութեան թեանի մարմինը:

Խնչպէս հաւատայինք հեռագրական գործակալութեան Առաջին անգամը չեր առ լսում էր այդ մահագոյժը: Մի բանի անգամ տարածւել էր նա — և հելքւել: Խնչպէս հաւատայինք... Իրանի ռազմագաղաթը այնքան անգամ հիւրընկալել էին անզուգական ռազմիկին, այնքան գոռ ու վտանգալի արկածների էր հանդիպել նա — և ամեն անգամ ճողովրդը էր յաղթանակի շքեղ դափնիներով... ոկը ճողովրի և այս անգամ — միսիթարում էինք ինքինքնիս — Եփրեմը չի սպանել, Եփրեմը անխոցելի է...

Վաղուց ժողովրդական հիպերբօլիկ լեզուն տւել է նրան այդ ածականը: Վաղուց, գեռ առաջին իր յաղթական քայլերից, նա հոչտիւել էր դիւցազնական, առասպելական գծերով: Եւ ժողովուրդը չի խաբւում, նա զուր տեղը չի ոդիւցազնացնում: Նրա բնազդը չափազանցնում է, բայց խպառ չի մոլորում և չի կեղծում: Նա սիրով հնարում է, բայց հնարում է ոչը ոլորը: Վառւած երեակայութիւնը մէկէն ի մէկ — մի մարդու կամ մի անցքի ուժգին տպաւորութեան տակ — ստեղծում է ոհրաշքներ՝, որոնց նա առաջինն է հաւատում անկեղծօրէն և որոնք վաղ թէ ուշ գառնում են մասամբ իրողութիւնն:

Եւ հաւատը վարակիչ է: Եւ միմիայն ժողովուրդը չէ, որ յափշտակուում է, լեզենդացնում Քոլոր նրանք — հայ և օտար — որ տեսել են հերոսին կուի ատեն կամ խաղաղ կենցաղի մէջ, ընտանեկան, ընկերական օձախում, արամագիր են օժտել նրան արտակարգ յատկանիշներով: Քոլորն էլ — ինտելիգենտ և անուս — վկայում են, որ նա ոչ միայն կուլած, տաղանդաւոր հրաման մարտը նչող է, ոչ գիտէ կանգնել միշտ առաջին շարքերի մէջ, որ գիտէ անալլայլ վճռականութեամբ նետւել միշտ կուի ամենաեռուն կենտրոնը, այլ որ նա միաժամանակ և աննման ո ա զ մ ա գ է տ է ե ր, օժտւած գործնական մի անվրէպ բնազդով, յօրինող պատերազմի լաւագոյն ծրագիների, ժողովներում սակաւախօս, բայց խոյուն և ներհուն, նրա ճառերը հակիրճ, նրա խօսքը կտրուկ հեղինակաւոր և համոզիչ, ամենաբարդ ինդիբները

արագօրեն լուծող ամենաբռն վէճելը արագօրեն
հարթող...

Գործի մարդ գն էր, որ չէր սիրում երկար-
բարակ վիճաբանել. ուզմի անյագ և անհանգիստ ոգին
էր, որ շարունակ վինարում էր նոր արկածներ ու
վտանգներ. նա կեանքը վայելում էր այդ մահացու
վտանգներում, գնդակների տարափի տակ, նա բախտը
որոնում էր կուի ուրագանի և զենքի ժխորի մէջ. . . Նա
պէտք ունի անդադրում յոյզերի ու շարժումների, նրան
պէտք են ազատ օդ, լայնածաւալ կըկէներ՝ ըստ կա-
րելոյն մեծ, ահեղ, նապօլէօնեան ճակատամբառներ
մղելու համար. Պատերազմի դաշտի վրայ նա դիւթա-
կան ուժ ունի. կըկէսը շնչում է նրանով, գետերն ու
դաշտերը ժպտում են նրան՝ յաղթանակի յոյսերով,
բանակը վառւում է, ելեբարանում նրա ներկայու-
թեամբ, տարածւում է խինդ ու բերկանք, յաղթա-
նակի վստահութիւն —և թշնամին յաճախ նրա անունը
լսելուն, նրա հայեցքը տեսնելուն պէս՝ դեռ կորիւը
չսկսւած, փախչում է սարսափահար...

Ահա թէ ում կորցրինք: Այդ լայն ճակատը և այդ
վսեմ, փայլատակող նայւոծքը չունին ոչինչ լանկիթա-
մուրեան: Գոռող, այո՛, և գինքակ՝ ազատութեան թըշ-
նամու հանդէպ—այդ հայեացքի մէջ ցոլում է սակայն
գաղափարային, ասպետական վեհանձնութիւնը. մոլեգին
և ահարկու ռազմիկը մի մեղմ, բարի և հաշտարար
ոգի էր, տոգորուած իր վսեմ պարտքի գիտակցութեամբ,
ներշնչւած բացառապէս աշխատաւոր և տառապող ժո-
ղովրդի շահերով, որոնց և նւիրաբերել էր իր թանկա-
գին կեանքը, պատունեկութեան օրերից ի վեր:

Հաշտաբար ոդի... Քանի՛ անգամ կատարել էր այդ
նւիրական պաշտօնը ազատութեան բանակում իսկ, պար-
սիկ, բախտիար հրամանատարների վերաբերմամբ... մի
բիրտ ու ապերախտ միջավայրում՝ ուր գաղափարական,
անշահախնդիր գործիչներին պէտք է փնտրել գիօգե-
նեսնեան լատոնոցի:

Դաշնակցական հրամանառարք իր մի բուռն կտրիճ-
ներով անշահախնդիր գաղափարայնութեան կրողն եղաւ
մի քանի տարի շարունակ, այդ բարոյական ամայու-
թեան մէջ, Ազատագրել մի մեծ երկիր, որ հինաւուրց
քաղաքակրթութեան որբաններից է, փրկել բազմամի-
լիօն մի ժողովուրդ ասիսական վայրենի և սանձարձակ-
բռնապեառութիւնից և շազկապել երկու գարաւոր զրա-
յիններին — հայ և պարսիկ, բրիստոնեայ և մահմեդա-
կան — համերաշխութեան, համաքաղաքացիութեան սերա-
կապերով, կենդանի օրինակ տալ ամբողջ իսլամ աշ-
խարհին, մասնաւորապէս Թիւրքիային, — ահա մեծ
նպատակէտը և նրա տիրական բաղաձանքը:

Գաղափարի ռահմաքիրայ - և համեստ ռահմաքիրայ նա
հեռու թեաց ալլասեռող գայթակղութիւնից, նրան եր-
բէք չըլուցին դիրքը, պատիւր, տիտղոսը և այն բնդ-

Հանուր գինովութիւնը, այն խանդավառ ու մեծագործ ովաննաներն ու յաղթական կամարները, որով ամբողջ մայրաքաղաքը դիմաւորում էր հերոսին՝ պատերազմի դաշտերից վերադառնալիս:

Պատահ. մեր քէղայիններին. Քիչ չեն նրանց շարքերում այդօրինակ տիպարներ մարգկային համեստութեան ու ազնութեան, որ կրկնապատկում է նրանց արժեքն ու թռվքը

Եթէ Հ. Յ. Դաշնակցութեանը պատմականօրէն վիճակւած էր դուրս հանել բազմաչարչար ժողովրդի արգանդից բոլոր ռազմական կորովեներն ու հիմքերը և պատրաստել նրա ողջանշ - ազատագրումը, ապա միւս կողմից, նրան վիճակւած էր այդ ռազմական տաղանդների հետ միասին հասունացնել ու հրապարակ կոչել ցեղի խորունկ ծալքերի մէջ մրափառ ամենավեհ բաղաբացիական առաքինութիւնները, որոնք զարդարում և գեղեցկացնում են կեանքը:

Պատիւ մեր ֆէդայիներին: Ահա մի շքեղ պլէագ,
մի փառահեղ բոլլք ուրիշ բազերի, որ հանգուցեալ
զօրավարի հետ երկար տարիներ վարել են ազատու-
թեան դժւարին կոհւը և որ այսօր, նրա մահից յետոյ,
շարունակում են նոյն կոհւը մեր անվեհեր Քեռիի հրա-
մանատարութեան տակ: Շարունակում են, անգամ այն-
պիսի մի բաղաքական մթնոլորտում, ուր երկինքը բնաւ
չի ժպտում, մասնաւորապէս հայոց դատին, ուր յոյսերը
դեռ նոր փթթւած դալկանում են, թառամում, ուր
արտաքին միջամտութեան խարազանը ցցւել է անողորմ
ու սպառնական.. Տղերը շարունակում են իրենց կոհւը,
ոգեորւած, անշուշտ, այն տարտամ յոյսով, թէ վաղ թէ
ուշ իրենց ձիգերը կը պսակւին աջողութեամբ, թէ կը
հասնի, վերջապէս, այն օրը, երբ ազատ ու անկախ
իրանը, առանց ցեղի ու կրօնի խարութեան, կը տօնէ
իր ներքին խաղաղ վերանորոգութեան տօնը: Եփրեմը
մեռաւ... գուցէ նոյն յոյսով:

Յուզիչ մի բան կայ—և խորհրդաւոր, Նշանակալի բան
—այդ յամառ, երկարատև ու առաջապահ կուի մէջ, որ
ստանձնել են մի բուռն հայերը տասնեակ միլիոնաւոր
ազգաբնակութիւն ունեցող մի երկրում, ուր հայութիւնը
մի փոքրաթիւ գալութ է միան...

Այդ գաղութ-ազգի շահերի անունով բեմ նետւեց հինգ տարի առաջ մեր անփոխարինելի ընկերու և անքաքերի գոռ ու յարածուն ալիքների վրայ աստիճանաբար բարձրանալով, գարձաւ մի ճշմարիտ, հոյատիպարի ներ աց ի օն աց ի օն ալիստ, հայ և պարսիկ ցեղերի մի զօրաւոր շալիապ և նորագոյն Պարսկաստանի այլ նամեծ գործիչ:

847. աւանդական կոմմազօլիտիզմը — համաշխարհա-քաղաքացիական բնագդը — միանգամ և երկնեց, ըս-ծայելով մարդկութեանը իր փարթամ ծնունդներից մինը, ստարացնելով շարանը մեծ, հոյատիպ գործիչների,

որոնք այլ և այլ երկրներում, այլ և այլ առաջարեղիներում վաստակել են համաշխարհային հռչակ...

Նգիզառա, Թուաստան, Պարսկաստան:

Կուբար փաշա, Լորիս-Մէլիքօվ, Եփրեմ...

* *

Հայց! Զէնքի յաղթափան շաշիւնը մարեց դառնութեան արցունքների մէջ, որոտընդուստ ծափերը տեղի անին հաճգիւառոր ու պատկառութ լռութեան Անողօր

մահապատանը Խէացլեց ամեն ինչ իր ցուրտ կապանքներում...

Գնաց անզուգական ռազմիկը, իր երիտասարդ փառքի դափնիներով ծանրաբեռնուած, իր երկու հայրենիքի գուրգուրանքով ըրջապատւած: Եւ այսուհետեւ, իրքն մի մեծ սաւեր, մի հզօր ուրւական, կը շարունակէ գերեզմանից իսկ հսկել ազատութեան բանակի վրայ, քաջալերել ոգևորել...

Եփրեմը մեռաւ. Պարսկաստանը պիտի ապրի...

ԵՓՐԵՄԻ ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂԻԱԾ «ԴՐՈՅԱԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայոց!

Եկամուտուն մը յէց ՄԱԿ Վերաց. Քար,
ո՞ր շաբաթական առաւ ուսուն ջայց
+ սուսուն ջայցի հայց է և միա ժամա-
րան ջայցի մուսացոյ: Էն ջայցն է ՄԱ
Երեսուն մը բառեց ականց. զայք-
այս. Կոյ նայք ու ոյս-Մ ջայց անձօք:
Ջայց ջայց անձօք ջայց անձօք
լուսուն կրամաւ տօքայ. ջայց-
յէց նայ: Բայու-Տ և Երեսունց և յայ
յէց բայց անձօք անձօք:
Անձօք բայց անձօք

ԵՓՐԵՄԻ ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՒԾ, ՈՒՂՂԻԱԾ «ԴՐՈՅԱԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ (ՄԱԿԻՑ 8 ՕՐ ԱՌԱՋ)

ԱՍԼԱՐ-Դօվլէի դէմ ուղարկւած կառավարական բանակը ջարդւեց. Ասլար-Դօվլէն սպառնում է Համագանին. այսօր գնում եմ նրա դէմ».

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՎԵՐՁԻՆ ՑԱՐԻԱՅ ԲԱԿԱՑԱՐՑՆԵՐԸ
ԵՒ

“ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԻՆԵ

(ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ)

Մինչև ուղարեմբեր 13-ը Ասլար Դօվլէն որոշած է եղել իր բանակի մի մասը Ղում ուղարկել, թե հրան արշաւելու համար: Այդ իմանալուն պէս՝ կառավարութիւնը հրահանգում է Ասլար Զաֆար բախտիարցուն՝ Ասլար Դօվլէի դէպի Ղում շարժւող բանակի առաջն տռներ: Ասլար Զա-

ֆարը թշնամուն հանգիպում է Ապէհում, ջարդում է նրան և սեպտեմբերի 13-ին շարժւում է գեպի Ըեմսապատ Ա.Դ լուրն առնելուն պէս՝ Ասլար Դօվլէն իր զորքը յետ է քաշում նուրարանից գեպի Ըահսկվան Անզի և սկսում է այնուեղ ամրանալ:

Մ ե ծ բ ա ն ա կ ն է լ Եփրեմի հրամանատարութեամբ նոյն գիշերը ճանապարհում է գեպի Ըեմսապատ: Ասլար Զաֆարի հրանակի մի մասի հետ և ջարդելով յետ է մղում նրան:

Սեպտեմբերի 14-ին Եփրեմի բանակը հասնում է Խառնապատ: Հանգիպում է Ասլար Դօվլէի 600 հոգուց բազկացած առաջապահ գնդին, որը առանց կուի յետ է նահանջում գեպի բազը Ըահ: Նոյն այդ օրը Եփրեմի բանակին միանում է Ասլարի բանակը:

* Տես «Եթօսի», № 2:

Մինչ մի կողմում՝ կառավարչականները նաև լին խանին ջարգում, փախցնում են, մի ուրիշ կողմի վրայ էլ Եփրեմի Ասրդար ԲՀառուրի և Ասրդար Մահմետ ալեմի բանակը միացած էւում են Ասլար Դավթիքի կողմանիցների՝ Դաւուրի խան Քիոլհասի, Լոռուսանի Փոշտոքունի, Համազանի ձիաւորների, Քիւրդիստանի Ջահիրօլ մամալիբի քիր և անշահցու Հաջի Ամի Ուրզա խան Գասուլցու հետ։ Այդ կախը չափազանց նշանակալից է նախ Նրանով, որ Ասլար Դավթիքի մեծ ուժն էր այդ, երկրորդ՝ որ թշնամին նկատելով մերսնց ինքն է նախայարձակ լինում և երրորդ՝ որ Նրանը մատ 12 համ 7—8 ոստութեականոց աւստրիական թնդանօթներ են ունենում թշնամին Քաղը Շահի բլուրների վրայ և զիրը բռնած լինում կախը տեղի է ունենում ցերեկը և տեղում է երկու և կես ժամ։ Երբ թշնամին յարձակում է մերսնց վրայ՝ Հրացաններից ու թնդանօթներից միանդամեն կրակ անելով, մերսնը քայլուչափ մերենալով չափում են տարածութիւնը և սոյնական կրակ են թափում Հրացաններից ու զնդացիրներից։ Ըստով զործի է կազում և մերսնց Շնայդերը թնդանօթը (մեծը)։ Երբ Ե փր և մ ու Գըր ի շան Շնայդերի մատ կանգնած կառավարելու են լինում այն թշնամու թնդանօթի գնդակներից մէկը գալիք է զէպի նրանց և միայն պատահմամբ այդ վայրկեանին նրանց առջևից անցնալ երկու բեռնակիր ջորու կազելով ցըւում է նրանց Այսպիսի մի պատահմականութեամբ միայն Եփրեմն ու Գրիգոր ազամուում են։ Շնայդերի միջոցափ մերսնը կտրում են նրանց թնդանօթներից մէկը։ Թշնամին չգիմանալով առջեկից ու ետքից եղած յարձակութերին, փափչում է, կու և գաշտում թողնելով 500-ից աւելի սպանւածներ, 100 զերի, 11 թնդանօթ և բոլոր վրանները կախը բաւական տաք էր Մի ձորում, օրինակ, մերսնը շրջապատել են 200 հոգու և առաջարկել են անձնատուր լինել նրանը ոչ մի պայմանով չեն համաձայնուում և շարժնակում են կու և լինչել մինչեւ այն վայրկեանը, երբ զ ե ը ջի՞ն կ ու ո դ ն է ը ն կ ն ո ւ մ մերսնց զնդակից։

Այդ կույի մէջ կառավարականները տիին 10 զոհ բախ-
տիարցին: Ապա բանակը շարժւեց գիպի Համագան: Այսուեղ
գնաց և Մազանդարանից եկած՝ մեր Ասլանի իսումը ըլլ
Սալար Դիլէն զնում է Շատարին, որ Համատանից: 20
բոպէի ճանապարհի վրայ է Սրբ բանակին միանում են
երկու խումբ Համագանից: Երկու խումբ Արագից, մի խումբ
Ալեքսանդրից, մի խումբ էլ արարաներից (Խլը-Արած): Սալար
Դովիէի բանակի կուողները վերջին պարտութիւնների ազ-
գեցութեան տակ սկսում են թողնել նրա շարքերը: Զօրիքի
լըման առաջն առնելու համար, նա խոստանում է իր
կուողներին, որ թաէ հրանք վերցնելուց յետոյ, երեք օր
թողնելու է քաղաքը իրենց տրամադրութեան տակ... թա-
լանելու համար:

ԹԵՀՀՐԱՄԱՆԻ ՄԻՒԾ.—Քանակը հեռանալուց յետոյ, քաղաքի պաշտպանութիւնը յանձնեց նոր եկած շվեդ հրահանգիչներին (ինստրուկտոր)։ Արանք նկատելով քաղաքի զանազան կողմերից բաց լինելը, թշնդանօթներ են տառնում մի բանի գարբանները, պահակախմբեր են՝ նշանակում՝ զօրիից, փոյշներից, ժանդարմներից, բախտիարցիներից և կամաւորներից։ Այս հանդամանքը վախեցնում է աղջարնակութիւնը թուլորը պահիկի մեջ եին, ինչ որ խռովութիւնների են սպասում Սեպտ. 12-ին և 13-ին հացը մէկէն ի մեկ պակասեց։ Կա պակասեց և ամսանցներում, մթերքները նորնակես։

Ուուաց գեսպանատան ամարանցոցը մ Զարդանդա, ուուաներն այնպէս էին սանօթինել, որ մասնաւորապէս հայերին մթերք չձախւի, որից և ստիպւած այնտեղ ապրողները ուրիշ ամարանցներից էին իրենց համար հաց և ուրիշ մթերքներ բերել տալիքու Առ հասարակ ուուաների պրօվօկատորական գերը այս անգամ ամեն մի բանում էլ նկատում էր Երբեմի այստեղ Ներկայացումներ աւող Աղեմելիճը ուուաց գեսպանատան կողմից Վազրին ուղարկւեց պրօվօկատորական գործ ողութիւնների համար Քիչ չեն նաև ուուանագարկուներն ու սատիկանները:

Սեպտ. 15-ին խարամատաների պահակները գիշերը տեսնելով մի փախչող մերկ ձի և կարծելով, թէ Նրա վրայ մարդ կը լինի նատած, սկսում են կրակ անել: 1200-ի չափ փամփուշտ կրակելուց յետոյ միայն սպանուում է մերկ ձին և... պահակները հանգստանում են: Քաջաքի մէջ մի սարսափ էլ դա ձգեց:

թե՛ւ Խիթջ.՝ Աեպտ. 11-ին, առաւօտեան մի ժամ մասցած՝ Զիսագովի (Թաւրիզի զինւորական ընդհանուր հրամանաւարը) իր բոլոր ուժերով յարձակւում է Ղարամէլիքի վրայ և մինչեւ երեկոյ խիստ տևող կաւից յետոյ, չի կարողանում թշնամուն այնտեղից գուրս բշել: Կառավարականներից 3 և թշնամուց 11 սպաննեց: Սամազ խանը այդ օրը բառմինջում էր: Նա իր ուժերը կենտրոնացնում է բասմինչու Ղարամելիք: 12-ին Սամազ խանն օգտուելով Ուամագանի տնից՝ յարձակւում է Թաւրիզի վրայ Շամղազանի կողմից և տիրում Շամղազանի պարտէզներին: Հայ և Թիւրք մարտիկների յարձակմանը չդիմանալով ետ է նահանջում, բաւականին կորւստ տալուց յետոյ Երկու անգամ Ղարամելիքը թեթև ուժակոծ ելուց յետոյ՝ թշնամին թուլանում է այդտեղ խիստանի կողմից էլ յետ և քաշում Վասպինչ, այնտեղից էլ Գիւղապատ:

Դումանը, վհատուած պարսիկ ու թէւը խմբապետների ձգձունեներից, հրաժարուամ է իր վրայ գրաւած պարտականութիւնից, ամբողջ խմբով մնալով իրեն. օժանդակի:

ինչպէս ասացինք, բանակը Համադան չհասած՝ Առաջը
թողել ու փախել էր, իսկ նրա մարդիկ ցըւել էին և այլքա
նրանց հետապնդելը աւելորդ էր: Այդ իսկ պատճառով,
Եփրեմը մի քանի անգամ՝ հեռագրով դիմում է կառավար
րութեան՝ թոյլ տալու իրեն Թեհրան վերադառնալու բա-
նակի հետ: Կառավարութիւնը ոկզրում տատանւում էր,
բայց ի վերջոյ յարդեց Եփրեմի դիմումը Գօշանում 300
խանութ են այրուում... Այդ ընդունելով, որպէս խառնա-
կութիւնների ազգանշան, Ղազվինի բանակը շարժւում է
դէպի այն կողմը՝ Ղազվինով Թեհրան վերադառնալու Հա-
մադանի և Ղազվինի արանցում մերոնց վրայ անակնկալ
կերպով յարձակում են, յայտնի չէ թէ ում կազմից: Մե-
րոնք ցրում են թշնամուն: Այդ կաւի մէջ սպանում է
մեր մասնեւների թափանիկի: Ա ու Ե Բ Շ Ա Ռ Ա Խ Ի Մ Շ Ա Ն

մի երկուն էլ վիրաւորում են: Պէտք է ասել, որ մեր մարտիկներից մի բանիսը թեհրանից Համադան և Համադանի շրջակայքում բաւական զայթակղւել էին թալանով. այս հանգամանքը խիստ զայրացրել է Քեռուն և Եփրեմին: Վերջինս սոյնիսկ զայրոյթի վայրեկանին հրացան է պարպում թալանչիներից մէկի վրայ և զինից վիրաւորում:

Վերջին կոհւների ընթացքում, բախտիարցիք ցոյց տունի իրենց գոյնը՝ Նրանք մատուցցին սովորակի ախորժակներ և եռանգ թալանի մէջ: Բախտիարցիների արած թալանները այսուղ հասան, որ թէլ էր մեացել բնդհարում լինեց քախուացների և Եփրեմ միջեւ:

թալանը դեռ բոլորը չեւ Ամենաողբալին այն է՝ որ բախ-
դիար զեկավարների սահմանադրական լինելը ոմանց համար
մեծ հարց է... Այսպէս օրինակ. կոիւների ժամանակ բախ-
դիարցիներ՝ Սարդար Զանգի և Սարգար Զաֆտարի բանաձ-
բնթացքը ցոյց է տալիս, որ նրանք աւելի շուտ միապետա-
կաններ են, որ նրանք իրաք Սալար Դովլէի նպաստողներ են
եղել և ոչ թէ նրա դէմ կաւողներ Ակրը յիշած սարդար-
ների և նոյնպէս բախդիարցի, սահմանադրութեան ջերմ
պաշտպաններ՝ Սարդար Բհատաւր և Սարդար Մօհմէտաշէմի
մէնն յարաբերութիւնները այնպէս էին լուրեւէ, որ միայն
Եփրեմի Ներկայութիւնն է զապել նրանց և արդեւը եղել
ընդհարումնն Սարդարների այս յարաբերութիւնների մէջ
մեծ դեր է խաղում, անշուշտ, և ան ձնաւ կ անը: Բախ-
դիարցոյ մէջ այդ լուրեած դրութիւնը ստիպել է Եփրեմին
միջներ ձեռք առնել՝ ընդհարումի առաջն առնելու: Կա-
դիմել է կառավարութեան, որ Սարդարներ՝ Զաֆտարին և
Զանգին ուղարկեն Քիրմանշահի կողմերը, իսկ Սարդար Բհա-
տաւրին և Սարդար Մօհմէտին սւղարկեն Ապրաւականի
կողմերը:

Թ Ա Խ Ս Ս Կ Ա Ն Ա Ր Ճ Ա Ւ Լ

Թաւրիզ, 1 մարտ

Մի քանի խօսք այդ արշաւանը և նրա յարուցած տագ-
նապի մասին:

Յարական կառավարութեան երկրորդ 48 ժամեայ ուլուի-
մատումը և տարածւած այն լուրը, որ իրը թէ պարսիկ կա-
ռավարութիւնը մերժել է ուլուիմատումի բոլոր կէտերը՝
Ելեքտրականացրել էր ամբողջ մժնուզորու Երկրում դործող
յեղափոխական տարրերը կառավարութեան այդ մերժումը
ընդունեցին մեջ յափշտակութեամբ, դրա մէջ տեսնելով
իրանի ուսնահարւած իրաւունքների և արժանապատութեան
վերականգնումը:

Այսպիսի վայրկեանում բաւական էր մի կոյժ միայն
հրդեհը բորբոքելու համար, մի փոքրիկ առիթ, որպէս զի
ներբուստ ամբարտած դժգոհութիւնը գուրու պութկար և
ուսւ կառավարութիւնը շուշացաւ այդ առիթը ներկայա-
ցնել՝ նոր զօրքեր լցնելով Պարսկաստանի ծովափնեայ քա-
շացներից Ռաշտ և Էնզէլի և այնտեղից առաջանալով Դաշ-
վին և սպառնալով մայրաքաղաքին:

Այդպիսի մի կարեւոր վայրկեանում, երբ երկրի անկախու-
թեանն է վտանգ սպառնում, կենտրոնական կառավարու-
թիւնը խիստ ողբախ պատկեր էր ներկարացնում: — Մինհա-
տութիւն գոյութիւն չուներ, ունդէնտր իր հրաժարականի
վրայ էր պնդում, Տէջիկը խօսելու, ընտադատելու և հրա-
ժարեցնելու մէջ միայն վարպետ, իսկ թագավորը՝ մանուկի
և ո՞վ պիտի գիմադրաւէ վերահաս վտանգը: Այսպէս կոշ-
ւած գիպումատիական մարմնի այս տիսուր պատկերին, եթէ
աւելացնելու լինինը և այն, որ երկրի փաքրամերը զինուրա-
կան ուժն էլ ըշշահի գէմ մզւած կոիւների ընթացքում
ջառաւած էր և ասպարեզի վրայ մնացել էր միայն Եփրեմը
իր փոքրամեր և հաւատարի: Ցանցը միայն Եփրեմը
ընկերներով, միւս կոզմից էլ յեղափոխական տարրերի բա-
ժանաւածն վիճակը, ապա պարզ կը լինի ձեզ համար մեր
երկրի մօտաւոր կացութիւնը այդ ծանր օրերին:

Ծրագրւած և յարատե պայքար պարսիկների կողմից ան-
հարին և յաւսու, որովհետեւ ոչ ոք ոչ ոքից տեղեակ չէր
և միւս ըաղաքներում մինչեւ իսկ յայտնի չեր թէ ինչ է

կատարւում կենտրոնում և ինչ դրութեան մէջ էր այն Մի
կերպ այս ցաւը գարմանելու համոր, Եփրեմը միւս զինուո-
րական զեկավարներով մի ժամեայ ուլուիմատում է ներ-
կ շացնում Մէջլիսին, որպէս զի սա անմիջապէս վերակազմէ
մինհարարական կազմը բիշ աւելի լայն իրաւունքներով, նշա-
նակէ նոր ընտրութիւն և մինչեւ նոր Մէջլիսի գումարումը,
ազգու միջոցներ մտած է ուստիմատումը հարթե-
լու և փոխառութեան խնդրին վերջ տալու:

Այս անակնկալ հարւածը կարծես մի ըիչ սթափեցնում է
Մէջլիսին և նոր սկսում է արւած պահանջներին բաւարա-
րութիւն տալ, ի միջի պլազ նա ընտրութ է նաև մի կո-
միսիա ուստական ուլուիմատումը բննելու և ներկայ գրա-
մեանը մի կերպ վերջ տալու:

Այս բոլորի հետ միաժամանակ սկսում է նաև կրիւ-
թաշուում թիւրբերը հայ մարտիկների հետ մի փոքրիկ
ընդգիւմագրութիւն են կազմակերպում առաների գէմ Ալի-
ժում է: ի հարկէ, և ուսւները ամենայն բարբարուութեամբ
խեղգում են այն:

Հենց այս օրը երեկոյեան (7-ի), Թաւրիզի սատիկանա-
տանը տեղի է առնենում մի փոքրիկ ընդհարում ուսւ զին-
ւորների և թիւրբերը հայ մարտիկների հետ մի փոքրիկ
ընդգիւմագրութիւն են կազմակերպում առաների գէմ Ալի-
ժում է սպանուում կարացնելու պատրիակով ուզել են ոստիկանա-
ները կարծել են, թէ այդ պատրիակով ուզում են շէնըը
գրաւել և չեն թոյլ տեել: Այդտեղ սպանուում են երկու
սատիկան և մի ուսւ տասնապեսու 8-ի առակուսեան ուսւ
զինւորներով շընապատւած էին սատիկանատանը և նրան
յօտիկ գունուղ կառավարչական հաստատութիւնները, որ-
պիսիկ են սահանգապետարան, Անջուման և այլն: Թիւրբերը
սատիկաններն ու կամաւորները աշխատում են զինու զօրու-
զօրութեամբ մաքրել փողոցները. դրանցից մի փոքրիկ խումբ
էլ ամրանալով բաղարի միջնաբերդում սկսում է այստեղից
ումբակութել ուսւաց բանակատեղին: Արտուները, որ երբէք
չէին սպասում այդպիսի յանդուզն դիմադրութեան զլուխ-
ները կորցնում են թիւրբերի ուժեղ գրոհից և ամրող օրը
հազիւ են կարգանուում այս ու այն կոզմերում իրենց ցրած
ուժերի խզմուկ մնացորդները հաւաքել Այդ օրը թիւրբերի
յաջողութիւնը բացարձակ էր և ուսւները ահազին կորուստ-
ներ ատրու յետ են մզւում ու կենտրոնանում իրենց բա-
նակատեղին, որը զանուում էր բազարիս հայրիս մի այգու մէջ:

Կոիւր նոյն յաջողութեամբ շարունակելուց մինչեւ ամսիս 13-ը, որից յետոյ թիւրբեր կաւողները ընկնեւած կենտրոնից
տեղացող յորդորների՝ այն է թողնել կոիւր, որ կառավա-
րութիւնը արդէն ընդունել է ուլուիմատումը իր ամրողու-
թեամբ, թաղնուում են միջնաբերդը և դրաւած գիրբերը աս-
տիճանաբար: Սրանց ընկնելուց ուսւները իրենց ուժեղ
զդալով՝ մի վայրագ կոտորած են սկսում բանակի շուրջը
գտնուող թաղերում, որի անցնելով ձեռքները ընկած թիւր-
բերն, առանց տարիբն ու սեռը նայելու: Արտունան նոր
զօրբերի խուժման լուրը կատարեալ լքում է առաջ բերում
կուսողների մէջ...

Տգէտ խուժանը ուսւական այդ խստաւթեանց միակ պատ-
ճառը համարելով Անջումանը և սահմանադրութիւնը՝ յար-
ձակուում է Անջումանի վրայ, ցրում այն, անդամներից
Շէյս Սալիմն ծեծի ենթավարկութեամբ և ապա դիմում բազարը
պաշարով Սամադ խանին (Առջայ Դովլէի), որ գու և աերու-
թիւն անէ իրենց սահմանադարչաւը վախից ապաստանում է
անդլիական հիւլպատուարանը:

14 ին արդեւ նոր եկած զօրքերը ծոտենում են բաղաքին, որը զրկւել էր գիմագրող ուժերից և սմբակութելով ներս է մտնում:

Ակուում և ուռւական զօրքի յառուկ վայրագութիւնների շարքը—ծած, ջարդ, կողոպուտ, բռնաբարութիւնների ԶԵ՝ որ քաղաքի բացարձակ տէրերն են, մարդիկ տէրութիւն են անում իրենց հասկացած ձեռի: Մինչև 17-ը այսպէս շարունակելուց յետոյ, 18-ից սկսում են ձերբակալութիւնները և 19-ին քաղաքի կենարօնում կախաղան են բարձրաւ ցնում 8 հազոր բաղաքի տկանուոր հոգևորականներից, Անջումանի անդամներից և Ժեղափոխական գործիչներից: Խնչպէս ուռւական են վկայում, բոլորն էլ հերոսաբար են կախւել դրանցից մէկը մի 18 ամեայ պատանի, երեք անգամ կեցյէ սահմանադրութիւնը գոսալուց յետոյ իր ձեռքով է անցկացնում իր վիզը, գահիններից միայն մի բան խնդրելով, որ թոյլ առաջ իր հետ կախւող եղորր իր կողքին կախելու 19-ից մինչև 23-ը կախաղան բարձրացրին 20 հօդու, նախապէս կողմանութեալ և զետոնի հաւասարեցնելով դրանց մները և ամբողջ բնոտանիքները թողնելով բաց երկնքի տակ:

Սամազ խանը, որ առաջին անգամ մերժել էր քաղաք գալ և միայն իր Փարաշներին էր ուղարկել, որնք ուռւական դրամակը թւերենին կապած գահճի պաշտօն էին վարում, ամսի 20-ին իր շքանմբավ, ուռւական գրծակ պարզած յառագար և քաղաքը նահանդապես ամթութիւն Ասյա ինչ չէր ժամշուկ նրան երկար ամփաների ընթացքում, այժմ յաջողւեց շնորհի ուռւական ուժի: Ասկայն ուռւները շարունակում են մնալ քաղաքի իսկական տէրերը և Ասմադ խանը ու իր Փարաշները լոկ գործիքներ են նրանց ձեռքում:

Թահ հրան, 3 մարտ

Գամկանի կռւում նահատակին են չորս մարտիներ և վիրտուուել է մէկը Կահատակի ածներն են՝ առաջկաստանցի Մկրտչը (մի շատ քաջ արայ) և պարսկաստանցիներ՝ Բառապուր, Մաթէսու և Խանյար: Նորն կռւում վիրտուուած են 8 պարսիկ մջահիս և մեռած մի տասնեւակի Երկրորդ կռւի մէջ հայերեց ոչ զոհ և ոչ վիրաւոր, պարսիկներից մի մ ջահիս, իմ բժիշկ օգնականը, որին ուղարկել էի բանակի հւատ:

Գամկանի կռւուակի կռւում վիրաւուածը մէր գրի օն է (Կրիգոր Ապօնանը), որ այսպէս առած հրամանաւարն էր կռւուավարան բանակի Գնդուիր կողել է քիթի վերի կողմից և աշքի տակով սկսաների միջից անցնելով, զորո է եկել ոչ ականջիր տակից Աէրքը շատ վտանգաւոր լինելով ինըս անձամբ ուղերդեցի Գամկան Կոիւն արդէն վերջացել էր. մի շարաթ խանմեցի և կարելի է բացարձակ ասել, որ մահից ազատւեց: Այժմ թեհրան է և բաւական լաւ է: Այդ սոսկալի կոիւը տեսել է 22 ժամ և ամբողջ ժամանակ քաղաքի միջնում զիրը խնսու անառկի էր: Դամդղու կռւից մի շաբաթ յետոյ, բանակը շարժւեց գէտի Հայրութ. ճանապարհին դարձեալ կուր բռնեց Գամկանից փախած և օտար թշնամիների հետ. 12 ժամ կռւելուց յետոյ, թշնամին անձնաւուը եղաւ: Այժմ բանակը Հայրութ է և ես և օրից նորէն պիտի գնամ այնտեղ, խնամելու բազմաթիւ վիրաւուալներին:

Թաւրիզ, 5 մարտ

Ես տեսել եմ ծանր ու վտանգաւոր ըեր ժողովրդի կեանքի ապօնավութեան տեսակեանից, բայց այսպիսին չէի անհածե Գեւրոս Մելիք Անգրէատեանի ձերբակալումը և


կախաղան հանչիլը այնպիսի սոսկումն առաջ բերեց, որ նկառագրելը գժւար է: Կարծես մարդիկ խելագարւել եին: Ծնողը որդու առջև փակում էր գուռ, վտանգւածները քար չունեին զլուխ գնելու: Ամ զրութիւնը առաջ բերելուն զլաւուարապէս և մեծապէս նպաստեց ուռւական հիւպատուարանում պատրաստւած պրօվոկատինը... Որոշած էին հայկական ջարդ սարբել, դա կախածից գուրս է... բաժանանցաւ... առ այժմ:

Սակայն, ով գիտէ, թէ ի՞նչ է կատարւում վարտպոյրի ետև, ով գիտէ, թէ ինչեր են նիւթուում այդ վարբիկ ուռւական դաշտուարապէս կարսկաստանի վերջին գէոյքերը բոլորն էլ ուռւական հիւպատուարանի սալքած գործերն են: Նրանք շարունակ միջադէպեր են հնարում՝ թոյլ շտուլու, որ ուռւ զօրքը քաշի Պարսկաստանից:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԵՐՑԵՆ

(ԸՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱԼԹԻԻ)

Նիցցայի շքեղ հանգստաբանում, *Château*-ի տիրարական և գեղանկար բարձունքների վրայ, գամբետտայի գերեզմանից ոչ հեռու, մի համեստ, բրօնզէ արձան է



Հերցեն

կանգնած — մի կարճահասակ ծերունի, ուռւական դիմոգերով, որ ձեռքերը կրծքին ծալած, տիսուր, վշտատանջ աշքերը գետնին է յառել և խորասուզել ծով մոքերի մեջ... Ասես այդ չքնազ երկնքի տակ համաշխարհային վիշտն է մարմնացնում ու որոճում. ասես այդ մշտածիթող դրախտի մէջ գեռ ողբում է իր սգաւոր հայրենիքի ողբը, դեռ տանջւում է նրա ազատութեան հսկայ և անեկների առեղջւածով..

Առեղծւած — արդարեւ: 100 տարի է անցել Հերցենի ծննդեան օրից, 60 տարի է անցել նրա քա-

բողջական գործունեութեան առաջին օրերից—և այսօր տակաւին նրա խօսքը պահպանում է իր տիտուր այժմ մէտիւնը, նրա ազատաշունչ բարողը պահպանում է իր եղերական թարմութիւնը, նրա բազմաթիւ յօդւածները, նրա սրտայոյզ կոչ ու յորդորները գեռ ունին, տարաբախտաբար, իրենց գոյութեան իրաւունքը... Այսօր դեռ հարկ է զանգահարել մեծ աբսորականի բարձրագոշանջ ոնչօկովը^Ա, զանգահարել գեռ երկար, անդուշ, յարտառ, որովհետեւ ոլավօնական վիթխարի Համբը գեռ քնած է լեթարգիական մրափոփ, որովհետեւ 60 տարւայ ազատագրական բարողը գեռ չի խռովիլ նրա մահացունչ, ստրկական անդորրութիւնը և բանութեան խարազանը գեռ գործում է նրա անզգայ, համբերատար մէջքի վրայ՝ այն ժամանակի, երբ ամբողջ մարդկութիւնը անդամ ասիսկան ճահիճաշխարհը, համակւել է սահմանադրական ու հանրապետական վերելպայրութիւների, յեղափոխութիւնների տեսնդով...

Այսժմ ուղեկցեմ Ձեզ դէպի մեծ ուսւ յեղափոխականը^Ա — շշնջում է ինձ ֆրանսիացի գերեզմանապահը, Գամբետատարի շիրմի առջև ինձ հետ երկար սպասելուց յետոր

Դեմ յեղափոխական^Ա — այդպէս էլ անւանում են Հերցենին, թէ իր հայրենիք-Ռուսաստանում, թէ Եւրոպայում, Բառը, սակայն, շատ էլ տեղին չէ, եթէ ըմբռնենք այն իր դասական իմաստով Հերցեն չեղաւ յեղափոխական մի Ռուսօյի, մի Գանտօնի, մի Առաձինի, մի Կօչուտի եղանակով Որապետական կարգերի հանդէպ նա ըը բռնեց այն ժխտական և տրմատական գիրքն ու ուղղութիւնը, որ յատուկ է բոլոր Ճշմարիտ յեղափոխականներին ։ Այս մեաց իր խօսքով ու գործով նոյնիսկ իր հայրենակից ողէկարբիստներից^Ա, մի Պէտէլից, մի Որիէկվից, որոնք 1825-ին, Ֆրանսիական Յեղափոխութեան շունչով բոցավառւած՝ փորձում էին զինուրական ապստամբութեամբ վայր գլորել անհծակուռ միապետութիւնը և հիմնել նրա փլատակների վրայ ժողովրդավար հանրապետութիւն... Հերցեն և յետագայ ուսւ կարող իդէօլոգներն ու գործիչները ապացուցին, տարաբախտաբար, որ Պէտէլի այդ խանդակառ ու հարմատական^Ա հոգերանութիւնը մի հազարդէպի, վաղանցուկ և գրեթէ պատահական երկոյթ էր Ռուսաստանի լայնածաւալ յեղափոխական անպատի մէջ Ատելութիւնը, անհաշտ ու թունուտ ատելութիւնը դէպի միապետն ու միապետական կարգերը և դրա հետ շաղկապւած ըմբռութեան, ապստամբութեան կրակը այն հեռաւոր ու յիշատակելի օրերից ի վեր, երբէք այլ ևս ծայր շտեց՝ ոչ բանակի ու ժողովրդի մէջ ոչ էլ գործող, բարողող մատորականութեան մէջ, հին, կլասիկ յեղափոխութեան այդ հըբեկն հոգերանութիւնը^Ա պաշարեց միայն անհամերին և ցանցառ ու հազարդիւս խմբումներին, — նա դուրս մեաց զան գւածներից...

Այդ մոլեգին ատելութիւնը և այդ հըբեկն խառնւածքը միանգամայն օտար մեաց և Հերցենին, ուստական մեծագոյն, տաղանդաւոր հրապարակագրին և, այս յեղափոխական^Ա բարողիչ եղաւ զուտ ուստական եղանակով նա հարազատ նմուշն եղաւ այն ինքնատիպ ու տարապայման հոգերանութեան, այն երազուն և լաւատես իդէալիզմի ու ուսոպիզմի (ցնորականութեան), այն մեղի, հաշտարար, անդարմանելիօրէն կրաւորապաշտ քաղաքականութեան, որ մատնել է գրեթէ միշտ և մատնում է այսօր ևս այդ զարմանալի ժողովուրդը յանձին իր առաջադէմ, ուրմատական^Ա գործիչների, տաղանդաւոր գրողների ու բարողիչների և հարիւր միինաւոր զանգւածների Հերցեն հանդէս եկաւ խորապէս համակաւծ այդ ցնորական գաղափարայնութեամբ, այդ լաւատես և կրաւորապաշտ իդէալիզմով ու ուսոպիզմով նա ըմբռնեց յեղափոխութիւնը^Ա լոկ խաղաղ վերանորոգման, բարոյական ներգործութեան, լոկ խօսքի ու յորդորի ճանապարհով... ոի վերուստագիւելիք մանանայի, բոնապետական ովեհանձն պարգևի^Ա կերպարանքով. Եւ նա ուղղեց իր տենդուտ յորդորները... Ռուսաստանի մի ապետ եւ ուներին նա ուղղեց նոյն յորդորները անգամ ազնւակ աւ ու ութեան — այն բատմելիի, ժողովրդակուլ դասակարգին, որ եղել է միշտ բոնապետութեան ամենաամուր պատւանդանը և որի նմանը դժւար է գտնել համաշխարհային պատմութեան մէջ: Կոչերով ու յորդորներով, խօսքով ու խրատով՝ Հերցեն ուղղում էր համոզ բռնապետական կարգերի այդ տիպար ներկայացուցիչներին՝ որ յօժարակամ թօղնեն իրենց հարստահարութեան ու կեղեքման խարազանը, երշանկացնեն ժողովուրդը, ազատան բազմամիին գիւղացիութիւնը ճորտութեան պատուհանից հետո...

Եւ երբ Ղրիմի աղէտաբեր պատերազմից յետոյ ճորտութեան ամօթալի սիստեմը վերացաւ կայսերական մի Տրովարտակով (1861թ.), իրեւ մի հաստատութիւն, որ հիմնական պատճառներից մէկն էր կրած պարտութեան և որի գոյութիւնը մշտնջենաւոր արգելք էր երկրի արդիւնաբերութեան լզարգացման, տնտեսական, դրամական բարգաւաճման և զինուրական վերակազմութեան համար, գտնեցնեցին միամիտ մարդիկ, որ վերագրեցին այդ խօսքը ու Փօրմը Հերցենի քարոզներին, թագաւորի վրայ ունեցած նրա խօսքի ազդեցութեան Եւ Լեյ Տօլստօյ — որ գարձեալ մի նմուշ է նոյն ուստական ինքնատիպ յեղափոխականութեան^Ա — հիացմունքով ու ափսոսանքով էր յիշում Հերցենին. Ավասու, ասում էր, որ երկար չ'ապրեց. եթէ ապրէր, Ռուսաստանի զարգացման ընթացքը այլ ուղղութիւն էր կըստանար^Ա...

Եւ ոյսօր Հերցենի ծննդեան 100-ամեակին, կադէտ Բօդիչեցի, իր բազմաթիւ համախօների հետ կրկնում է Տօլստօրի այդ խօսքը, ինքն ևս հաւատալով, որ եթէ

Հերցեն քիչ աւելի ապրէր, Ռուսաստանը այլ ընթացք կը բռնէր, այլ կերպարանք կունենար ներկայումս... Այսինքն չեր առաջ գայ ուսարոդնայա վօլիա՞-ի և յաջորդների բռնի յեղափոխութեան քաղաքական հրապարակի վրայ ռումբարձակ ժելեարաօվներն ու Ազօնօվները, չեին լինի անգամ այն թոյլ ու դժգոյն զանգւածային բռնկումները, ապստամբական այն հազարդէալ թոյիչք-ները, որոնք ոմիայն գրգռում են իշխողներին և ամ-բապնդում հալածանքի ռեժիմը... Զեր լինի այդ բո-լորը... որովհետեւ Հերցեն սոսկ իր գրչով ու խօսքով կը կարողանար ազգել բռնապետութեան վրայ, կը կարո-ղանար պատրաստել ուսւական ընդհանրութիւնը խաղաղ վերիվայրումի ու նւաճումների համար...

Ահա դարձեալ մի պերճախօս ապացոյց նոյն ցեղային, բացասական, անդարբանելի հօգեբանութեան... Եւ գուցե սխալ չէր լինի բացականչել ոքերեցէ՛ք ռուս ազատականին, ամենակարմիր յեղափօխականին —և գուք կը գտնէր իւրաքանչիւրի մէջ մի խոշոր գոզ առլաւ ոյ յա ա ն ու թիւն։ Այդ գժբախօտ գիծը կարմիր ժապաւենով անցնում է ամբողջ ռուս յեղափօխութեան պատմութեան միջից։

Այդ բնորոշ ցեղային տօլսայականութեան մի այլ
գիծն է — հ ա մ բ ե ր ո զ ու թ ի ւ ն ը գ է պ ի ժ ո ղ ո վ ր դ ի
թշնամիները՝ «Դրօշակ» ի նախորդ տարւայ էջերում
պատմել ենք արդէն մի բանի դրւագներ Առւաստանի
վերջին շարժումներից, երբ տագնապի ամենավճռական
վայրկեաններին ուսւա յեղափոխականները, սօցիալիստ-
ները իրենց կողմն ունենալով ժամանակաւոր յաղթա-
նակը, մի անըմբունելի ովեհ անձնութեամբ «խայել են
ծուշակն ընկած թշնամուն և դրա չնորհիւ քիչ յետոյ
վիժեցը յեղափոխութեան աջողութիւնը... մի հան-
գամանը, որ այսօր գառնացած սրտով խստովանում են
նոյնիսկ իրենք ուսւ սօցիալիստները

Համբերողութեան ու „վեհանձնութեան“ գիծը նոյն
պէս մասամբ գալիս է Հերցենից։ Վեհանձնութեան
թշնամու հանդեպ, անգամ արիւնուուշտ, երգեւեալ թըշ-
նամու... Հերցեն չէր համակրում Փրանսիական Յեղա-
փոխութեան հերոսներին, տերըօրիստաներին, որոնք չէին
կամեցել բարոյապէս ազգել „համոզել“ բռնաւորներին։
Բռնի յեղաշրջումներ չէր սիրում Հերցեն։ Կա յորդո-
րում էր և իր լեհ բարեկամներին, յեղափոխականնե-
րին—1863 թւականի նախօրեակին—չդիմել ապատամ-
բութեան Կա գերադասում էր դիմումներ անել ցարին
ու ազնւականութեան 1855 թ. մարտ 10-ին նա գրում
է զգացւած, սրտառուչ նամակ Ալէքսանդր |[~]ին, ուր
նւաստօրէն մատնացոյց է լինում գիւղացիների ազատ-
ման անհրաժեշտութեան վրայ և յայտարարում է, որ
եթէ ցարը յանձն առնէ իրագործելու այդ ու-
ֆօրմը և դրա համար ցանկանայ, որ Հերցենը լրէ
ժամանակաւորապէս, գաղաքարեցնէ իր ապատառական

քարոզչութիւնը, — նա պատրաստէ համակերպել և լուել *): Նամակն, ի հարկէ, պատասխանի չ'արժանացաւ:

Սի ուրիշ զիծ ևս գտնում ենք ուստի շարժման ուսհիւրայի մէջ, մի զիծ, որ դարձեալ այդ շարժման հարազատ սեփականութիւնն է, նրա ուրոյն, բացասաւ-կան յատկանիշը:

¶- ա բ ա զ ա բ ա կ ա ն ա ն տ ա ր բ ե ր ու թ ի ւ ն է, աւելի ձիշո՝ անտարբերութիւնը՝ պետական կազմի ձևերի նկատմամբ (*apolitisme*) — մի հանգամանք, որ այսօր ցոլում է նաև ռուսական խոշոր ու գործօն յեղափոխական կուսակցութիւնների դաւանանքի և մանաւանդ տակտիկի մէջ:

Կառարեալ անտարեերութիւն Հերցենի մէջ՝ դէպի
կառավարական սիստեմները.. Հանրապետութիւնը նրա
աշքում աւելի հրապուրիչ չէ, բան միապետութիւնը
Փրանսիայի նւաճած հանրապետական իրաւակարգը նրա
կարծիքով բարձր չէ նախնի ֆեոդալ-միապետականից և
նոյնիսկ շեշտում է, որ այդ հանրապետութիւնը նւա-
ճելու համար չ'արժէր իսկ թափել ոչ միայն արիւն,
այլ նոյնիսկ մելան»:

Արովհնեաւ. գա սբ ուր ժուական հանրապետութիւն է¹: իւ Հերցեն մի գերագոյն արհամարհանք էր տածում գեղի արևմտեան այդ բուրժուական կեանքի մեջշանութիւնը², գուհիկութիւնը. և նա խանդավագառւած իր հայրենի ժողովրդի բազմահռչակ առաքինութիւններով³, երազում էր, թէ այդ ժողովուրդը իր բնածին կօմմունիստական սովորութիւններով ու բարքերով, իր ոմիք⁴ի, արտելի⁵, համայնական կազմակերպութիւնների սիստեմով կոչւած է մի օր ուսուցանելու⁶, առաջնորդելու մեջշանական, բուրժուական իւրօպային: Դա ուսւ նախօդնիկների⁷, ժողովրդական ծանօթ հաւատագն է, որ քանի գնում խորտակւում է իրականութեան արհամարհու և արօրող հարւածների տակ:

Հերցեն սիրեցեալ նահապետն է այդ չնաշխարհիկ
նարօդնիկների, որոնք աշագին դպրոց տաեղծեցին Ուռ-
սաստանի մէջ և որոնք մշակւած են նոյն հերցենեան
ապաբազաբական (ապօլիտիկ) հրահանգներով, նոյն
դժբախտ քաղաքական անտարբերութեամբ, որի չնորհիւ
այսօր տակաւին զուրկ ենք մնում հսկայած աւալ Ուռ-
սաստանի մէջ սոհմանադրական իրաւակարգի ամենա-
տարբական երաշխիքներից...

Միջին ոռւս յեղափոխականը, սօցիալիստը, սօցիալ-
դեմոկրատը արիւն ու մարմին է դարձրել իր մէջ այդ
աղետաբեր տրամադրութիւնը և այդ յաւակնուտ ար-
համարհանքը գեպի արևմտեան սահմանադրութիւնն
ները, գեպի արևմտեան բուրժուականութիւնն ու „մշ-
չանութիւնը“... և այդ այն ժամանակ՝ երբ սեփական

^{*)} Բառացի թարգմանում ենք բէջից, № 83.

Հայրենիքը իր բազմամիջինն ժողովրդով լողում է աշխարհի ամենախեղուուկ ճահճի մէջ, անկարող լինելով մի առնական ժեստ անելու և գուրս նետւելու գեպի տպատ ու թարմ մթնոլորտ. այդ այն ժամանակ՝ երբ ժողովրդի ազատութեան համար գործելու կոչւած սօցիալիստ կուսակցութիւնները բռնւել են ամենաամութայի իրարամբաստանութեան տենդով, երբ անգամ Աիրիրի 400 բանուրական դիակների հանդեպ նրանք շարունակում են սնուցանել իրենց ներքին երկպառակութիւնը, շարունակում են դրա հետ միասին իդեոլոգիական ամուլ ճոռուաբանութիւնները՝ մի քայլայւած, աւելի ու փառակակ եղած բանակի մէջ և ի հնչ զարմանք՝ որ մի Աիրկնեխտ վրդովմունքի գագաթնակետին քացականչում է պրուսսական լանտագում. „Ռուսաստանը Եւրոպայի ամենաբարբարոս երկիրն է“, ի հնչ զարմանք՝ որ մի ուրիշը նոյն ցասումով համակւած, յայտարարում է, թէ ԱՌուսաստանը Եւրոպայի մէջ է միմիսյն իր աշխարհական դիրքով⁴... Զափազանցութիւն կայ, անշուշտ, այդ ցասկոտ յայտարարութիւնների մէջ, բայց կայ և որոշ ճշմարտութիւն, որ դրախտաբար շատ քիչ է ազդում ԱՌուսաստանի բախտը որոշող կուսակցութիւնների մասնութեան ու գործելաքերպի վրայ...

Այս անցեալ դարու 50-ական թւականներին արշակուր էին տալիս Նորաբողբոջ ազտագրական շարժման մեջ մեր յիշատակած այդ մի շարք ձևասորդ, բացասական գծերը — բաղաբական անտարբերութիւն, ուտօպիզմ, կրաւորականութիւն, բուն յեղափոխական քարոզի բացակարութիւն, ուրուրժուական կարգերի¹ ու ոմանչանութեան² արհամարհում և սեփական ուժերի անտեղի չափազանցում — որ տակաւին այսօր ևս գերակշռող են ուստական կուսակցութիւնների մեջ Աւակայն Հերցեն լոկ այդ ձախորդ գծերով չե, որ ներկայանում է բննադատող աշքերի առջև ևս իրաւամբ մեծարւում ու փառաբանում է իր երախտագետ յետնորդների կողմից, իրեւ ուռւսական ազատ խօսքի հիմնադիմութիւնը և իրեւ ուստական բողոքի ամենամեծ, ամենահուժկու շեփորող-հրապարակագիրը ևս վօլոտէրեան գրիչ ունի, սուր, կծու, ծաղրող և խարանող իր մասնաւոր կեանքը գեռ շատ վաղ մշակել էր իր մեջ բողոքողի ու խարանողի այդ գծերը: Դեռ մատաղ հասակի մեջ իջաւ նրա վրայ բռնապետութեան հարւածը, նու աքսորւեց դեպի Սիբիրի սահմանները վերադարձին՝ արդեն գիտակից ըմբոստ է, նրան սկսում է խեցդել հայրենի իրականութիւնը և նու նետում է ինքզինը Եւրոպա: Գալիս է Պարիզ 40-ական թւականներին, ծանօթանում է Պրուդոնի ու այլ հուշակաւոր յեղափոխականների հետ, նետում է խանդավառութեամբ պարիզեան փոթորկու կեանքի այլիները, աշխատակ-

ցում է սօցիալիստական թերթերին, Յունիսեան ջարդերից և միապետութեան նոր յաղթանակից յետոյ *), Հերցեն դուրս է ըշւում Պարիզից, դառն հիամթափութեան մէջ, փշրւած յոյսերով, գնում է գեպի մի աւելի ազատ կայան, գեպի լոնդոն: Այստեղ հիմնում է տպարան և լոյս է ընծայում 1857-ից—Օդարեօվի, աւելի ուշ, Քակունինի աշխատակցութեամբ—իր հռչակաւոր „Կօլօկոլլ“ (Զանդ): Ծանօթանում է այդտեղ, Լօնդոնում, աշխարհահռչակ յեղափոխական աքսորեալների հետ, — Մաձձինիի, Գարիբալդիի, լօշուտի և ուրիշների և հագին ազմուկ յարուցեց Ռուսաստանում ազատ խօսքի այդ առաջին ազդարարը, ահագին զարկ տւեց նա — Հերցենի թեատրու ու կրակու գրչի շնորհիւ — ստքերի սթափման գործին, մի յայտնի իրարանցում ձերլով նոյնիսկ կառավարական շրջանների մէջ: „Զանդ“ի հրատարակութեան 1857—1862 ժամանակամիջոցը պատմական, անմոռանողի մի շրջան է ուսւ ազատութեան տարեգրութեան մէջ. մեծ աքսորեականը, սօցիալիստ Հերցեն, նոր խօսք էր հնչեցնում իր ստրկացած հայրենակիցների ականջներին, — ազատութեան ու վերանորոգութեան խօսքը՝ ‘Սա գնում էր գեպի Ռուսաստանի բոլոր անկիւնները, հազարաւոր արձագանքներով շրջան էր անում կրթւած, լուսամիտ հասարակութեան մէջ, գործում էր իր ազգեցութիւնը նաև իշխող տար-

Այդտեղ է Հերցենի մեծ, պատմական նշանակութիւնը, իբրև ազատութեան մեծատաղանդ ու աքեալի ու հրապարակախօսութիւնը, սակայն, չգոհացաւ լոկ լրագրութիւններով, տէր ահագին զարգացման, էրու գիցիայի, ծանօթ համաշխարհային գիտական-փիլիսոփայական գրականութեան՝ նա շօշափում էր իր բազմաթիւ գրւածքների մէջ նաև ընդհանուր, վերացական բնոյթ ունեցող, հասարակագիտական խնդիրներ և այդտեղ, այդ ընդհանուր մարզանըների աշխարհում նա արծարծում էր ուստական սուբ'եկտիվիզմի ծանօթ թեզիսները. նա ինքը, կարելի է ասել, հիմք էր դնում հոգակաւոր սուբ'եկտիվ դպրոցին, որի հիմնական խորհուրդն ու նպատակն է կռիւ յանուն անհատական առականութեան, կռիւ յանուն մարդանհատի լիակատար ազատութեան՝ ընդդէմ այն բոլոր խոչընդուռների ու կապանքների, որ դնում են պետութիւնը, հասարակութիւնը, և սխալ, մոլար, ծայրայեղօրէն օբ'եկտիվիստ վարդապետութիւնները, որոնք առանձնապէս բարգաւաճում էին այն ժամանակ և որոնք հակած էին զօհաբերելու անհատին յօդութ ու յանուն հաւաքականութեան, հասարակութեան, պետութեան...

* 1848-ին Նւաճւած Քրանիսկան երկրորդ հանրապետութիւնը 1851-ին պետական հարւածով փոխարինւեց և ապօլէօն III-ի միապետութեամբ:

Անհատի և հասարակութեան փոխայարաբերութիւնը, իրեւ մէկը և թերեւ դժւարագոյնը ժամոնակակից ընկերաբանութեան՝ ամբողջ կեանքի ընթացքում զբաղեցրէն սօցիալիստ Հեղցենին — սօցիալիստ՝ ոչ իր գօրարինով, վարդապետութեամբ, այլ միայն կծու, անողոք իր բննազատութեամբ, ուղղած ընդգէմ բորժուազական կարգերի։ Անհատի երջանկութիւնը պէտք է լինի առանցքը և վերջնական նպատակը հասարակական էլույցիայի։ անհատը — այդ կոնկրետ, շօշափելի էռթիւնը՝ իր այլազան պահանջներով ու տենչանըներով պէտք է ստանայ, պէտք է նւաճէ հանրաւորութիւն՝ լիակատար ու բազմակողմանի կերպով զարգացնելու իր ժուառը, հոգեկան, ֆիզիկական կարողութիւնները... Ահա այն մեծ թեզիսը, որ յետագայում աւելի հանգամանօրէն պիտի արծարծեն Լովքով, Միխայլօվսկի և ուռուական սուբեկտովիզմի այլ ականաւոր ներկայացուցիչները Դա Շահիրներեան կոպիտ անհատապաշտութիւնը չէր, դա անհառի սանձարձակ, էգօխստական պաշտամունքը չէր, որ մտածում է սոսկ եսի հաճոյամոլ ախորժակների և անզուսպ վայելքների մասին, արհամարհելով ամեն իդէալ և ամեն մի հեղինակութիւն, ունահարելով ուրիշ մարդկանց նոյնքան սուրբ իրաւունքները, ծաղրելով ու նշաւակելով նհասարակութիւնն, ուրարոյականութիւնն, ոգազափարն, պարտականութիւնն և այլ նման նկուռքելը...

Ըսդհակառակը, Հերցեն, Լովքով, Միխայլօվսկի, Զերնօվ, ամբողջ ուռուական սուբեկտովիստ դպրոցը չափազանց բարձր է գնում ի դէալ և լուս և նրանց հետ կապւած պարտաւորութիւնները, բարոզում է անդադար զրկոնք ու զոհողութիւն, բարոզում է գրեթէ միջնադարեան նահատակութիւն յանուն իդէալի, ժողովրդի, հասարակութեան... Նա չի զատում անհատը հասարակութիւնից, չի տեսնում անտիթեզ, թշնամութիւն, հակօրինութիւն այդ երկու կատէգօրիաների միջև, չի հակադրում էգօիզմը ալտրուիզմին, եսը հաւաքականութեան, ոյլ միացնում, ձուլում է նրանց կեանքի միւնոյն ամբողջական յորձանքի մէջ, իրեւ այդ կեանքի երկու տարբեր, հարազատ և հիմնական տարբերքներ — փոխադարձաբար լրացնող — երկուսն էլ հաւաքարապէս ծանրակշիռ և անհրաժեշտ... եթէ, հարկաւ, ըմբռնենք էգօիզմը իր ազնագոյն իմաստով իրբեւ շեշտումն մարդկային անհատականութեան իրաւունքների ու պահանջների և ոչ իրեւ զատագովումն հակաընկերային, անասնական կրքերի ու թոփչքների...

* *

Մի հարուստ, չքեղ անհատականութիւն, մի սուր ու մարակող գրիչ, մի խորապէս ինքնատիպ ոճ, որ թերեւ մեծագոյնն է հեղինակի բնատուր օժիաներից, որ առաջարկում է ձեր առջև գեղարւեստագետ հրապարակագրի այնքան փայլուն և հրապուրիչ էջեր, տարա-

ծելով ամենուրեք խանդավառումն ու ելեքտրացում, վերջապէս, մի ազնիւ, հայրենաշունչ մարտնչող, որ թեպէտե չըմբռնեց սկզբից շիտակ ու բաղձալի ճանապարհը, թէպէտ և չձգտեց մարզել իր հայրենի երիտասարդութիւնը բուն, դասական յեղափոխութեան միակ փրկարար Տնոցի մէջ, այնուամենայնիւ մեծ, ահազին, արդասաւոր գործ կատարեց այն մուայլ ժամանակներում — իսկ մեծ մարդկանց պէտք է դատել իրենց ապրած ժամանակի տեսակէտից — առաջ բերեց մի շրմում մտքերի ու հոգիների մէջ, որ գնաց այնուհետև յարաճուն կոհակներով, մերթ ընդ մերթ դաւաճանեց իր սկզբնական խաղաղասէր պատգամներին, մերթ ընդ մերթ որոտաց ուումբի, ուժանակի սասանեցուցիչ բաժիւններով, յշացաւ դժոխային և խօլական դաւադրութիւններ, շանթահարեց, գետին փոեց արբաներ ու մինհատրներ, սարսափեցրեց աշխարհը մի չնչին փոքրամանութեան հերոսական թոփչքներով, իդէալիզմի ու անձնութացութեան շնաշխարհիկ պոոթեկումներով, ճառակեց և ճարտկեց անհաւասար բաղնումների մէջ, թուլացաւ, ուժասպառւեց և ամբողջ տասնեակ տարիներով չքացաւ հրապարակից, ապա վերստին բեմ նետւեց մի աղետաւոր պատերազմից նպաստաւորւած, նւաճեց ազատութեան մի բանի փշտանք և նորէն խորտակւեց ու խորտառվեց ժամանակաւոր մոռացութեան ալիքների առկ, ուսկից նորէն դուրս կը լողայ վաղ թէ ուշ, յաւոտ կեանքի հրամայական պահանջների հանդէպ, աւելի կուռ, ներդաշնակ, կազմակերպւած, աւելի հզօր և յաղթական...

Մ. Պ.

Բ Ա Դ Ի Ռ Ե Ա Կ Ա Ա Ր Ե Ա Ւ Ը

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՃԱՒԸ
ԵՒ

ԹԻՒՐՔԻՈՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Վերջ)

V

(ԱՆԴՐԱՌԱՐՉՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԻ ԸՆԴԱՆՈՒԻՐ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ)

"Had it been possible to continue the Bagdad Railway to Adana sooner, that populous town would most likely not become the scene of horrible massacres and would not now lie in ruins".

A. v. Gwinner
(The Nineteenth Century, June 1909).

"Եթէ հնար լինէր աւելի վաղ շարունակել բաղդադի երկաթուղին դէպի Ադանա, այդ բազմամարդ բաղմար չէր դառնայ սարսափելի լրացրերի թատր և այսօր ընկած չէր լինի աւերակների մէջ..."

Այսպէս է յայտարարում Լօնգոնեան հանդէսի մէջ
Արտուր Փօն Գ. Գ. Խ ն ն ե ր, Deutsche Bank ի հզօր,
ողբեկիչ վարիչը, որ վերջերս Թերլինում ներկայու-
թեամբ Կայզերի և բոլոր դիւանագիտական աստղերի՝
կարդաց գաստանոսութիւն Թաղդադեան գծի մասին,
ու արզեց հանգամանօրէն նրա ընդհանուր և մասնաւոր
արժէքները:

Գուցե չի սխալում Թօն Գվիններ Արդարեւ, եթէ
կամենաք վեր հանել երկաթուղային հսկայ ձեռնարկի
գալց հաւանական բարիքները, պիտի ասենք ամենից
առաջ որ նա էակես խաղարարար մի գործօն է Թիւրքիոյ
ու առաջապես և հակամարտ զեղերի շրջավայրում:

թաղ նա լինի ստրատեժիկ, ու ազյագիտական մի ուղի
քող խաղաղութեան ձիթենի մէջ թագնւած լինի
ապաշար իոլ բազմութեան ու աշխարհակալութեան
ապահովագործ... Յամենայն գեպս, գա հեռաւոր, անսա-
խատենելի ապագան է Խոկ առ այժմ՝ այդ վիթխարի
ձեռնարկը իր անհաջիւ տնտեսական ու կուլտուրական
հաւաքաններով, անտարակոյս, պիտի նպաստէ նախ և
ոռաջ խաղաղ ու հաշտ դրացիութեան ազգերի միջն,
ոչիտի մեջմէ գոյութեան կուի թիրու ու գաճան, անսա-
խական ձևերը, պիտի ուղղէ միջցեղային հակամարտու-
թիւնը գեպի աւելի մարդավայել, բաղաբակիրթ հան-
գըռաւներ, պիտի փոխէ հետզետէ թափառական բըր-
գերի, չերքէզների, բեղունների բնազդները, պիտի
աֆուկէ աստիճանաբար ընտելացնել այդ սոսկալի խա-
ժամութը՝ նստակեաց, կուլտուրական մարզանեների,
պիտի միացնէ նոյն ընդհանուր, արդիւնաւոր Աշխատանքի
մէջ երեկւայ և այժմեան մօլեգին հակունեներին և
անդամ ամենաբիրտ, մարդակեր նօմադներին, որոնք
ի վերջո կըմբռնեն, որ այդ տղնիւ, ստեղծագործ աշխա-
տանքը աւելի լաւ է, աւելի բանական, նպատակայարմար,
քան թէ անվերջ, յաւիտենական իրարաջնջումը:

Ըստ եղանակի, որ գիտէ հրահրել, կենդանացնել նստակեացին և որ տալիս է հնարաւորութիւն՝ ամեն փայրի եան կենդանացնելու ռատիկան զօրքերը—մի անգիմադրելի զէնը է նօմադի, թափառականի դէմ ”):

Ճիշտ է ասում Անկար Թերար... Ընդունելով, ի հարկե, որ այդ ոստիկան զօրբը կը լինի միշտ համապատասխան իր կոչման, կ'երթայ միշտ ճնշելու... ապօրինութիւնն ու անարդարութիւնը:

Ճիշտ է և բերաբի չետեեալ դիտողութիւնը.

Առևտուրը, որ ուղեկցում է շոգեկառքին, կրինապատկում
է առեն բանի գինը և տալիս է աշխատանքին մի այնպիսի
փարձատրութիւն, որպիսին երբէք չեն կարող տալ թշալանը
և խաչնարած կենաքը, առանց մեծ ռիսկի ու վտանգների...
Մի քանի քրդական հսկեր, որ կառավարութիւնը բնակեցրել
է լեռներում, Եփատի և Կիլիկիոյ միջև՝ դարձել են այսօր
շատ լաւ ֆեւարի հն եր

Ելեբանդը նւիրութեան մէջ ճանապարհոր-

դան և կացութեան իրազեկ նշանաւոր քրանսիացիներից
մէկը, հետեւալն է գրում բաղդադեան երկաթուղու-
առթիւ.

Ամենամեծ ձեռնարկը, որ ողնայուրն է վերանորոգւող թիւրբիայի և գալոց գերմանական ազգեցւթեան շրջանի, — զա բաղդագի երկաթուղին է... Այդ գծի բարերար ներգործութիւնը այժմ իսկ արդէն երկան է զալիս անժխտելի կերպավի թէեւ գործառնութեան տնօրէնը, պ. Հիւզնէն գերմանացի չէ, այլ շվեյցարացի, ակներեւ և սակայն, որ ձեռնարկի կազմակերպութիւնը մասնում է զատ գերմանական ոգի: Թիւրբ կառավարութիւնն արդէն բնակ իրաւունք շահնի խառնւելու երկաթուղային գծի գործ երի մէջ ևս մէկ իրաւունք միայն ունի — պահպանել կա, արան-ներում ժանգարմներ: Ծառայողները և պաշտօնեաները աշխատում են բարոյին գերմանական ձեռսվ, թէեւ նրանց ահագին մեծամասնութիւնը բաղկացած է տեղացիներից — այլ և այլ ցեղերի ու կրօնների պատկանող — Եթիւրբ, յոյն, հայ և ալին, որոնք կարծ են բոլորովին մօսացել են իրենց անհամաձյնութիւններն ու գժառութիւննելը՝ այն զբեթէ զինուրական կարգապահութեան հանգելով, որ պատաստել են գերմանացիք և որ նրանք հրապուրիչ են գործերի՝ կանոնաւորապէս վճարուղ լաւ ուռութիւններով: Մարդիկ և հայագետները մարտուր են. ծառայողների զիւրբը վայելու զպացարիւն ու համարձակ. ճշտապահութիւնը՝ կատարեալ Մարսաւորներն իսկ զինուրական ձեռսվ ողջունում են գնացըները...

Ընկերութիւնը հիմնելէ ծառայողների համար մի յատակ թօշակարգ՝, որ մասամբ նա ինըն է սուցանում առատաձեռն և էքսերով։ Արդէ միջոցներ ևս ի գործ են զնում՝ պահելու համար ծառայողներին իրենց պաշտոնում։ Այդպէս օրինակ, եթէ որևէ ծառայողի պաշտօնեայի աղջիկ տմունանում է մի այլ ծառայողի հետ, նա ստանում է բաւական շաղ մի օժիան... Այդ միջոցը նպատակ ունի զրցել ծառայողներին՝ ամսանանալու հենց տեղացի կանաց հետ, որոնք սովոր են կայարանական կեանքին, որոնց չի տաղուիցում այդ կզզիացած վիճակը, հեռու մեծ քաղաքներից։ Կայարանների մատ ձրիաբար դրւում է ծառայողների արամադրութեան տակ մի որոշ հոգաբաժին, բանջարեցէն ու ծաղիկ մշակելու համար... Ընկերութիւնը բաշխում է նոյնիւկ ծաղիկներ ու սերմեր և անգամ տալիս է ոիրոզներն մարտիկի թօսուններ, օրանչելի բանարքակիների *)...

Ուժանք կը հարցնեն—շարունակում է Ռուլար—ինչո՞վ
արդեօք կարող են սգտակար լինել գերմանական Welt-
politis-ին այդ ծաղիկները, բանարեակները, այդ պար-
տէզներն ու զինւորական ողջոյնները Բայց Նրանք, որոնք
պատել են համաշխարհային բազաբականութեան մեծ
ճամբաների վրայ, լինի Եգիպտոս կամ փոքր Ասիա,
Տուրքիեստան կամ Միջին, — Նրանք գիտեն թէ ինչ
աներևակայելի բարոյական ազգեցութիւն է գործում
ազգաբնակութիւնների վրայ՝ հակա ապատ կերը
այդ փոքրիկ, յստակ գրամաների, ուր կայ կարգ ու
բարեկեցութիւն և այն մեղք, անփոյթ, ազտոտ ու թշւառ
գոյութեան, որի մէջ խորապուղւած են Նրանք

Այդ երկրներում, որ իրենց վաղեմի բարերախտ վիճակից իջնելով՝ ընկել են մի անկարող վարչութեան շնորհիւ արդէքաւեր վիճակի մէջ, մատնւել են առանեստիկան հիմքման և ընդհանուր մերգելութեան պատու հասոին՝ այդպիսի երկիրներու շոգեկառ բիբարերար, կազդուրիչ տպաւորութիւնը անհամեմատ աւելի ուժեղ է, քան թէ, ըրինակ, Հնդկաստանում կամ Չինաստանում, ուր երկաթուղին ոչինչ չի կարող աւելացնել

^{*)} Victor Bérard, *Vers Bagdad*, *Revue de Paris*, 1 Juillet 1907.

ազգաբնակութեան անմիջական բարգաւաճումնին ։ Եւ այդ տպաւորութիւնը ևս առաւել ուժեղանում է, երբ —ինչպէս այդ տեսնում ենք Բաղրադի գծի վրայ — օրինակ տայիս են իրենք տեղացիք իսկ, որոնք գետ երեկ գտնում է էին կիսա-բարբարոս վիճակի մէջ, իսկ արարօն հանդիսանում են, որպէս համազած տառը ենքն եր կարգի և խզմամբաւ աշխատանքին Այդ երկիրներում՝ երկաթուղարյն կայտանները ճշմարիչ վագիսներ են, որ շահագրգուռ են ոչ միայն եւրոպացիներին, այլ և — եւսկանն էլ այդ է — տեղացիներին։ Քաղաքակրթի հստակը անուղղակի է, դանդաղ, հազի Նշանը լիւ, բայց նու բանում է չարիքը արմատից։ Հարկ է ապացուցանել այդ ազգաբնակութեան, որ նրա գժբախուսութիւնները բլիստ են անկարգ, բաօսային աշխատանքի սովորութիւններց և որ իր վիճակի բարեկաման միակ միջացը՝ իր կարողութիւնների խելացի շահագործման մէջ է...

Գերմանական երկաթագիծը յարութիւն կը տայ Փոքր Ասիային, ասում է միւս ֆրանսիացի հետազօտողը — Դէլէպի.

Հայուստանը, Ասորեստանը, Բամբելոնը գուրք կը գանց շուտով իրենց երկարատև քննից... Որպէս զի արիւնաբրու քիւրդը գագարէ քաղաքներն ու կարաւանները թալանելուց, որպէս զի թափառական արարք այլ ևս հրացանի շրանէ լաստափայտերը, որնքը ինքնում են ապրանքները Տիգրիսի և Եփրատի ջրերով, որպէս զի իւ բիւրդը և թէ արարք ազգա թողնեն ասպարէզը մշակոյթի և առևտիք համար, բաւական է, որ երկութուղին բերէ այսուեղ կանոնաւոր զօրք, որ նա միացնէ հսկողութեան բերդակները, յետ մզէ թափառականներին, պահէ նրանց մշտապէս անսպատիւ աւազներում կամ լեռնային արօնուներում Լօկիստիկի առաջին սուրցի վրայ՝ գաշտերը պիտի ծածկին հունձքով և բազարը պիտի լցի առուտութիւնորով:

Արտիշեան այդ երկիրները արգաւանդ են; Ամբողջ տարածութիւնը Հայէպից մինչև Մօսուլ եղել է գերազանցապէս բարեահի երկիր: Մասուլից է, որ երբեմ ստանում էինք յարաւաշը: Հայէրը զարձում են Արքայում (գերազանցի զարձարանատերերի զեկավարութեամբ) այդ պանչելի արեւելան գորգերը, որ գեղեցիկացնում են մեր ցուցահանդէնները *):

Յայսնի է այդ գժբախտ քաղաքի արիւնոտ անցեալը
1500 հայերի ճարակումը հայոց վառւած եկեղեցու
հրդեհի ու ծխի մէջ Հազարաւոր որբերին մեծ մասամբ
ապաստանեցին գերմանացիք, սկսւեց օգնութեան մի
ընդարձակ գործ, որի հոգին էր Խօհաննէս Լեպցիհուս
Հէնց որ խազաղութիւնը վերահստատւեց, այդ հա-
րիւրաւոր այրիների ու որբերի գանգւածը գերմանական
արհեստանոցներում համախմբւած, դարձաւ շուտով
խթանը Արևելեան ճարտարեւստի մի կարևոր ճիշդի,
գորգային արդի և նախագործութեան մեծ առաջնորդ, առին
գեռ վերապահւած է մեծ ապագայ, շնորհիւ նորա-
կառոյց երկաթուղու

Տ ն տ ե ս ա կ ո ն կ ե ա ն ք ը ա մ բ ո ղ ջ ե ր կ ր ու մ հ ս կ ա յ ա -
կ ա ն թ ո ի չ ք կ ա ո ւ ն է : Հ ա յ ժ ո վ ր դ ի ա հ ա զ ի ն մ ե ծ ա -
մ ա ս ն ո ւ թ ի ւ ն ը դ ո ւ ր ս է մ մ ո ւ մ ա յ գ մ ե ծ զ ա ր կ ե ր ա կ ի ն
ս ա հ մ ա ն ն ե ր ի ց , ա յ ն ու ր ա մ ե ն ա յ ն ի ւ , ն ա և ս կ ր կ ր է ա ն -

^{*)} Թէ ինչ կարող է դառնալ այդ երկիրը՝ վկայում է թարբեատանի օրինակը։ Այսինքն ոչինչ չէր արտահանում Ռուսները չինեցին անդրկասպեան երկաթուղին և այսօր ստանում են այս եսերի 180 միլիոնի բամբակի։

*Fr. Delaisi, L'Axe de la Politique Européenne,
La Revue, 1 Nov. 1907.*

խուսափելի կերպով ընդհանուր յեղացրջման անդրադարձութեան կիծը հետզիետէ կ'արձակէ իր ճիշդերը այլ և այլ ուղղութիւններով, կը կապէ լքւած, կղզիացած կենտրոնները: Առեւտրի և արդիւնաբերութեան զարգացման հետ՝ կըսկսէին ազգաբնակչական շարժումներ. աւելի աշխատ ու ձեռնարկուարերերը կը տեղափոխին կամաց-կամաց, կը կենտրոնանան խոշոր, եռուն գործառնութիւնների շուրջը և հայ տարրը, որ յայտնի է Արևելքում իր ձեռնարկուադով, իր գործնական ուժեղ բնազդով, որ գրեթէ միակ կուլտուրակիր (*Kulturrträger*) տարբն է իր վայրենի, խայտարդշտ միջավայրում, մարսող արևմտեան բազաքակրթութեան արգասիքների, օտար լեզուների ու սովորութիւնների — հայ տարրը, անտարակոյս, մեծապէս կը նպաստարուի տնտեսական գալոց հսկայ վերիվայրումով: Դա կարող էր երկիւղ ունենալ գերման տարրի մրցակցութիւնից, բայց առ այժմ — և երկար ժամանակ — գերմանական գերմանական գաղթականութիւնը չպիտի հաստատւի Փոքր Ասիոյ մէջ. Ի երլինը Բ. Դրան պահանջումով, հրաժարւել է այդօրինակ ծրագիրներից:

Տաւրոսի լանջերից մինչև ծովի եղբերձները — առում է թերար — երկաթուղին մի քանի օր շարունակ պիտի ճեղքէ բամբակի գրեթե անընդհատ մի դաշտ... Եւ ձեռագործը շատ ժամ է, հմատ, տոկուն, համբերատար ձեռագործ, որ պէտք ունի միայն ապահով զուգը թե առաջ որեւէն մաքրէ, մշակէ հայկական թագավորութեան այդ հինաւուրց հսկերը, ուր Տեղբան Մեծը կառուցել էր մայրաքաղաք Տիգրանակերտը...

Աիլլիկեան — երկրագնդի ամենաարգաւանդ վայրերից
մինը — լիառատ կը վայելէ երկաթուզու բարիցները-
տնտեսութիւնը կը զարգանայ, կը բարգաւաճի կօնիսայից՝
գիծը պիտի ուղղուի դեպի Ադանայի դաշտը, ուր լեռ-
նային հեղեղները ստեղել են ամենաարերի
հողերի լայնածաւալ մի դաշտավայր, մի երկրորդ
եգիպտոս, ուր ցորենը և բամբակը գտնում են մի
սրանչեցի գետին:

Երբ կը փորէին Տաւրոսի տունելները, կը ձգւին
կամուրջները և կը յաղթւին հարիւրաւոր այլ արգելք-
ներ, երբ Տաւրոսից գահավիժւելով՝ շոգեկառքը կը
սլանայ գէպի Ադանա՝ այնտեղ նո կը միանայ Մերսինի
երկաթուղուն, որ Նոյնպէս այսօր գերմանացոց ձեռքումն
է. այն ժամանակ լեռնադաշտից ցորենը, բուրդը, մե-
տաղները առատութեամբ և դիւրութեամբ կը հեղ-
հեղւեն գէպի Մերսին, գէպի ծով, և այնտեղից կը
բարձրանան, հակառակ ուղղութեամբ, գէպի վեր՝ Եւրո-
պայից նաւերով բերւած ապրանքները:

Թիւրբիոյ հանրային աշխատանքների մինիստրութիւնը
1909-ին հրատարակած իր մի յիշատակագրի մէջ
հետևեայն էր ասում Կիւիկիոյ մասին *).

^{*)} Քաղաքացի ենք գոքտօր Ռուբենի գրւածքից՝ „Die Bagdadbahn.”

առանութեական բնդմանուրութիւն։ Նա յարմար է ամենաայլ լազան մշակյթների համար և մանաւանդ հացահատիկների ու բամբակի համար։ Այդ վերջինը կարեւորագոյնն է։ Երեք նշանաւոր դետեր ուսուցում են այդ զաշտը։ Թարսուս Չայ Սեյսն և Զհան Չոր ամիսների մէջ՝ սեպտեմբեր, հոկտեմբեր—այդ գետերը այնքան ջրառատ են, որ կարող են գուհացնել զաշտի ուսուցման կարիքները։ Խոկ գարնան նրանք այնքան վարար են, որ հունձրի համար վխառակար ուղղում չեր են առաջնութեան հարկ է, ուրեմն, մի կողմից ուսուցում աշխատանքներ կատարել, միւս կողմից՝ ճահճային վայրերը ցածրացնել։

Անդամ՝ իր այժմեան վիճակի մէջ—ասում է Ռօօրքատի—Կի իկիոյ գաշտը բամբակի արդիւնագործութեան կարևորագոյն վայրն է ամբողջ արևմտեան Ասիոյ մէջ Բամբակի հռնձքը Կիլիկիոյ մէջ հասնում էր՝

1904/05	.	.	.	45,500	5...4
1907/08	.	.	.	60,400	"
1908/09	.	.	.	76,400	"
1909/10	.	.	.	59,400	"
1910/11	.	.	.	85,000	"

Աթերքողը աեմնում է 1909/10 թւականի մէջ հունձբի խոշոր նւազումը; Պատճառը Ագանայի կոտորածն էր, ասում է Թօդրբախ. դաշտի հայ ազգաբնակութիւնը յօշոտւեց, հնձող աշխատաւոր ձեռքերը պակսեցին և բամբակի արդիւնաբերութիւնը, որ աւելի ևս պիտի աճէր, բարձրանար — նւազեց պատճառելի տոկոսով

Աիլլիկիոյ գաշտն իջնելուց յետոյ՝ երկաթուղին նորէն
պիտի մագլցէ լեռն ի վեր, յանգելու համար Եփրա-
տին։ Աշագին աշխատանք կը թափէի և այդտեղ, մե-
ծամեծ ծախքեր կ'արւին խոչընդուները հարթելու
համար։ Այդտեղ՝ նոր տեսարան, նոր, աւելի բազմազան
արդինավայր։ Երկաթուղու մի ճիւղ կ'երթայ, դէպի
Մարաց Փոքր Հայքի բազմամարդ կենարօնը։ Այդ-
տեղ ևս, ապա հովութիւնը հաստատելով՝ վայրենի
հրոսակների մշտնջենաւոր սպառնալիքն ու երկիւղը փա-
րատւելով, աղդաբնակութիւնը, մասնաւորապէս հայ-
տարրը, կը նետահ բոլոր թափով տնտեսական յեղա-
շընման հօսանքի մէջ և կարծ ժամանակամիջոցում կը
վերակենդանացնէ այդ թշւառ, լքւած, թալանւած
վայրերը։

Այս այլ ճիշդը կ'երթայ գէպի և յ ն թ ա փ, ուրիշ
կարևոր մի կենտրօն, ընկած ցորենի, գարիի, եգիպտա-
ցորենի, խաղողի, պիտակի ու թռչվի դաշտերի մէջ

Այս երրորդ ճիշդ կ'երթայ դէպի Բ ի ը ե զ ի կ, ուր
դիմում են հայկական կարաւանները՝ Եփրատն անց-
նելու համար:

Ապա և—Հալէպը Գերմանական արշաւի մի այլ
կարևոր նպատակէւտն է այդ ծանօթ շահաստանը, որ
մի բանի տարի առաջ վերապահւած էր համարւում
Գրանսիային: Ֆրանսիացիք ուզում էին բերութ-Դա-
մասկոսեան իրենց գծից մի ճիւղ տանել գէպի Հալէպ
ապա և շարունակել մինչև Եփրատ: Բայց Բերդիյն եր-

որ սիրացածնեց և ըլդութիւնի մինաւորին և այդտեղ ևս վաստակեց առաջնութեան արժաւենին։ Այդպիսով Հալէպն ևս այսօք գերմանական ազգեցութեան շրջանում է։ Իւժիւրքիոյ ամենահարուստ շահաստաններից մէկն է դա։ Այդտեղ են հանդիպում բոլոր ճամբաները, որոնք իշխում են հիւսիսում՝ հայկական Տաւրոսից, արևելքում՝ Միջագետքից, հարաւում՝ Սիրիայից և այն ճամբաները, որ բարձրանում են Միջերկրականից, տանելով եւրոպական արդիւնագործութեան ապրանքները։ Այդտեղ Հալէպ է, որ համախմբում են տասնեակ հազարաւոր ուխտաւորները, որ ամեն տարի Պօլսից, Մասուլից և Քաղղաղից գալիս են, դիմելու համար գէպի Մեկկաւ Հալէպը իր 140,000 ազգաբնակութեամբ գերմանական գծի ամենահարուստ շահաստանն է, այդ գծի ամբողջ 2800 կիլոմետրի տարածութեան վրայ) ^(*)։

Այդտեղ ևս, այդ եղանակի շահաստանում, հայ տարրը
պիտի լինի տնտեսական և կուլտուրական շարժման
աւանդաբրդի, առաջապահի մէջ, նա եղել է այդ պատ-
ւառոր դերի մէջ — մինչև օրս էլ Խնչպէս Մեծ Հայրի
բարձրագագոթ լեռներում ու խորանգունդ կիբճերի
մէջ — այդտեղ ևս իր մասի պատմութեան ամենահին
օրերից ի վեր, այդ զարմանալի տարրը սնուցել է շա-
րունակ փոխադրութեան ու փոխանակութեան երկայ-
նաձիգ զարկերակները, եղել է միշտ առեւտրի ամենա-
գլխաւոր ազգակը, կարւանային կեանքի ոգին... ան-
գամ իր ամենամռայլ, ամենասարհարութ շրջաններում,
երբ ամեն մի բայլափոխում հանդիպել է բարբարոս և
գիշտափի Նօմադներին, երբ ամեն մի բայլափոխում արդ
կենսաբեր, կուլտուրատար կարաւաններին սպառնացել է
յարձակման, թալանի ու կոտրոծի վտանգը...

Աշնելով իրենց Տաւրոսից — գրում է Ամիկոօր Բերար — հայերը մշակել են լեռ ան վերջին զառիվայրերը, ինչպէս նուև դաշտի ծալքեղը. ապա և, առևետուրը կտննաւորելու համար, զարդարել են Միջագետրի ճանապարհը օժեանա- ներով:

Նրանց (Հայերի) շնորհիւ է, որ Հայեազգը, իրրեւ Արք մռաւղի
մթերանց (*entreposé de l'Occident*) Հաղորդակցութէ էր
Ռուսիւ հետ, իսկ վերջինը բազարն էր Հնդկաստանի և
Պարսկաստանի...

Հեռաւային ծերպերից անցնելով, հայկական կարստաները
մեծ շրջան էին անում՝ Քիլիսի, Այնթափի, Արքայի, Աե-
գերիկի, Գիմարքեկիրի, Մարդինի, Ճեղբէի վրայապվ... Հանգըռ-
ւանների, օթեանների մէջ հաստատւած էին հայ բազար-
ներ, հայ վաճառականները հարստանում էին, ձեռք էին
բերում շրջակայ այդ ներեւ ու գաշտերը, ուր նրանք տեղա-
ւորում էին գարձակալների պաշտօնով լեռից կանչւած իրենց
ազգակիցներին: Կատորածներից առաջ պաշտօնական աշխար-
հագրութիւնը **) հաշւում էր՝ 10,000 հայ Հալէսի շարքը,
2800 Քիլիսի, 4000 Այնթափի, 4500 Արքայի, 3800 Աեգ-
րեկի, 10,000 Գիմարքեկիրի, 15,000 Մարդինի, 5000 Ճեղ-
բէի շուրջից: Դա հաստատուած էր հայ ազգաբնակու-
թիւնն էր Այդ թւերը կրկնապատկւում, թերեւս եռա-
պատկւում էին հայ երկրագործ աշխատաւորների հստանըսպվ,
որ ամեն տարի իջնում էր լեռից մշտկութեան կամ հունձքի
աշխատանքների համար, բայց այդ կ ուն և բազմութիւն

^{*)} Delaisi, *L'Axe de la Politique Européenne*.

****) S^{te} Vital Cuinet, Turquie d'Asie.**

Հայ տասն սնդակն ուղեկորները, սրճնք անդադար շրջան ու ուռմ էին բազարից բազար Պէտք է հաշւել մի 100,000 այդ Ազգին հայ ազգ սրնակութիւնը, որ ապրում էր բաւե Հայաստանի եղբայրներն ։ Կրանց բանակը աճեցրզ իրենց հարստութեան հետո թւում է թէ նրանք կոչւած էին մեծ գեր խաղաղու Ասիա խաղաղ զ սրդացման մէջ, քանի որ Մօսուլից անդին՝ նրանց յարաբերութիւնները կ ամ գաղութները, շարան սկիւելով մինչև Բոմբեյ և Բախչար ։ Հանդիսաւում էին իրեն առաջին սիւները այն բար ե կ ամութ ե ան կ ամութ ը թի (les premières piles du pont d'amitié), որ եւրոպական քաղաքակրթութիւնը մի օր պիտի ձգէ թիւրբական, քրդական և բէզուինեան վայրեւութեան վրայից գէպի առևսատագէտների ու բանաստեղծների երկիր Պարսկաստանը, իսամ աւելի հեռուն՝ զէպի Հնդկաստանի ու Չին ստուանի բաղաքակրթութիւնը։

... Ալյդպիսով, Աղջիկի հայելը հարզրդակցութիւն էին հաստատել Փաքը Հայրի մեծ շուկաների (emporium) և Թաւրիցի, Թեհրանի ու Ապահանի հայկական մեծ բազարների միջև Պարսկաստանից գենը՝ անդիմական հովանաւորութեան տակ նրանց կարաւանները գնում էին գեղի Ավագանիստանի անցը երը և Խնդուսի գաշտավայրը, մինչ նրանց ազգակից ռուսահայտառակ հայերը փսխ մնակում էին նրանց կասպից ծովի նաւահանգիստներում ու Խորասանի ձամբաների վրայ... Նրանը հանում էին շինական թուրքեստանի գուներին, ուսկից մի ժամանակ հեղեղել է թուրքական ու մաղական բարբարոսութիւնը, ուր այսօր եւրոպական քաղաքակրթութիւնը գտնի և բաղխելու և գտնում է տաճու հինգ դարերի աւազների տակ Ալքսանդրեան շրջանի յունաց կոմը ողներն ու յուշարձանները... Կիպրոսի ծոցից մինչև Գէւլիի ծոցը աշխատանքը ու բաջարեսամբիւնների այդ յամբրնթաց հոսանքը գնում էր ծակելու, փորփորելու ամբողջ Ասիան: Այդ ցեղի տոկունութիւնը և ծկուն հայրագիտութիւնը, միացած օրինակելի սակաւագետութեան, ժուռկալութեան հետ՝ ենթալրածէն շատ աւելի շուտ կը կատարէին այդ տիտանեան գործը (Ասիայի փորփորութը, ներթափառնցուեր), և այդ նախակարապետների ետեկից մեր բաջարաքարթութիւնը առաջ կ'ընթանար առանց բանութիւնների և սպանութիւնների...

Արագի հետեւ այդ հայերը արդէն իսկ մերոնց ի ց էին: Կրտսեր դառնամ էին իրենց վաստակի մի մասը գպրոցների մէջ և բարեպատեհ մի հանդիպումով կաթօլիկի ու բողոքական միախանաքները մրցում էին՝ գրաւելու համար հայերին, մարզելու նրանց՝ եւ բարպատիան գտապահների ողովք... Այդ պիտօք, և բարպայի և Ասիայի մէջուեղ՝ ստեղծում էր եւ ըստ ական անացած աս սի ա ց ա ծ ա ս ս ի ա ց ի ն ե ր ի մի ժողովուրդ (un peuple d'Asiatiques européanisés), որի գէմա ազգութեան ստուար մասի պահպանում էր վաղեմի հեռանքը և ի գէմա իրաբանչիւր հաստածի մատուրականութեան՝ իրացնում էր արևմտեան նորոյթների ճաշակը *).

Պարիղեան գիտականի այդ սրտառուց էջերից յետոյ՝ այլ ևս հարկ չկայ ծանրանալու հայ տարբի խաղաղիք տնտեսական և ընդհանուր-բաղաբակրթական դերի վրայ:

Առաջ գնանք Քաղդադեան ապագայ երկաթուղու գծով և դիտենք ճանապարհի հարստութիւններն ու աղքաբնակութիւնը:

Դիարբեկիրի շըջանը գեռ շատ հնուց յարտնի է իր պղնձի հանքերով. և չնայեած մշակութեան նահապեական ձևերին ու հաղորդակցութեան ճամբաների բացակայութեան՝ այդ հանքերից մեծաբանակ պղինձ է դալիս դէպի Ալեքսանդրեթ և Սամսօն Ահա թէ ինչ է

գրում այդ հանքերի մասին Ա. ի ու ալ Կ ի ն է իր համբաւաւոր գրւածքի (էջ ۴*)).

Արդանա Մագանի հանքը, գտնված է տակաւին
1096 թվին: Մինչեւ օրս յայտնի եղած շերտը մոտ 12,000
քառակուսի մետրի տարածութիւն ունի: Հանքը հարուստ է
պղինձով և որբան աւելի եք խոր թափանցում, այնքան
աճում է նրա պարունակութիւնը: Միջին հաշվով հանքը
պարունակում է 30 տոկոս պղինձ, 30 տոկոս ծծումբ և 40
երկաթ: Ասի չգոյի ջարդող ու ծակող մեքենաների՝ հանքը
գետնի տակից դուրս բերելով, կարատում են մուրմի օգ-
նութեամբ... Աւղասպանները տանում են հանքային մուլ-
տածքը թոկատի գործարանը, Արվազի վիլայէթի մէջ, վերջ-
նականապէս մշակելու և նրբացնելու համար... Փոխադրու-
թեան ճանապարհները ընդհանրապէս անպէտք են, տեղ-
տեղ անանցանելին:

Հայոց կոտորածը այդտեղ ևս ունեցաւ իր անդրադարձումը։ Չեռագործը պակասեց, հաղորդակցութեան ձանսապարհները աւելի ևս դժւարացան, անպէտքացան։ Բաղդատի գիծը կը գայ և նոր թռիչք կը հաղորդէ հանքային արդիւնագործութեան և Դիարբեկիրի շրջանը նոր հոգակ ու հրապոյր կը ստանայ:

Ապա—Միջագետքը... Տիգրիսի և Եփրատի հովանական աւազանը և մարդկութեան ու բաղաբակրթութեան մեծահոչակ որրանը Որբա՛ն յուշեր և թագնւած հարստութիւնների Դեռ մնում են այդ հինաւուրց քաղաքակրթութեան հետքերը, հին, հոյակապ ջրանցքների ու ձամբաների գծերը, թաղւած ու մոլորւած դարաւոր բարբարոսութեան մօխիրների տակ... Որբա՛ն այլազան ցեղեր են անցել են այդ Խորհրդաւոր երկրի վրաւից քանի՞ վիթխարի ցիկլօններ, Տրդեհող ու բնաջնջող արշաւանքներ... Ի՞նչ փարթամ կեանք ու մշակութիւն Բաբելոնում, Ասորեստանում.

Այսօր—լքում և ամայութիւն։ Աւազը, չոր կիզիչ
համատարած աւազը ծածկում է իր թանձրամած շեր-
տերի տակ՝ ամեն ինչ Մի անեղր անապատ՝ սիրուն ու
հրապուրիչ օվագիսներով։ Ազդաբանակութիւնը՝ ցանցառ,
կիսափայրենի, նահապետական թեգուին և բիւրդ։ . .
Խալամի միահեծան տիրապետութիւնն է իր նախնական
և քարացած Փօրմուկներով։ Թափառական կենցաղի եր-
կիրն է — թատերաբեմը մշտնջենաւոր բաղկումների,
հօրդայական աւարատենչ արշաւների . .

Անհուն գանձեր—շահագործելու սավադը^ա, սեահողը, որ բռնում է հսկայական տարածութիւն—այժմեան խուլիսի չափ—սպասում է մշակութեան նորագոյն մեթօդներին, սպասում է նոր ջրանցքներին ու շոգեկառքի սուլոցին, սպասում է հոստատուն օրէնքի ու ապահովութեան ռէժիմին, որպէս զի վերականգնէ հին պանծալի շտեմարանը, ցորենի, բրինձի և այլն, որ կարող է կերակրել մի քանի տասնեւակ միլիոնաւոր մարդկութիւն... Հարկ է միայն վերաբանալ ու կատարեագողեն նախնի ռարեկոն գոանուները: Խենանէ:

^{*)} Victor Bérard, "Vers Bagdad", *Revue de Paris*, 1. Januar 1907, *Idem*.

^{*)} *La Turquie d'Asie II v.*

Տիգրիսի ձախ ափունքներում, Կրանեան լեռնաշղթայի ստորոտներին նաև թե նէ առատօրէն գուրս ժայթքում գետնի տակից և հոսում է ժայռերի միջից, ամբարւում է վիսերում երբ — առում է վիտալ լինէ — տեղացի աշխատաւորները կամենում են զւարձութիւն պատճառել անցորդներին, նրանք նետում են լուցկին այդ նաւթային հորերի մէջ — և անմիջապէս բարձրանում է մութ, կարմրագոյն բոցը, շրջապատած սև ծուխի յատախուզավուշը և բարձրացնին նոր Բագուներ կը հաստատէ այդ լայնարձակ հողերի վրայ:

Ենչ աներեւակայելի թռիչք պիտի առնեն արդիւնաբերութիւնն ու առեւտուրը այդ վայրերում, ընդամենը մի 15—20 տարի յետոյ.. Կարելի է գուշակել մօտաւորապէս, հիմնելով մեր կովկասեան բագւի օրինակի վրայ Եւ ինչ անսպառ աղբիւրներ՝ օսմանեան պետութեան ֆինանսների, նրա տնտեսական և ընդհանուր կուլտուրական բարգաւաճման համար...

Այդպէս — կը վերածնի ասիսական Տաճկաստանը, փլատակների փոշու տակից, մոռացութեան ալիքներից դուրս կը լողայ հնագարեան, զառամեալ լնատօլուն, Փոքր Ասիան իր պատմական թանկագին յիշտակներով, իր եղակի աշխարհագրութեան դիրքով, տարածւած հին աշխարհի երեք մեծ ցամաքների միջև — Անտոլուն՝ որ ծովերի շնորհի հաղորդակցում է միանգամյն ձեղքական Ովկիանի և Միջերկրական աւազանի հետ, որ գտնուում է մարդկային հոծ համախմբումների, այլազան հարստութիւնների և այլազան քաղաքակըրթութիւնների ու հասարակութիւնների, կրօնների և բաղաքական սիստեմների հսկայական խանձարուրը, Քաղդէի, Քարելոնի, Ասորեստանի, պարսկական, արաբական, հայկական, յունական, հռոմէական, բիւզանդական թագաւորութեանց դաւերի և արշաւների մշտնջնեաւոր թատերավայրը, որ օսմանեան բազմագարեայ անորակելի ու էժիմի տակ չորացել է, ցամաքել, դարձել է աւերածի ու բարբարոսութեան սրտամձլիկ մի տեսարան...

Քը դերի ու բերեցուինների թափառական հօրդաները խաղաղւած, ընտելացած կուլտուրական աշխատանքին, արիւնարրու չէ ըք է զը (Նաև բիւրդը), սանձահարւած և վարժեցւած տւելի օգտակար ծառայութեան մէջ շահագործւած իր բնածին յատկութիւններով, իր ուղմական ձիրքերով, իրեւ զինուոր հսկողութեան, իրեւ ժանդարմ հանրային խաղաղութեան, արար հեռաւոր Միջագետքում մկրտւած, տւելի ձիշտ, վերամկրտւած արևմտեան բաղաքակըրթութեան աւազանում. Թիւրքը օսմանցին՝ դուրս նետւած իր դարաւոր լեթարգիական մրափից, թօթափած անշարժութեան իր մահաբեր լուծը. Հայը՝ վերադարձած իր գութանին և արօրին, իր դաշտերին ու կարաւաններին, իր մատոր բաղաքակըրթական առաջապահիկ

աշխատանքին.. Հրապուրից հեռապատկերու թւում է, թէ շատ ել հեռու չէ այդ վարդագոյն ապագան..

* * *

Բաղդադի գիծը կը յեղացրջէ մի յայտնի չափով և համաշխարհային հազորդակցութիւննու և... կը յեղացրջէ ի վաս Անգլիայի Այդ գիծը ամենակարճ ուղին կը լինի Եւրոպայից դեպի Հնդկաստան Կամ Հնդկաստան պիտի հասցնէ վեց օրով աւելի շուրջ, բան Սուկղեան ջրանցքի ուղին Վերջինը այդպիսով կը կորցնէ մասամբ իր առևտուրական և ուղմական կարևորութիւնը Հարիւր հազարաւոր ուղեւորները, որ ամեն տարի Եւրոպայից գնում են դեպի հեռաւոր Արևելք, պիտի գերագասեն ցամաքային աւելի կարճ ճանապարհը, պիտի առնեն Պոլիս-Բաղդադ-Պարսից Ռուս գնացքը:

500 միլիոնի արժէք ունեցող Բաղդադեան գիծը *) պիտի կառուցւի համաձայն նորագոյն տեխնիկի, այլ և... համաձայն նորագոյն միջի աւարի միջի գիտ պիտի զինուորական սիստեմի պահանջների.. Տնտեսական-առեւտրական անուն կրելով Բաղդադի երկամուզին, ինչպէս արդէն փաստեցինք նախորդ յօդւածներում, միանգամյան ու ազատ կան միջի գիծ է, ուստի և կը շինւի ամենալայն ու ամենաամուր ձեռքի նա պիտի կտրէ ժամը առնեազը 75 կիլոմետր: Պոլսից Բաղդադ պիտի հասնեն ընդամենը 65 ժամում, մինչդեռ այսօր պէտք է լինում նոյն տարածութիւնը կտրելու համար՝ 50-ից մինչև 55 օր: Օրերն այդպիսով կը վերածնի ժամանակը ու մերի.. Եւ դա կը լինի այդ վիթխարի ձեռնարկի ամենախոշոր վաստակներից մինը:

Գիծը նաև ու ազատ կան է: Դա գերագոյն նպատակն է գերմանական բաղաքականութեան: Դա նպատակն էր նաև Երդիւլ Համբդի: Դա մտնում է, վերջապէս և Երիտասարդ Թիւրքիոյ հաշիւների մէջ Թիւրքիան ուղմական տեսակետից մեծապէս կը զօրանարի Եւ նա պէտք ունի զօրանալու: Նա պէտք ունի զսպելու

*) Ֆրանսիայի իրազեկներ ենթագրում են, որ գծի, միւնքերի, կայուրանների, ոսումնական և այլ պէտքերի վրայ պիտի ծախսւի 450—500 միլիոն ֆրանկ: Խոկ Deutsche Bank-ի ու բէն Ֆօն Գ. վիններ, իր բերդինեան դասախոսութեան մէջ յայտնում էր, որ Անտոլուի երկամուզային ամբողջ ցանցը պիտի նստէ 500 միլիոն մարդ, որից 200 միլիոնը (250 միլիոն ֆրանկ) Բաղդադի երկամուզու ծախքերն են:

Տեղեր կան — առում է Ֆօն Գ. վիններ — ուր ու մէն մի կի լու մէն ուր ու արած ու թիւնը մէջ է մի ի լու մէն մէն ուր կ պի տի ար ժեն այ լու մէջ (1 1/4 միլիոն ֆրանկ):

Պէտքը է կարել մի շաբաթ կիրճեր, ահազ/ն կամուրջներ ձեռք և մինչև Մոսուլ հասնելը պէտք է փորել մեծ տունելներու Բաղդադից գեռ պէտք էր լինի ճիւղեր կառուցանել («Freie Presse» 12 դեկտ. 1911 թ.):

անիշխանական և ապստամբ հօրդաները, որ այնտեղ, Քիւրդիսանի, Միջագետքի հեռաւոր Խորչերի մէջ՝ չեն ուզում ճանաչել օրէնք ու դիսցիպլին և դառնում են պատուհաս խաղաղ ազգաբնակութեան համար Երբ այդ նիստական ազգաբնակութիւնը՝ հայն է, օսմանեան ուժիմը — անգամ նորը — դիւրութեամբ չի հակում գեղի ողսպելու⁴, խոռվարաներին ու ասպատակողներին սանձահարելու քաղաքականութիւնը։ Բայց Երբ այդ անսանձ խոռվարաները — սովորաբար քիւրդ բէյեր, մեծանուն աւազակապետներ ու մարդասպաններ — կատարելու անիշխանութեան են մատնում երկրի մի պատկառելի մասը, ըմբռոտանալով նաև տիրող ու էժիմի գէմ, այդ գէպքում, բնականաբար Բ. Դուռը դառնում է խիստ զգայուն, կարգապահ ու օրինապահ։ Օսմանեան պետութիւնը մինչև օրս անունով է միայն եղել կ են տրօնական իրօք ծայրէծայր նա մշակւած է եղել կենտրոնախոյս կամ ապակենտրոն ձգտումներով։ Աչա այդ էական վատանգն է, որ ուզում է յաղթահարել թիւրք-գերման երկաթուղին Ուժերի կենտրոնացումը և կենտրոնախոյս ձգտումների խորտակումը նրա մերձաւոր ռազմագիտական (stratégique) նպատակն է։

Բաւական է յիշատակել երկու համբաւաւոր քիւրդ հրոսակապետներին — իրահիմ փաշան և Ճեղիքի Մուստաֆա փաշան — որնք գեռ մօտիկ անցեալի մէջ իշխում էին ամբողջ վերին Միջագետքում և աւազակային շարունակական արշաւներով պատուհաս էին գարձել թէ համբգեան ու էժիմի և թէ խաղաղ ազգաբնակութեան համար կազմակերպում էր մի տեսակ անկախ բրդական իշխանութիւն Եփրատի և վերին Տիգրիսի միջև։ Հալէպից մինչև Վան աշրածւում էին Իրահիմի սիրագործութիւնները։

Այսօր ևս տակաւին խաղաղութիւնը ապահովւած չէ այն հեռաւոր ծայրերում։ Եւ գուցէ, ո՞վ գիտէ, քիւրդ գիշատիչ աշիրաթապետները, Նախկին համբգիէտ առաջնորդները գնդակի սուլոցներով պիտի գիմաւորեն շոգեկառքին։

Համբգիէները — առում էր մեր ողբացեալ ո՞ի ի է ո Աի-յե ա ո ը Pro Armenia ի մէջ, մի քանի տարի սրանից առաջ իրահիմ փաշան բաշագործութիւնների առիթով — համբգիէները չեն կարող հաշտուել այն իրողութեան հետ, որ երկաթուղու շնորհիւ նօրմալ ու կանոնաւոր կեններ կը հաստատի այն վայրերում, որ նրանք շարունակ կողովառում են։ Կամ նրանք կ'ընդգիւմադրեն գծի աշխատանքներին... կամ թէ աշխատանքների վերջանալուց յետոյ աշխատի մի անապահութիւն պիտի տիրել երկաթուղու մերձակայ վայրերի մէջ, որ ապրանքային արանգիրու, փոխադրութիւնը անհարիսի դառնայուց համարի հարանայ, Համբգիէների կամ արարաների վայրագութիւնների անհարիսի կը դարձնեն մերժ ցանքը և մերժ հունձքը... Գուցէ նշյնիսկ փոքրիկ, կիսանկախ պետութիւնների հաստատումը և Թիւրքիոյ տարրալուծումը պիտի դանաւելի ևս բարդացնելու կացութիւնը...»

Ցամենայն գէպս, երկաթուղին հնարաւորութիւն կը տայ օսմանեան կառավարութեանը՝ արագօրէն, ընդամենը մի տասնեակ ժամերի ընթացքում կենտրոնացնե-

այն վտանգաւոր շրջանների մէջ բաւականաչափ զօրք և չեղորացնել վայրենի հրոսակների շահատակութիւնները։

Երկաթուղին ահագնապէս կը դիւրացնէ զօրաշարժը՝ նաև Առուսիոյ դէմ ունենալիք պատերազմի միջոցին, Վերջին թիւրք-ռուս պատերազմին — ասում է Անընէ Հանրի — Ասիոյ զօրագնդերը հասան միայն ուղղմական գործողութիւնների վերջում և այն՝ յոգնած, ուժապառ Երկաթուղիով՝ 4-րդ (Երզրումի), 5-րդ (Դամասկոսի) և 6-րդ (Բաղդադի) զօրաբանակների փոխադրութիւնը կարելի կը լինի արագ ու դիւրութեամբ կատարել⁵)։

Խսկ ռազմական հեռաւ ու ո՞ր նպատակը...

Այդ մասին երկարօրէն խօսել ենք արդէն մեր նախընթաց յօդւածներում և այլ ևս չենք ծանրանայ Այնտեղ մենք ուրագծեցինք անգլօ-գերման մըցակցութեան պատմութիւնը, մի մըցում՝ որ առանցքն է ժամանակակից, համաշխարհային բաղաքականութեան Ասացինք, թէ ինչո՞ւ և ինչպէս Գերմանիան ձգտում է ուժեղացնել Տաճկաստանը և նրա միջոցով, նրա աջակցութեամբ փորել բրիտանական տիրապետութեան հիմքերը և նդիպոսում, Հնդկաստանում, ամբողջ Արևելքում ևսացինք, թէ ինչպէս միլիտարիզմի հզօր կուտանը կամենում է անգլիական գերիշխանութեան վիտաական հեգեմոնիան, թէ ինչպէս նու այդ խսկ նպատակով — բաջալերում է անգամ համիս և լամութիւնը, պանիսլամզմը։ Ասացինք նաև, շեշտեցինք մի քանի անգամ, թէ ինչպէս ննամբով, հմտութեամբ անտեսական ձեռնարկների վարագործի տակ թագնում է ապագայ, գերմանական նւաճումների գաղափար...

Թիւրքիան ուժեղացնելու սահմանած երկաթուղին պիտի յայտնաւի թերեւս.. Էապէս հակառակ թիւրքի ո՞վ գիտէ, գուցէ հեռու չէ այն օրը, երբ պիտի իրադործւի Սիմնանների, Ըսայիշերների, Գօն Պրեսսեների փայտայած երազը, երբ Բասփորի վրայից ձգւած մի կամուրջով կամ նրա տակից փորւած վիթխարի մի տունելով եւրապական երկաթագիծը պիտի ձուլի ասիականի հետ և երբ Պօլիսը պիտի լինի սուկ գերմանական մի կայարան Բ. Ե. Բ. լին-Բ. աղ դադ ձամբու վրայ... Ոսմանեան ամբողջութեան⁶ (intégrité) և անկախութեան ֆօրմուլը, որ առերկեսոյթս գաւանում է նաև Վիլ-Հելմ լլ. ի կառավարութիւնը — կը գառնայ լոկ գատարէ մի հնչիւն, երբ գերմանիան իր հզօր ու բեզու ձեռնարկներով կը ցանցապատէ երկրի մի ահագին մասը, երբ գերմանական հեգեմոնիան⁷ կը հաստատի լինկիրի, Կոնիայի, Ագանայի, Դիարբեկիրի, Մօսուլի, Բաղդադի և Բարսայէթներում⁸։

⁴⁾ Questions diplomat. et coloniales, 1 Janv. 1907.

⁵⁾ Ինչպէս յայնի է, գերմանացիք մտադիր էին հացաներ բաղդադի գիծը մինչև բրիտանական պրոտեկտորատ և աղ-

Նրկաթուղթը աւարտած մասը—ասում է Ուլար—
ցոյց և տալիս արդեն, որ այդ բաղաքական գիծը այլա-
պէս ուժեղ է, քան թէ, օրինակ, 6000 կիլոմետր եր-
կարութիւն ունեցող Անդր-Սիրիեանը Գերմանացի ճար-
տարապետ Մակենզէն իր միջազգային սպայակոյտով
հաստատել է Բաղդադի գիծը, ըստ գերմանական
սկզբունքների։ Գոսեփայտերը շատ մօտ են իրար և
չիւնած են Նոյնպէս երկաթից։ Երկաթագծերը աւելի
երկայն են և աւելի ծանր (երկայնութիւնը 12 մետր,
և ամեն մի մետրի ծանրութիւնը 37½ կիլոգրամ)։

Այս ճիշտ է, այսօր Բերլինի կառավարութիւնը բա-
ցայատ կերպով չի ցոյց տալիս որևէ ոբաղաքական
մատչոգութիւն՝ թիւրքիոյ մէջ. ճիշտ է, նա ուրշա-
ռում՝ ու ոթափանցում է՝ միմիայն իր ճարտարա-
պետների ու վաճառականների թեւերի վրայ, զարկ է
տալիս բացառապէս տնտեսական առաջխաղութեան.
սակայն... երբ կը հասնէ ո՞նդհանուր տակնուվրայու-
թեան՝ ահաւոր ու պատմական վայրկեանը, երբ կը
հնչէ յաւիտենական ո՞հիւնդ մարդու՝ օրհասի զո-
ղանջը—Գերմանիան՝ ունենալով տնտեսական հեգե-
մոնիա, փաթաթւած և կառչած այդ հիւնդ օրդա-
նիզմին իր ահագին ցանցով, իր զօրաւոր ճիրաններով
ապահովաբար չպիտի ձգտի արգելու, չէզոքացնելու
մրցակից պետութիւնների նւաճողական ախորժակները,
այլ ինքն ևս նրանց հետ միտսին պիտի գահավիժւի
յօշուուղ մարմնի վրայ և պիտի ճանկի իր բաժին-աւարը։

Այդ չարաշուր վայրկեանը կանխելու, այդ ահաւոր
սպառնալիքի գէմ ազգւորեն մաքառելու համար՝ մէկ
միջոց միայն կայ—զօրանալ, ամրապնդւիլ ներսում,
ի տեղի փարելու այս կամ այն արեւմտեան հովանիին,
ի տեղի խրախուսելու հալածական և ո՞բաժանական՝
բաղաքականութիւնը ոչ-թիւրք ազգութիւնների վերա-
բերմամբ, ուժ տալ ներքին համերաշխութեան, հաշ-
տեցնել ազգերը մի կորովի, արդարամիտ կառավարու-
թեամբ, բարձրացնել աշխատաւոր զանգւածների նիւ-
թական և մտաւոր-հոգեկան մակերևոյթը, կազմակեր-
պել դրսի գէմ համասմանեան բանակը, ստեղծել,
մի խօսքով, կուռ, հզօր և բարգաւած հաւաքական
հայրենիքը։

Այդտեղ է փրկութեան խարիսխը։

Մ. ՎԱՐԱՆԻԵԱՆ

գեցութեան վայրերը, մինչեւ և ու վէ յ թ նաւահանգիստը,
պարսից ծոցի վրայ, եւ Արդիւլ Համբիդի պատրաստակամ
աթակցութեամբ, նրա ձեռքով իսկ փորձեցին գրաւել (իրենց
ազգեցութեան շրջանը ձգել) այդ կարեոր նաւահանգիստը,
ուսից ընդամենը մի քանի օր է մինչեւ Բամբէյ, Անդիման,
վիժեցրեց այդ դաւը, մի կորովի ժեստով հաստատեց վերստին
իր հովանուորութիւնը կուվէյթի վրայ, պատեցնելով իր
հզօր ու սպառնական նաւախումբը Պարսից ծոցում։

ՊԱՏՄԱՓԻԼԻՌԱՓՈՅԱԿԱՆ

ԼԱՅՈՎԱ ՊԱՏՄԱՓՈՅԱՓՈՅԱԿԱՆԻՒԹԻՒՆԻ

II

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀԱՏԸ ԵՒ ԴԵՏԵՐՄԻՆԻՑՄԸ

I. Անհատը Լայովանի զիտական վիճութեան առարկայ. — Առուսական իշխանութիւնը սուրբնեկի աղբիւր եւա մարզացնան. — Լայովանի գործ միահիմնականութեան վանդից. — Անհատի պրոբեմի կարող ձեռնի մէջ. — Դժ արութիւններ. — Անհատի պրօբեմի անհ ամեսօրէն տանում է դեւրսնիզմի և կամի ազատութեան հարցին. — Պատմութեան բովան-

դայիւրիմբ մէկ և միւս դէպում։

II. Պատմութեան նախապատրաստմը՝ *Ignoramus et ignorans*. — Ի՞նչ է թէլարում մէզ զիտական նախաչողութիւնը և պա-
նական մատուցութիւնը. — Տիեզերական դիերմինիզմը — Եւա ար-
մէն ու սահմանները — Նպատակների և միջոցների կարգը. — Միաս-
նիկական դիերմինիզմը անարժէ՛՝ նպատակների և միջոցների աշ-
խարհում. — Կիտական նեազօտութեան նամար դիերմինիզմի նարդ
անկարեւու. — Ազատութեան նամար սուբնեկի ներին զիտակցութեան
առաջնակարգ. — Մօժմինց գրծուղութիւնների մէջ — Կանձնաչափու-
թին մօժմինց մէջ — Մարդկային զրծողութիւններ նպատակային
և նպատակայաւու. — Պատմականութեան խայատուկ իմաստ
գրծուղութիւնների և մղումների աշխարհում. — Տիեզերական բացա-
նակ դիերմինիզմի և անհատական կամի նախաձեւնութեան ուրիշ
անհերքութիւն չէ. — Մէմի նախեւանութիւն ուրիշ մածուղների նետ։

I. Գիտական-փիլիսոփայական ըմբռնողութիւնից . և
պատմագիտութիւնից արած իր պահանջներին հաւա-
տարիմ, ուղեցոյց ունենալով հռչակաւոր սուբեկտիվ
մէթոդը, որի մասին խօսք կը լինի յաջորդում, Լավրօվ
վստահօրէն սկսում է իր խուզարկութիւնները պատ-
մափիլիսոփայական պրօբլեմների ընդարձակ գաշտի վրայ։

Փաստաշրջանի և մտաշրջանի այդ աշխարհում ամենից
առաջ և ամենից աւելի մարդկանց ի տ յ ի ն ա ն ձ ն ա-
ւ ո ր ո ւ թ ի ւ ն ն է, որ մեր մտածողի ուշադրութիւնն
է բևեռում իր վրայ. Նա է, որին հետապնդում է
Լավրօվ իր՝ յաճախ գծւարին, գրեթէ միշտ յաղթական
ճանապարհին, որի հետ է միշտ, որի մասին դատում,
քարզում է, որին յաճախ դատապարտում, նշատակում
է, բայց և որին ամենից շատ խօսեցնում, լսում է՝ պատ-
մական անցեալ և ներկայ իրականութեան մէջ. հաս-
կանալ և հասկացնել է ուղում։

Լավրօվի պատմափիլիսոփայական որոնութիւնների առար-
կան է դա, — մարդկան հատութեան մտածող մտա-
ծողութեան առանցքը. Նրա սիստեմի ելակետը և նպա-
տակակետը միաժամանակ իր պատմական արժէքը
գիտակցող մարդկային անձնաւորութիւնն է դա. ոչ թէ
հասարակութիւնից կտրւած, նրանից անկախ և մեկու-
սացած Ռոբինզոնը, այլ հասարակութեան մէջ, նրա հետ
ապրող, նրան ապրեցնող զգացողը մտածող և գործող
մարդկան հատութեան գրաւել, որը պատմական պրօցէսի ո՞կենդանի
օրեկտը և սուբեկտուն է միաժամանակ (առարկան և
ննթական), որի շուրջը պատմութիւնն է դարձել, որը
իր շուրջը պատմութիւնն է դարձել ո՞կենդանը ունինք

*) Պատմառաւորականութիւն.

մը առջև բոլորովին որոշ զարգացման միա կ բէալ գործօնը՝ մարդանհատը, որը իր սեփական ուժերի չափը և նրանց մատչելի գործողութիւնները ինքն է որոշում՝ — ասում Լավրով բառացի։ Մի բէալիստ մտածողի համար հասարակաւումական ընթացումի մէջ ամենից առաջ չօշափելի բէալ մեծութիւններն են հաշւի գալիս. դրանք են նրա աշխարհահայեցքի հիմունքները խարսխում։ Խսկ ողատմական նամակներին հեղինակը բացի մտածողութեան դրական, իրայատուկ բէալիզմից, միաժամանակ զաւակն էր բազմաժողովուրդ այն երկրի և բազմակնճիռ այն ժամանակների, որտեղ և երբ մի համար կամ մի քանի անհատական կամքեր տասնեւակ միջիօնաւորների ճակատագրի համար այնքան մեծարժէք հետեւաներ են ունեցել. որտեղ ժողովը դային հսկայական մի զանգւած դարեր շարունակ ու մեծ համրին արատաւոր համակերպման լուծը շինքին, լուռ մարտիրոսութեան մի զարմանալի օրինակ է տւել աշխարհին։

Սուբեկտիվ սօցիօգիայի (ընկերաբանութեան) հիմնաւորութեան պատմութեան մէջ սուբեկտիվ մթօգի կիրարկողը պատմափիլիսոփայական խրթին պրօլեմների վերլուծութերի ժամանակ — որոնք նոյնքան գործնական արժէքի էին, որքան և տեսական մտայլացութերի մի սուբեկտիվ աղբիւր — ունեցաւ իր աչքի առջև ուսւաս կա ան ի բականութիւնը ըստ այս հանգամանքը մի պատմափիլիսոփայական սիստեմի համար կարող են խիստ ճակատագրական հաշւել և հաշւել են բայց մը կարծիքով, դա մեծ առաքինութիւն էր մի կարող գլխի համար, որի տեսական և գործնական որոշների գերագոյն կանոնը երկու բառի մէջ է խտացւած. ոգիտակցական վերաբերում դէպի շրջապատը՝ թէ դա ցոյց է տալիս մի կողմից, թէ սուբեկտիվ մօմնաը որքան խոշոր գեր կարող էր կատարել Լավրովի պատմափիլիսոփայութեան մէջ, ապա միւս կողմից փաստում է, թէ այդ սուբեկտիվ մօմնաը պատմական որքան խոր ճշմարտութիւն, որքան բէալիզմ է պարունակում իր մէջ. թէ կառուցւող սիստեմը որքան մօտ է կանգնած կեանքին։

Անշուշ, ուսւասկան իրականութիւնը միայնակ անկարող էր լիներ մատակարարել պատմափիլիսոփայական մի ընդարձակ սիստեմի հիմնական սկզբունքները. այդպիսի մի սիստեմ իր մարսողութեան շրջանի մէջ պիտի առնէ պատմական ամբողջական պրօցեսը ընդհանուր և պարփակուն արտայայտութիւններով։ Եւ Լավրով սկզբից և եթէ մի միակողմանիութիւն փոխարինած էր լիներ միւսով, եթէ սահմանափակւեր լուսասատանի պատմափիլիսոփայական նեղ իրականութեամբ։ Բայց նա իր մտաշրջանի մէջ է առնում հին և նոր պատմութեան ամբողջ բովանդակութիւնը, հին և նոր պատմակոն ժողովուրդների հետ և մենք անգամ կենդանի անհատն է, որ պատմական բազմազան ճակատագիրների

մէջ ծառանում է Լավրովի առաջ պահանջում նրանից իր գերը որոշել, իր ուժերի սահմանները գծել, իր գործողութիւնների գնահատումը տալ

Լավրով, ի հարկէ, անհատի պրօրեմ չստեղծեց. բայց նա առաջիններից էր, որ պատմական անհատի ընդհանրապէս արհամարհւած պրօրեմը գիտականորէն և սիստեմատիկօրէն բարձրացրեց արժանաւոր պատմանդանի վրայ։ Մի կարգ կոլեկտիվիստ (համայնտպաշտ) պատմաբանների և պատմափիլիսոփանների կողմից գրեթէ խպառ նսեմացւած, բնազմանցաբան և գօգմատիկ մտածողների կողմից վտարւած, որացարձակ գաղափարներից, իդէալների և հօգինների ու ոգինների մղձաւանջի տակ ձզմւած, նիւթապաշտ և ծայրայեղօրէն առարկայապաշտ սօցիօգների ձեռքով ընկերաբանութեան սահմաններից կամայականորէն վանդւած, հասարակական մարմինն ստրուկ դարձրած պատմուկ կան անհատը, այս՛, կարելի է ասել, առաջին անգամն էր այնքան խնամքոտ և խորիմաստ հօգատարութեան արժանանում Ուսւասանի մէջ՝ Լավրովի կողմից։

Եւ խօսքը միայն մեծ մարդկանց, հերոսական մասն երի և հրամանատարների մասին չեր, որոնց ժեստերով ումանք հակւած են մեկնաբանելու պատմութեան ամբողջը ընկերութեան սօցիօգիայի ըննութեան նիւթ պէտք է գառնայ նա՝ որ ոհեղինական որ՝ խարազաններով դուրս էր բշւել այդ գիտութեան սահմաններից։

Աշխատանքը փոքր չեր Եւ ոչ էլ ընդդիմագրական ուժը նախկին մտածելակերպի չնչին Հարկաւոր էր գաղափարի գերին՝ գաղափարի տէրը դարձնել ոհասարակական մարմին հրամանատարութեան ենթակայան անհատը պէտք էր դարձնել հրամանատար, կամ գէթնա և հրամանատար այդ հասարակական մարմին ընկերաբանութեան (սօցիօգիայի) ըննութեան նիւթ պէտք է գառնայ նա՝ որ ոհեղինական որ՝ խարազաններով դուրս էր բշւել այդ գիտութեան սահմաններից։

Որքան և գժւարին էր խնդիրը, որքան և նրա լուծման մէկ կամ միւս մանրամասնութիւններ խուսափող գրչի ծայրի մէջ սեղմէելուց, բայց և այնպէս Լավրովը մօտենում է նիւթին գիտական-մարտական տրամադրութեամբ, — հայրժիշտութեամբ! — խոչընդուները յաղթահամելու անյօդդողդ վատահութեամբ։

Ո՞րն է անհատի հասարակագիտական աւելի ճիշտ՝ պատմահասարակական որակումը. ի՞նչ է նրա գերը պատմական պրօցէսի մէջ Լավրով այս հարցն է ուզում վերլուծել, որովհետեւ այդ իսկ պատմական պրօցէսը հասկանալու համար անհրաժեշտ է նախ իրեն անհատին հասկանալ հասարակութեան մէջ — անհատին՝ որ ոմիակ իրական կրողն է՝ այդ պրօցէսի։

Բայց կայ ծանօթ գժւարութիւնը. հին, անջող վէճը գետերմինիզմի (կանխաւորոշման տեսակէտի) և կամքի ազատութեան (հակառակ տեսակէտի) միջն. մի վէճ որին պատմափիլիսոփայական մաքի մակընթացութիւնը իր յաղթական հսանքի մէջ յաճախ է ճակատով զարնել, որպէս մի կուռ ապառաժի, կրկին կծկւել յետ բաշւել.

նոյնքան ևս մի վարանոտ տեղատութեան փոխելով այդ շարժումը, որի մօտով անկարելի է անցնել, առանց նրան լրջօրէն հաշլի տանելու, վազ թէ ուշ նրան վերադառնալու կարիքն զգալու, պատմափիլիսոփայական մաքի նոր մակընթացութեան ալիբները անհատին հասցնելու համար՝ հարկաւոր է նախ այդ պատաժը նւածել, նրան մէջտեղից դուրս բերել, այդտեղ է, որ անհատի ազատութեան մեծ խնդիրն է կարծրացած. այդ նւածումով է միայն, որ պատմափիլիսոփայութիւնը իր անօրոշ վիճակից կարող է դուրս գալ և դառնալ գիտութիւն:

Արդարւէ եթէ ամեն ինչ նախորոշւած է անհատի առաջ, եթէ անհատը իր գործողութիւնների և մտածումների մէջ սոսկ ի կատար է ածում այն, ինչ որ մերենօրէն թելադրում է նրան մեքանիկական մի կազմակերպութիւն, որ իր էութիւնն է. կամ թէ նման մեքանիկական մի ուժից, որ դուրսն է գտնւում, պապարզ է, այդ պարագայում որևէ պատմափիլիսոփայութիւն ոչ իմաստ կունենար, ոչ էլ գոյութեան իրաւունքը. Այն ժամանակ անհնարին կը լինէր պատմական բովանդակ պրօցէսը ընդգրկել մի հատիկ ընդհանրացնող ֆօրմուլով (ձեւակերպում), անհնարին կը լինէր խոացնել պատմութեան ամբողջ պարունակութիւնը մի պարզ ամփոփ մէկնարանութեան մէջ:

Եւ ընդհակառակը, եթէ մարդ-անհատի ստոնձարձակ կամըն է իշխում ամեն տեղ և ամեն գէպում. եթէ այդ կամըն է գերագոյն օրէնստուն ամեն մի մեծ կամ փոքր պրօցէսի և ժամանակաշրջանի մէջ. եթէ անհատը միայն մղիչ է և ոչ նաև մզւող. եթէ նա սոսկ հրամայող է և ոչ միաժամանակ հրամայող. տևող և ոչ նաև ստացող. եթէ նա միշտ պատճառ է և երբէք հետուանք, ապա դրանով իսկ խախուած են հիմքերը մի գիտութեան, որ պատմական պրօցէսի որոշ կանոնաշափութիւնները, տենդենցները կամ „օրէնքները“ կոչուած է փաստելու. Այն ժամանակ պատմական ամբողջ պրօցէսը կամ անհասկանալի է և անլուծելի և կամ ամենապարզ կերպով սկզբից և եթ հասկացւած և լուծւած է: Քմահաճո՞ք: Պատահականութիւն: Ինքնիշխան կամք—և կամ ինչ կուզէք—ահա՝ դրանք կը լինէին այն ժամանակ պատմական ըմբռնողութեան ամենանոր „սկզբունքը“, իմաստը, դադունիքը. եթէ միայն այդ գէպում գեռ կայ պատմութիւն, կայ պատմական իմաստ, կայ գալանիքը. Այն ժամանակ ամբողջ պատմութիւնը կը լինէր կամ „մարիօնետների խաղ“—ինչպէս կ'արտայատէր գէորգ Զիմմել—և կամ բացարձակ ուժերի ու էակների յայտնագործութեանց կամակատար, ինչպէս կամենում են թէօգ-պատմաբանները և անուղղելի գաղափարամոլները:

Պատմափիլիսոփայական գիտական ըմբռնողութեան համար լուրջ նկատումի արժանի մի վէճ է դա, անշուշտ, այն էլ մէկից աւելի տեսակէտներով: Եւ իզուր չէ, որ ոքա-

զաքակրթութեան պատմութեան աշխարհահոչակ հեղինակ՝ Քօկլ իր գլուխ գործոցի մէջ ամենից առաջ կամքի ազատութեան խնդրով է զբաղւում:

Լավրօվի համար ևս փիլիսոփայական այդ վէճի մէջ իիստ որոշակի դիրք բռնելը, այդ վէճին իր օրինական սահմանները ցոյց տալը պատմափիլիսոփայական ամեն մի ամրողջական մտաշէնքի նախապայմաններից է: Եւ նա մօտենում է վէճին՝ խնդրի լրջութեանը միանգամայն գիտակ, պատրաստակամութեամբ և կորովով:

11. Որպէս պօզիտիվիստ, գրապաշտ մտքի ամուր հոգի վրայ կանգնած մտածող, նա ծանրանում է նախ պատմութեան նախապատրաստաւելու վրայ:

Խրկրաբանական, Փիզիկական և բիմիական պրօցէսների միջոցով, հարիւրաւոր, գուցէ և հարիւր հազարաւոր գարերի ընթացքում կազմակերպել է տիեզերական միջավայրը, որը պատմութեան հնարաւորութիւնն է ստեղծել, նրա հիմքերը դրել Երբ է արդեօք տիեզերական բնաշրջումը օրգանական (գործարանաւոր) կեանքի սկիզբը դրել Երբ և ինչպէս է տիեզերական և օրգանական էւլիլիցիան մարդկային գանգի, նրա գիտակցութեան մէջ հոսել չգիտենք, անյայտ է մեզ կը մնայ միշտ, հաւանօրէն: *Ignoramus et ignorabimus.*

Որպէս իրողութիւն, մենք ընդունում ենք, որ մեր մոլորակը իր գոյութեան մի որոշ վայրկեանում, մի շարք բարդ պրօցէսների միջոցով երեւան է բերել այն, ինչ որ մենք անւանում ենք կեանքի սկզբնաւորութիւն: Մենք գիտենք միայն—գիտական մի ձանաչողութիւնը և կառագալ, պատճառուրական մտածողութիւնը թոյլ է տալիս այդ—որ տրւած այդ սկզբնաւորումը բամհաճույնութիւնը չէ ունեցել իր մէջ: Մենք գիտենք նոյնպէս, որ կեանքի սկզբնաւորումը յետոյ, ձիգ դարերի անհատնում էւլիլիցիայի ընթացքում, օրգանիզմների մէջ երբ և իցե ծայր են տւել և զարգացել գիտական գուշակութեան տարբեր ձեւերը: Գիտենք, վերջապէս, որ այդ գիտակցութիւնը, իբրև հոգեկան և հոգեբանական մի երեսոյթ, անկարելի է վերածել մարդկային անխառն, պարզ օրէնքների: Կայ մի բան, որ մնում է անվերածելի: մի բան՝ որ իզուր բացատրել են ճգնում աստւածաբանները, մետաֆիզիկները, խորհրդապաշտ միասիկները:

Մեր գիտական մտածողութիւնը հարկադրում է մեզ ընդունել, որ տիեզերական և օրգանական միջավայրը ստեղծել է մի անխուսափելի, ձակատագրական նախորշումով:

Այդ նոյն բացարձակ գետերմինիզմը (պատճառուրականութիւնը), որ ծնունդ է միայն տիեզերական օրէնքների, մարդու նախահօր հօրիզոնական մէջքը ուղղվ գէպի վեր, գարձրեց ուղղահայեաց, գարձնելով նրան միաժամանակ գերազանցը, բարձրագոյնը օրգանական աշխարհի բոլոր էակների մէջ: Բայց նոյն այդ գետերը

մինիզմը մտածողութեան կենտրօնական օրդանով օժ-
տւած մարդկենդանու գիտակցութեան մէջ յարոյց
նպատակները գիտակցութեան մէջ յարոյց իրազորժման
համար շրջապատի տարրերը շահագործելու անհրա-
ժեշտութիւնը։ Այդ անհրաժեշտութիւնը գարձաւ այլ
ևս մարդկային բնոյթի անհրաժեշտութիւնը շահագոր-
ժման համար է։ Մարդկային գիտակցութիւնը միանգում
կոյք, ճակատագրական կանխորշումով առաջացած, նպա-
տակների և միջոցների միջավայրում իր էւլիցիայի մէջ
ստացաւ ոմիտայն իրեն յատուկ յատկանիշներ,
որոց սառողոգելիներ։ Տիեզերական բավանդակ էւլո-
լիցիայի ծոցում կազմաւորւած սուբ'եկտիվ աշխա-
խար հը զգացողութիւնների, պատկերացումների, հաս-
կացողութիւնների, կրքերի և կամային մղումների ուրոյն
աշխարհը նոյնպիսի անվիճելի իրողութիւն է գարձել
այժմ, ինչպէս մարմինների ձգողական ուժը կամ լու-
սային երեւոյթների փոփոխութիւնները։

Կենդանական աշխարհի զարգացման պրօցեսը ստեղծագործել է մարդկային անձնաւորութիւններ, որոնք ընդունակ են իրենց համար ըմբռնողութեան և գիտութեան հարցեր դնելու և դրանց լուծմանը ձգտելու Այդ գիտական հարցերը նոյնպիսի անխուսափելիութեամբ արեւել են օրենքափ աշխարհի համար, ուր տիրապետողը պատճեն է գետերմինիզմի հողի վրայ — որպիսի անհրաժեշտութեամբ արեւել են նաև սուբ'եկտիվ աշխարհի իրողութիւնների համար, ուր հիմնական երկույթները կամաց ին գործողութիւններն են՝ մասին և յուզումային (աֆֆեկտիվ) պրօցեսների միջոցով մշակւած։ Դա նպատակների և միջոցների աշխարհն է, որը նման բռլոր մնացած սուբ'եկտիվ երեսութիւններին, գիտականորեն պիտի հետազոտի ոչ միայն որպէս մեթոնիկական, քիմիական և կենսաբանական պրօցեսների անհրաժեշտ հետևանք՝ ենթակայ մի անպայման գետերմինիզմի, այլ և որպէս սուբ'եկտիվ ազդումների ենթակայ առանձնայացկութիւնների մի հիւսածու

Ինչ ազբիւրներ էլ ունենալու լինին նպատակների և
միջոցների մասին ունեցած մեր պատկերացումները, մենք
չենք կարող չ'ընդունել այդ բոլորը, որպէս մեր սուրբեկ-
տիվ աշխարհի փաստեր: Եթէ անդամ այդ կատեգո-
րիաները նոյնպիսի ենթակայական պատրանքներ լինենին,
ինչպէս արեգակի ինքնուրոյն շարժումը հօրիզոնի վրա,
ներդաշնակութեան կամ աններդաշնակութեան տպա-
տրութիւնը այնտեղ որտեղ միայն օդի բազմապիսի
տատանումները տեղի ունին, մենք ստիպւած ենք այդ
կատեգորիաները ուսումնասիրելու օգտի, հրապոյրի և
պարտաւորութիւնների տեսակէաներից:

Առաջ բերած այս մտաշարքերից ակնյայտ է, որ
Լավրովի համար պատճառափիլխոսիայական ըրջանում, այ-
սինքն նպատակների և միջացների աշխարհում հարցը
բնաւ դետերմինիզմի և ինդետերմինիզմի (կամքի ազա-

տութեան) ընդունման կամ մերժումի մասին չէ. Նա չի
մերժում տիեզերական երևոյթների գետերմինիզմը, ոչ
էլ մեր կամային գործողութիւնների նախնականութիւնը»:
Եւ նա որոշակի շեշտելով այս հանգամանքը, յայտա-
բարում է սական, որ ամենք գտնուում ենք այն շրջա-
նում, որտեղ երևոյթների գիտական հետազոտու-
թեան համար ոչ մի օգտաշահ հետևանքի չենք կարող
հասնել, իմէ այդ ընդհանուր փիլիսոփայական հասկա-
ցողութիւնը կիրարկենք: Դեռ երմինի մի միջու-
ցով մենք անկարող ենք ձանաչել այս այլ այլ այն
առը երբութիւնը, որ կայ մեր գիտական թիւն մէջ՝
ցութեան մէջ՝ օգտաւետ և վնասակար,
բարձր և ցածր նպատակի միջեւ: Նպա-
տակայաբար մարդ և անմիտ միջոցների
միջև: Մարդանհատի մէջ կայ նպատակների և մի-
ջոցների համեմատ գործելու մղում: Նա գործում է,
նպատակներ է գնում և միջոցներ ընտրում անկախ-
նրանից, թէ արդեօք դրսում՝ օքնեկտիվ աշխարհի մէջ,
մեքանիկական դետերմինիզմ գոյութիւն ունի, թէ ոչ
նա գործում է որպէս մտածողութեամբ և կարով
սժուած էակ: Բայց արձակ ազատութեան մասին,
ի հարկէ, խօսք լինել չի կարող մի այդպիսի ազատու-
թիւն գոյութիւն ունենալ չի կարող հենց այն պատ-
ճառով, որ ամեն անգամ, երբ հարցը մարդկային անձ-
նաւորութեան մասին է, անհրաժեշտօրէն պէտք է տար-
բերել սուբ'եկտիվ աշխարհը օքնեկտիվ աշխարհից: Աեր-
ջինս արաքսուստ արդէն չափ է գնում այդ
ազատութեան:

ՄՆԱՐ

(Կը շարունակէ)

q u s u q u v

Դ Ա Խ Ա Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ո

III

Բնակուուն նախատպիր. — Անեղը և նօրդան. — Խամսարած և Երկարործ ժողովութենք. — Քարառութիւն և նախակըսութիւն. — Աշխարհակալող կարաւանը և իր պետ. — Յեղի առանձնայակարիքիւններ. — Զույգ դեպի Հայուսան և Փոքր Աստ. — Վետրիմբ' ցեղի նայելին. — Ջիւրական աւարք գերիշող. — «Զույգ բնապէտութեան» սիստար. — Սօցիալական բոլլ մերսութեան. — Ազնաւականութեան բացակայութիւնը և նեւեաներ. — Պարագիտիզմ և ամուլտոթիւն. —

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆԻԱյի ՂԱՅՆԱԺԱւԱԼ ստեղն եւ
ըռում է, որ պիտի փնտրել կորիզը, Նախանիւթը այն
ուշագրաւ սօցիալական տիպարի — օսմանեան զանդ-
ւածի — որ դարեր առաջ աշխարհակուլ հեղեղի պէս
յորժանք տւեց դեպի Հայաստան ու Փոքր Ասիա, այն-
տեղից յաղթականօրէն սլացաւ դեպի Արևմուսք, դու-

դացրեց մի վայրկեան ամբողջ Եւրոպան, Քրիստոնէութիւնը, ապա վերստին գահավիժւեց իր ահարկու մեծութեան զէնիթից, յետ նահանջեց դէպի Քօնֆօր ու Անապօլիս, Հաստատւեց աշխարհագրական մի չքնաղ, առանձնաշնորհեալ միջավայրում, ուր չնայեած դարաւոր շփումներին աւելի բարձր, քաղաքակիրթ ցեղերի հետ, չնայեած շարունակական, խոռն, բռնի ամուսնութիւններին մեաց միշտ նոյն յետագեմ տիպարը, նոյն յաւիտեան անջափահասը բաղաքական և կուլտուրական առավելութից, ըմբոսա հանդէպ արդիւնաբերող արգասաւոր աշխատանքի, ծոյլ ու իներտ համաշխարհային պրօգրէսի ճանապարհին, վարժւած միայն հրամայելու և հարստահարելու, բայց անվարժ՝ արտադրելու, ստեղծագործելու, և մանաւանդ կառավարելու...

Այստեղ, Ալտայի հողմակոծ բարձունքներում է որ կազմւել են նրա առաջին ասպատակող կարաւանները. այնտեղ, իր նախնական որրանի մէջ է, որ նա ստացել է իր գրական և բացասական գծերը. այստեղից, այն հեռաւոր և լայնարձակ հօրիզոններից է, որ սահել են մարդկային ամենամեծ հեղեղները—հոների, մօնզօների, թաթարների, սեղզիւկների—որ անցել են հրով ու սրով հսկայական տարածութիւններ, կտակելով սերունդներին գորհուրանքի անլուր էջեր։

Որբա՞ն մեծ է բնական, ֆիզիկական ազգական գործ ու կարելի դերը, որբա՞ն ուժեղ և վճռական է այն վաղեմի ժամանակներում՝ աշխարհագրական միջավայրի ազդեցութիւնը մարդկային համախմբութիւնների վրայ...

Բնութիւնն ինքն է կռել ու դարբնել ցեղի յատուկ նկարագիրը, կարելի է տաել՝ ճակատագիրը։

Խաշնարած, թափառական հօրդաներ էին։ Միջազարդ աշխատակեած էր հրամայում։ Սաեւ պառակալորէն դնում էր իր կնիքը իր հիւրընկալած մարդկութեան սօցիալական կենցաղի վրայ Ստեղը, խոտի անեղը տարածութիւններով, որոշում էր բնակիչների անհրաժեշտ պարապմունքը, բնաւորութիւնը, խոռնւածքը։ Ստեղը ի վերջոյ խլացրեց նրանց մէջ դժւարին, ճիգառատ աշխատանքի տենչը և զարգացրեց աւարելու, յափշտակելու, ուրիշների վաստակով ապրելու ցանկութիւնը, խթանեց ռազմական, աշխարհակալող բնազդը...

Անծայրածիր ու խոտաւէտ լեռնադաշտ՝ ձիերի, ոչխարների անհաշիւ հօտերով։ Եւ նրանց հետ՝ ցիր ու ցան մարդկային նախիրներ՝ կիսավայրենի, նահապետական կենցաղով։ Խոտը—մշտնջենաւոր և անսպառ ճարակ հօտերի համար։ Զին—սունդի նոյնքան առատ մի աղբիւր մարդկանց համար՝ իր արտադրած կաթով, կումիսով։ Զին—մանաւանդ, հաղորդակցութեան ու շարժման մի գերազանց գործիք, մի սբանչելի լոկոմոտիվ։

Պէտք չկար՝ ոչ գետինը հերկելու, ոչ անտառներ կարտելու, ոչ ճահիճներ մաքրելու, ոչ ճամբաներ հարթելու և շտկելու։ Ամեն բան պատրաստ էր մայրենութեան ծոցում, պատրաստ էին և ճամբաները։

Ստեղը — ամենուրեք հարթ ու հաւաք, ամենուրեք ճանապարհ ու արօտավայրու

Հօրդան աճում է, — աճում է և խաշինքը Պէտք են նոր արօտատեղեր, նոր սնունդ ու հարստութիւն եւ կարաւանը շարժում է միշտ դէպի առաջ, շարժում է մի խիզախի առաջնորդութեամբ դէպի հեռու և անծանօթ հօրիզոնները... նա մշտական շարժման մէջ է՝ նոր հողեր գրաւելու, նոր արկածներ փնտրելու ժամանակութեամբ։ Տնտեսական կարիքը միակ շարժիչպատճուր չէ։ Որբա՞ն ուժեղ է գեռ այն հեռաւոր ըրջաններում մարդկանց հրամանատար անհատների մէջ՝ ներքին, հոգերանական մղումը, իշխելու, տիր ապերելու աշեղը... ինչեղ չ'արին այդ մի բանի մօնզօլատիպ հերոսները — մի Ատահիւ, մի Զինգիզ խան, մի Լանկ-Թամուր — իրենց անլագ և փառատենչ ախորժակներով, իրենց աշեղ, աշխարհասասան կամքի ուժով... Յորձանքը առնում է իր յարաճուն ալիքների մէջ նստակեաց, խազաղ, երկրագործ ժողովուրդներին, որոնք մարզւած խաղաղասեր առաքինութիւնների մէջ անկարող են ցոյց տալ երկարատեղ գիմագրութիւնն եւ խաշնարած, թափառական ցեղերը նոր հողերի ու շարժական գոյբերի հետ՝ նւաճում են նաև մարդկան անց հպատակեցնում, ստրկացնում... եւ կարաւանը նորէն շարժում է։

Յորձանքը առնում է իր յարաճուն ալիքների մէջ նստակեաց, խազաղ, երկրագործ ժողովուրդներին, որոնք մարզւած խաղաղասեր առաքինութիւնների մէջ անկարող են ցոյց տալ երկարատեղ գիմագրութիւնն եւ խաշնարած, թափառական ցեղերը նոր հողերի ու շարժական գոյբերի հետ՝ նւաճում են նաև մարդկան անց հպատակեցնում, ստրկացնում... եւ կարաւանը նորէն շարժում է։

Երկու տարր — ասպատակող հօրդայի մէջ Մինը ազատ, միւսը ստրուկ Մինը՝ պատերազմող և հրամայող, միւսը նւաստ ծառայող, բոլոր սեւ չարքաշ աշխատանքների կատարող։ Տիրապետող, պատերազմիկ տարրը իսկզբանէ եսորչում էր այդ չարքաշ և ճիգուտ աշխատանքից, արդիւնական առաջարկային, հողերի, մարդերի, այդիների մշակումից, ապա և աւելի ուշ՝ առեւտրից ու արդիւնաբերութիւնից։ Նա խորչում էր ոչ միայն այն պատճառի, որ անընդունակ էր յարատել, արդիւնագործ ճիգերի, այլ և որովհետեւ համարում էր այն՝ անպատճիւր առ գործ, ստրկի գործ... Ուազմիկ ցեղը վաղուց ի վեր սովորեց արհամարհել գժւարին, ստեղծագործող աշխատանքը — իբրև մի բան, որ ստոր էր իր, ուազմիկի, արժանապատւութիւնից — և ստանձնեց սոսկ առաջնորդի, հրամանատարի գերը, ուղղեց իր ճիգերը գէպի բօլորին այլ տեսակի մարզանքներ, դէպի կորիւ ու նւաճում, յափշտակութիւնն և կեղերում...

Այդպէս ահա առաջացաւ այն հաւաքական պարագիտիզմը — հացկատակային տրամադրութիւնը — որի մասին ակնարկեցինք մեր առաջին գլխի մէջ։

Այդ աղէտաւոր տրամադրութեամբ էր, որ թիւրքերը եկան հաստատեցին Հայաստանում։

Այդ նոյն աւերիչ հակումներով է՝ որ անյիշատակ ժամանակից ի վեր հաստատելու է նոյն աշխարհագրական միջավայրում մի այլ նօմադ, խաշնարած հօրդաքիւր գետը...

Ի՞նչ էր նա իր պատմութեան արշալոյսին:
Ամենապերճախօս վկայութիւնը տալիս են ցեղի լե-
գենդաները, ոռասպելները՝ Կրանցից մէկի համաձայն՝
թիւքերի

„Նահապետ Օխուղը չի տւել իր զաւակներին ոչ գութան
և ոչ դիբը, այլ միայն նետ և աղեղ՝... Դրանով իսկ նահա-
պետը սրոցադրել է իր սերունդների ապագան:

Նոյն լեգենդան ներկայացնում է թիւրքերին, „որպէս
ռազմիկ, աւերիշ և թալանչի մի ժողովուրդ... Երեք առանձ
նայատակ գծեր, որ գտնում ենք և յետնորդների մէջ և
որ հազիւ թէ մեզմացած են կատարւած առաջադիմու-
թեամբ“ *):

Մարզւած ձիարշաւի և ռազմական արւեստի մէջ, վարժուած դեռ մանուկ հասակից սրի, նետի և աղեղի ռողջածութիւնն, ծառաւ առնական թոքի ընկածի և առ-

^{*)} Բառացի մի թիւրք գրողից. H. Ganem, „Les Sultans Ottomans“, էջ 8—9.

կածների, ասպատակութեան ու աւարառութեան, անվախ և բաջասիրտ, արհամարհող կեանքի, պատրի ու սեփականութեան, արհամարհող անգամ իր սեփական գոյութեան, սակաւապէտ, ժուժկալ և ուժեղ փիզիկապէս, զինւած, մի խօսքով, աշխարհակալող ցեղերի ըուր անհրաժեշտ առաբինութիւններով՝ թիւրբական նախկին կորիգը թաւալւել է լսիայի անծայր դաշտավայրերում, Ստեղի մերժ ժպտուն, կանոչազարդ, մերժ դաժան և բբաշունչ անհունութեան մէջ, թաւալւել է աստիճանաբար աճելով ու զօրանալով, նոր հողեր գրաւելով ու աւերելով, նոր ցեղեր ստորագրելով և իրեն հետ բարչ տալով, հասել է ի վերջոյ հսկայական չափերի, գրոհ է տեղել — խոտի, արօտների ճանապարհով — միշտ հեռու, դէպի արևմուտք, անցել է գահավիժւող մրրկի պէս, առանց որևէ հետք, յուշարձան թողնելու իր ետքից, առանց հիմնել կարողանալու այդ ահագին ճանապարհի վրայ մի տեսական պետութիւն, մի շատ թէ բիշ հաստատուն քաղաքական կազմակերպութիւն եւ, սակայն, նա չէր բնաւ ներկայացնում անկարգ, անիշխան, քաօսային մի խաժամուժ... եղել են, անտարակոյս, այդ ճարակող հօրդայի մէջ քաղաքական կազմակերպութեան սաղմեր Ո՞վ էր ցեղի առաջնորդոր...

Սօցիօգիան մի ընդհանուր և որոշ պատասխան ունի
բոլոր նման խաշնաբած ու պատերազմիկ ցեղերի հան-
դեպ: Շատ վաղաժամ, զանգվածներից առաջ է գալիս
մի նշանաւոր անհատ, օժտւած արտակարգ յատկու-
թիւններով, մի կախարդ, աւելի յաճախ մի հերոս, մի
տարիքուտ, փորձւած, հեղինակաւոր կտրիճ, մի յանդուգն,
արիասիրու ուազմիկ, որ գիւրութեամբ ենթարկում է
յարդկային երամը իր հմայքին ու կամքին... Աշխարհա-
կալող ցեղի չեֆը — աշխարհակալող կարաւանի
առաջնորդնեւ, հրամանատարը: Ամենից կտրիճը
և ամենից շրջահայեցը: Միանգամայն ու զեցոյց,
ովալոդ՝ և զինուրական հրամանատար:

Նա կը մեծ անայ և կը զօրանայ յաղթութիւնների
և նւաճումների հետ։ Նա կը խմբէ ժամանակով իր
շուրջը բազմաթիւ օգնականներ, ենթաչէֆեր, մի ամ-
բողջ զինւորական մարմին, դասակարգ, որից և կը բղնէ
հետզիետէ մի տեսակ կառավարութիւն, պետութիւն։
Նա կը յենւի այդ սպայակոյտ-դաստկարգի վրայ (սպա-
գայի են իչ եր ի ների)՝ մշտնչենապէս հլու հնա-
զանդ պահելու համար զանգւածները, նիւթելու հա-
մար նորանոր պատերազմներ և նւաճումներ։ Նա կը
կենտրօնացնէ հետզիետէ իր անձի մէջ կառավարելու-
դատելու և պատժելու պաշտօնները։ Նա կը դառնար
ապագայում բոլոր գրաւած հողերի և ցեղերի միա-
հեծան սեփականատէր և միլիօնաւոր հօրդայի ճակա-
տագրի տնօրինող։

Միահեծան մի զօրավար, բացարձակ լիազօրութիւն-ներով սպառազինած մի շէֆ, որի հանդէպ զանգւած-ները պարտաւոր են ցուց տալու կուր, անապահն, ան-

մռունչ հնազանդութիւն... Ապագայ սուլթանն է դա և ապագայ սուլթան բռնապետութեան սաղմն է, որ գրւում է արշաւանքների մեծ ճամփարակին և համբու վրայ, նախքան հասնելը Փոքր Ասիային և Բօսֆորին...

Եւ յայտնի է, հասարակական գիտութիւնը վկայում է, որ գոյութեան պայքարի մէջ այդ բացարձակ, արսոլիւ ըռանապետութիւնը եղել է ազդութեան, յաղթանակի ամենազլաւոր պայմաններից մին: Ու հասարակութիւնների գոյութեան կուռում—ասում է Սպենսեր — հաւաքար պայմանների մէջ յաղթանակող եղել են նրանք, որ ենթարկի ել են ամենախիստ, ամենազօրեաւոր հպատական կուռում է նրենց շեֆերին, թագաւորներին... Քանի աւելի ուժեղ է եղել զուտ մեքենական գիսցիպլինը կարգապահութիւնը, այնքան աւելի ուժեղ է եղել — այն հեռաւոր ժամանակներում — և յաղթելու շանսը:

Աւելին կայ: Բացարձակ բռնապետութիւնը եղել է ոչ միայն սօցիալական անհրաժեշտութիւն, այլ և մի քայլ գեպի առաջ պրօգրեսի, առաջադիմութեան մի հանդրւան. և նոյնիսկ, իբրև ժամանակաւոր մի հաստատութիւն, նա որոշ չափով խթանել է բազարակրթութիւնը: Այդպէս է եղել ընդհանր ապատութեան մէջ: Մասնաւորապէս Թիւրքիոյ ժամին — ինչպէս կը պարզենք — հարկ է խօսել վորք ինչ վերապահութեամբ...

Պատերազմը դառնալով մշտնջենական՝ առաջնորդն ևս, որ սկզբներում ընտրելի էր և փոփոխելի համայնքի կողմից, դառնում է հետզհետէ մշտագոյ, անփոփոխելի: Նրա իշխանութիւնը ի վերջոյ դառնում է ժամանակական: Այդ հանդամանքին զօրաւորապէս նպաստում է կը ո՞նք, նախնական հաւատալիքները, հերոսական մեռելների, նախնիքն երի պաշտամունքը:

Նրա զօրութեամբ՝ իշխող առաջնորդը — իբրև յաջորդմի հզօր ու պաշտամ հրամանատարի — հռչակում է, որպէս հաղորդակից հօր աստւածայի ին բնութեան և դրանով իսկ ստանում է անսահման լիազօրութիւններ... Սկզբներում ցեղի հրամանատարը հիմում էր իր ազդեցութիւնը սոսկ իր անձնական արժանաւորութիւնների վրայ — արիութեան, հմտութեան, փորձառութեան, մտաւոր կամ ֆիզիկական կարողութիւնների վրայ — այդ բնական առանձնայատկութիւններին՝ գերբնական յատկանիշներին:

Կրօնական հաւատալիքներն, այո՛, աւելի ևս ամրապնդեցին այդ անմռունչ հնազանդութիւնը շեֆերի հանդեպ: Եւ դա անցաւ ժառանգաբար, սերնդէ սերունդ, դարձաւ սովորոյթ, աւանդութիւն: Բոլոր նախնական համայնքների մէջ ահագին է սովորոյթ թիւ ու ժը, նւիրւագործւած սրբազան հաւատալիքներով, մեռելաստաւածների կամբով: Սովորոյթը, աւանդը ան-

գիր օրէնքն է այդ նախնական ցեղերի մէջ: Ինքը ընդհանուր հրամանատարը — աւելի ուշ՝ թագաւորը — նոյն սովորոյթի և աւանդութեան օրդանն է, նրանց հաւատատարիմ կամակատարը: և եթէ խիզախէ գէմ գնալ նրանց՝ դահազորկ կը լինի:

Այդպիսով իրօք մեռելներն են իշխողը և կառավարողը... Այդ տեսակ ներշնչութերով և այդ ոգով կը թիւ ու դաստիարակւեց անյիշտակ գարերից ի վեր մեզ տիրապետող ցեղը: Ոչ մի ուժ յետագայում, ոչ մի թարմարար, բարեխառնող հոսանք չ'եկաւ մեղմելու, փափկացնելու սովորոյթների այդ գրանիտիայ ապառաժը: Իսլամը աւելի ևս բաջալերեց մահացունչ ուստինը, աւելի ևս ուժ տւեց աւանդապաշտութեան այդ հսկայ ու այլասեռող պատուհամին: որի առթիւ խօսել ենք արդեն:

Այժմ հետևենք ցեղի արշաւին: Մեծ կարաւանը ուղղում է Թուրքեստանի և Իրանի գրայով գէպի Հայաստան և Փոքր Ասիա: Թարմ, կորովի և ռազմական ուժերի առջև, մին միւսի ետևից խոնարհում են այդ հիւծւած և ուժապառ երկիրները: Ընկնում է արաբական խալիֆութիւնը, ընկնում է նւաստացած, առաջադէմ Պարսկաստանը, շառաչումով խորտակում է և աշկեր Թիւրքանդը, ներքուստ մշակւած անվերջ երկպառակութիւններով, տարրալուծւած, ապականւած... Անվեհի ձիւուրները ամեն ինչ ոտնակոխ են անում իրենց յաղթական առաջնազացութեան մէջ, և... առաջին բայլերից իսկ մատնում են իրենց բնութեան ձակաստագրական արատը: Նրանք իշխում են իրենց նւաճած ցեղերի վրայ, առանց կարենալ կ առ ա վ ա ր ե լ ու ստորագրում են իրենցից բարձր, քաղաքակրթւած պարսիկներին, բայց ստիպւած են նրանց աջակցութեանը դիմելու՝ երկրի մէջ կարգ ու կանոն սահմանելու համար: Այդ գիծը յարատենց նրանց ամբողջ պատմութեան ընթացքում, երբեք նրանք չկարողացան կառավագաներին, սերա կապեր հաստատել նրանց հետ, այլ մնացին միշտ օտարներ, միշտ հիւրեր իրենց գրաւած երկիրների մէջ...

Երիտասարդ բանակը, յաղթանակներով քաջալերւած, առաջ գնաց — միշտ գէպի Արևմուտք — կոյր, տարերային մղումով, առանց նպատակի պարզ գիտակցութեան:

Մի նոր ուժ եկաւ արտակարգ թափ ու սլացք հաղորդելու գահավիժուղ հօրդաներին: Այնտեղ տրամադրի և պարսիկների միջավայրում, մահմեդականութեան հռչակաւոր որբանի մէջ ասիսական խաժամութը — մատներով հանդերձ իր կատարեալ անկարողութիւնը շինարար, կազմակերպիչ աշխատանքի ասպարեզում — գատակեց մի նոր խթան, որդեգրեց մի մեծ, հզօր գաղափար... Նա գրեց իսլամը:

Եւ... մի նոր աշխարհ ծնունդ առաւ երկու կարող ազգակներից — ցեղի և կը ո՞նի, թիւրքի և իսլամի — ամուսնութեամբ, դաշնակցութեամբ: L'alliance des

tures avec l'Islam enfanta un monde ¹⁾ — Ճիշտ է ասում Լավիս Այն ժամանակւայ ասիսկան և եւրոպական քաօսի ու համատարած անիշխանութեան մէջ՝ դա մի ահեղ ու պատկառելի ուժ էր, որ բարձրանում էր Հօրիզոնում:

Երկու ուժեղն էլ—ցեղ և կրօն—համանման տրամադրութիւններով օժտւած։ Երկուան էլ վառւած յարձակողական ախորժակներով, նւազելու, իշխելու, յերելու անդիմադրելի տենչով։ Եւ մինը միւսին օժանդակեց, ուժեղացրեց։ Խոլամը տագնապի մէջ էր և գրեթէ արդէն մարելու վրայ բաղաքականապէս սպառւել էին նրան կրող ցեղերը, սպառւել էին ամենից առաջ՝ արարները։ Նոր ցեղը թարմացրեց հին կրօնը, կեանք ու ոդի ներշնչեց և գարձրեց այն մի հզօր ու ծաւալուն պետութեան պաշտօնական հաւատամբ։

Եր հերթին, Խալամը աւելի ևս բորբոքեց Նւաճողական տեսնդը թիւրբերի մէջ. Նա ունեցաւ մի նոր, աշարկու և վրեժխնդիր ռահվիրա, յանձին Օ ս մ ա ն ի... այսօրւայ թիւրբական արբայտուհին և կայսրութեան հիմնադրի.

Մի արիւնոտ ռահվիրայ և մի արիւնոտ, աշխարհա-
դղորդ վրիժառութիւն, որվա՞նչ և յդ անւան հետ
կապւեց այսուհետեւ ասիական ստեպներից գուրս վիժած
հրաբխային հեղեղը, որ գնում էր պատժելու քրիստո-
նէութիւնը, քաւել տալու այն բոլոր նւաստացումներն
ու արհաւելիքները, որ բրիստոնեայ մարդկութիւնը պատ-
ճառել էր Խալամին՝ Խաչակրաց արշաւանք

Ցեղը արդէն եռում էր աշխարհակալութեան տես-
դով — կրօնը եկաւ հրահրելու այդ տեսդը, վառելու,
հիպոնօցելու մոլեգնուս զանգւածները վրէժինդրութեան
երկնային պատգամներով։ Նա եկաւ ազդարաբելու այդ
խոպան, նահապետական զանգւածներին, որ հաւատի
համար կը ընդ ու նահասակողները կ արժանանան Ամհ-
մեդի երանաւէտ դրախտին, որ այդ գալոց հրապուրիչ
դրախտի հանդէպ՝ ներկայ կեանքը երկրորդական, ար-
համարհելի արժէք ունի, որ ո՞ջագըն, սրբազն պա-
տերազմը յանուն կրօնի՝ գերագոյնն է փառքերից ու
պարտքերից։

Եւ սկսեց մի նոր, աւելի շքեղ ու շառաչուն դիւցա զնամեր տի դարաշընան, Օսմանը — մի անվեհեր ռազմիկ-Հրամանատար, մի յանդուգն ու խելացին կարաւան պետ քայլ առ քայլ նա առաջացաւ իր հազարաւոր ձիւորներով, առանց ուժեղ դիմադրութեան հանդիպելու նւաճեց Բիւզանդի հսկայ և փթառւն մարմին բեկորները (XIII դարի վերջերում), հասաւ մինչև Բրուսսաւ Յեանորդները շարունակեցին արշաւանքը, միշտ նոյն աջող, բարեբաստիկ հանգամանքներում, դրեթէ առանց դիմադրութեան հանդիպելու... մինչև հասան, Մաշհմեդ Ա-ի օրով, Կ.

Պօլիս (1453 թ.): Ապա մի թռիչք գեղի բալկան-ները —և ամբողջ արևելյան քրիստոնէութիւնը անցաւ Արհակին: Վերջապէս, նոյն ռազմական, անօրինակ խանդավառութեամբ, Ալաս' ու ԶՀա՛դ աղաղակելով նրանք հասան Ալի և նն այլ դռւոք... ուսկից, սակայն, հոս-սանքը մի յետագարձ եփանքով նահանջեց վերստին գեղի բալկանները:

Եւ հաստատեց օմանեան թագաւորութիւնը իր երկու կողերի վրայ, մի ճակատն ուղղած գէպի Ասիա, միւսը գէպի Եւրոպա:

Տիպար-պետութիւն։ Նա եղաւ ցեղի հարազատ պատշերը, Նրա ճշմարիտ հայելին, Նրա մտայնութեան ու արամագրութեան թարգմանը, արտայայտիչը, Նա թերեւս ասիական բռնապետութեան ամենամաքուր ձևն էր, ամենաանաղարտ տիպը Գուցե ոչ մի տեղ վեհապետի անձնիշխանութիւնը չէր հասել այնքան ահարկու չափերի, այն աստիճան սանձարձակութեան։

Մենք արդէն տւինք այդ տիպարի հիմնական առանձնայատկութիւնները և նրա ծագման պարագաները՝ վերը բերած ընկերաբանական մեր ընդհանուր խորհրդաժութիւնների մէջ:

Զ է ն ք ի ու ժ ո վ կ ա զ մ ա կ ե ր պ ւ ա ծ պ ե տ ո ւ թ ի ւ ն ը
ծ ա յ լ է ի ծ ա յ լ զ ի ն ւ ո ր ա կ ա ն դ ր ո շ մ ե ր կ ր ո ւ մ կ ր օ ն ,
մ օ ր ա լ , բ ա ր ո յ ա գ ի տ ա կ ա ն ս կ զ մ ո ւ ն բ ն ե ր — ա մ ե ն բ ա ն ս պ ա-
ս ա ւ ո ր ո ւ մ է ա յ դ զ ի ն ւ ո ր ա կ ա ն պ ե տ ո ւ թ ե ա ն , ա մ ե ն ի ն չ
յ ա ր մ ա ր ե ց ւ ա ծ է ն ր ա գ ե ր ա գ ո յ ն պ ա հ ա ն ջ ն ե ր ի ն : Ա ր ի շ
օ ր է ն ը է լ չ ե ն ձ ա ն ա զ ո ւ մ , բ ա ց ի զ ի ն ւ ո ր ա կ ա ն , գ ա շ տ ա յ ի ն
դ ա տ ո ւ օ ր է ն կ ր ի ց , ո ր գ ո ր ծ ա գ ր ե լ ե ն գ ա ր ե ր շ ա ր ո ւ ն ա կ ,
ի ր ե ն ց մ ր ր կ ո տ , պ ա տ ե ր ա զ մ ա կ ա ն գ ո յ ո ւ թ ե ա ն ը ն թ ա ց ր ո ւ մ
Ս ո լ վ թ ա ն ը — ն ա խ կ ի ն զ օ ր ա վ ա ր ը — օ ժ ու ա ծ է բ ա ց ա ր ձ ա կ ,

անսահման իշխանութեամբ, թէ աշխարհիկ և թէ հռ-
գեորյ Միահեծան բռնապետութիւնը հասնում է կուա-
պաշտութեան: Անհապետը մի երկրաւոր աստված է,
ու Ամենաբարձրեալի ստւերն է՝, Արեգակի և Լուսնի
եղբայրը, բոլոր թագերի բաշխողը երկրի վրայ: Նա
բարձր է ամեն օրէնքից նա կարող է յօրինել, ուղղել,
ոչնչացնել օրէնքները: Նա կարող է կոտորել, թալանել,
աւերլ միջիօնաւոր հպատակներին, նա տեր է բաղոր
հողերի և կեանքերի: Կոյր, բացարձակ հնագանդու-
թիւնը այդ Տիրոջ վերաբերմամբ՝ կրօնական դօգմ է,
հաւատոյ հանգանակ:

“Ասիոյ սրտապարար դաշտերը, Յունաստանի, Թիրաւ-
կիայի չքնազ հովիտները, Նեղոսի արգասարեր աւա-
զանը, Արարիայի անոյշ համեմանքները, Պարսկաստանի,
Վրաստանի, Ունգարիայի մեծագոյն մասի հարսառ-
թիւնները, ամբողջ Հայաստանը, Մոլդավիան, Բուլգա-
րիան, Սերբիան, — նրանք բոլորը միանում են այսօր՝
որպէս զի գոհացումն տան մէկ հատիկ էակի—Առև-
թանի ցանկութիւններին”... Այս հակիրճ տողերով
վարպետորէն բնորոշում է հինաւութ ձանապարհորդ
Ո. ի կ ա ֆ ա օմանեան բունապետութեան տարամերժ

^{*)} Թաիրը երի դաշնակցութիւնը Խոլամի հետ մի նոր աշխարհ ծննեց:

Էւթիւնը, մեզ արդէն ծանօթ աշխատութեան մէջ *):
Արկաֆարի „այսօրը“ 17-րդ դարու մէջ է: Սակայն
նոյն կացութիւնը յարատեւեց և նոյն բնորժութը մասց
իր լիակատար ուժի մէջ մինչև 1908 թ. յուլիս ամիսը
բռնաւարի քամհաճոյը գերագոյն օրէնքն էր—*lex sup-*
reptaria. Ա թիւ անգամ—գրում է նոյն 17-րդ դարու
մանապարհորդ՝ հետազոտողը—եթէ անգամ նա հրա-
մայէ ամրող բանակներին ցած նետուի ժայռերից, կա-
մուրջ շնորհ իրենց մարմիններից, մի գետ անցնելու հա-
մար, կամ թէ իրար կոտորել Տիրոջ զւարձացնելու
համար, —նրանք պէտք է հնազանդէւին... Եւ այս ժո-
ղովուրդները միանգամայն բնական են համարում միա-
հետա բռնակալութիւնը”...

Ազնաւականութիւն չկարու Առևլժանական միահեծանոււթիւն գլխաւոր կռւանը — զի ն ուր ա կ ա ն ու թի ւ ն եր Եղել է արդեօք Թիւրքիոյ մէջ Ֆէօդալական ազնաւականութիւնն Թուում է թէ այս Բայց յամենայն գէպս, որ արձամական հաղորդապարով:

„Հենց որ պապահովեց երկրի նռանքում — առում է նոյն Արքավագործ — սուլթանը (le Grand Seigneur) սկսեց բաժանել Հողերը զինուորականների մէջ (entre les gens de guerre), իբրև հաստիցումն նրանց արքաների և կատարած աշխատանքին Այդ հոգաբաժնները կօշունեց են թիւրքերի մաս քիչմար: Զինուորականները պարտաւորում էին իրենց արքանցութեան տակ պահպանելու որոշ թւով մարդկի ու ճիեր, որպէս զի պատերազմի երթան ամեն անգամ, երբ սուլթանը կը հրամայէ... Այդպիսով, Նրգիրը գտնուում էր զինուորաների ձեռքուու: Այդ թիմ արք շատ նման է Անդիւր մէջ մեր ուսւեցած Հողերին, որուը զրում են մէկ պայմանով՝ աջակցել վիճակին պատերազմի ժամանելով: Միան թէ — աւելացնում է Արքավագործ — Անդիւր մէջ այդ հոգաբան շնորհումները հաստատած են որեւով, միջադեռ թիւրքերը օգտաւում են իրենց շնորհւած Հողերից ոչ իբրև անփականատէր, այլ իբրև տոկ արդիւնառու (ուսիրաւու, արգելութ վայելող):

Այդպիտով, սի զէքէնը, վեհապետը թիւրքիոյ մէջ այն չէր, ինչ որ Խըրսպատում Թիւրքական ֆեօրալիզմը (առաջապետական կարգութարելը) շատ տուրքեր էր արևմտեանից: Արևմտուրում դա մի ահագին, լայս նաև աւազը դաշնակցութիւն էր մանր ու խոշոր բռնաւ կողների, որն ացից իւրաքանչիւրը կատարելապէս անկախ էր իր առհմանների մէջ, ուներ բացարձակ իշխանութիւն իր հպատակների վրայ: Այդ է ճշմարիս ֆեօդալականութեան ամենաէական և ամենագարշելի, անհանդուրժելի կողմը: Դա ամենավատթար բռնակալութիւնն է, ասում է Գիզու: Բռնակալը, դաւառի տէրը, կարելի է ասել, ամեն վայրկեան կանգնած է քաղաքացու դրան առջև: Հսկում է և դիտում նրա ամեն մի շարժւածքը: Ամեն վայրկեան նա հաշւում է իր հպատակներին, անսում է իր գահից սեփական թագաւորութեան առհմանները... Մարդկային կամքի բժանաչողըները այդ տեսակ պայմանների մէջ ծաւալուոմ

են իրենց ողբալի տարօրինականութեամբ, և պայմանականը, կայութիւնների անհամարը և ասարութիւնը նշանակութիւնը պայմաններում աւելի խիստ է, զգալի է... Մի կողմից փառաշուրջ դղեակները, հսկայական հարստութիւններ, ուժ, պերճանք, անկախութիւն (իշխող աւատատէրերի մէջ), միևն կողմից՝ սոսկալի թշրւառութիւն, ակարութիւն ու ստրկութիւն (ժողովը գային զանգչածների մէջ). բնակիչները՝ շարունակ զոհ էին, բռուսութեան նոխազ աւատատէր իշխանների յաւիս տենական վէճների ու ընդհարումների և կեանքը յուրաքանչական էր, մշտապէս խանգարւած ու խռովածք... *)

Ըստ Գիբզոնի, „զուտ, անխառն բռնապետութիւնը“ (*monarchie pure, absolue*) ունի որոշ առաւելյութիւններ՝ ֆեոդալական այդ հարիւրաւոր մանրանկար բըռնակալութիւնների հանդեպ։ Այնտեղ միահեծան բռնաւորը սարեր ու ձորերով բաժանւած է իր հպատակներից, ուստի և վերջինները աւելի հանգիստ են, — ամենքն ել հաւասար միեւնոյն ստրկական լեի տակ, կեանքը, հետևապես, աւելի տանելի է բռնակալութիւնը, այսպէս ասած, մեզմանում և տարածութեամբ, հեռաւորութեամբ...

Այդպիսի պղուտ բռնապետութիւնը էր օսմանեանը
Այդտեղ չկային բազմաթիւ անկախ իշխաններ, աւա-
տառէքերեր՝ իրենց յաւիտենական ու արիւնու մրցոււ-
ներով. կար միայն մէկ ընդհանուր Արև Արքայ, նախնի
հզօր կարաւանապետը, նրա ժառանգը, ասաւածարին
յատկանիշներով սպառապղինւած ու լթանը, որ
պահում էր ամբողջ ազգաբնակութիւնը իր տիրական
հմայքի, իր փառաշուր, անտեսանելի և անմատչելի
գահոյքի և ապարանքի թուլութեան ուակ:

Գիգօյի ձեւակերպութիւնը ընդհանուր առմամբ գուցե
ձիւշտ է։ Գուցե, յիրաւի, տարածութիւնը, հեռաւորու-
թիւնը փոքր ինչ մեղմել է բռնակալութեան պատու-
հասները Ասիոյ մէջու և զել են, հարկաւ, այնտեղ ևս
մանրումունը տեղական բռնակալներ — ամբողջ վոհմակը
փաշաների, վալիների, գայլագամների... Բայց նբանց
բռնակալութիւնը սահմանափակ էր, նբանք վեօդալ-
իշխաններ չէին։

Սակայն միւս կողմից՝ ո՞րպիսի տարբերութիւն։ Արև-
մուտքը, այնուամենայնիւ, իր ֆէօդալական քառորդ ու-
ղնդէանուր անապահովութեամբ՝ շատ աւելի բարձր է,
գերագասելի է մեր ասիական բթացուցիչ, անասնացնող
բռնապետութիւններ։ Այդպէս է եզրակացնում և գիտօ-

Այստեղ Արևմուտքում, տարածութիւնը փոքրիկ լինելով վեհապետի և իր ստորագրեալ վասալների (Ճորտատէրերի) միջև՝ վերջիններս չունեին ս առ կ ու կ անհպատակութեան ու հնազանդութեան զգացութեր գեպի վեհապետը Զարգանում էր նրանց մէջ—այդ աւատական, ազնւական դասակարգի մէջ—անկախութեան, անհատականութեան, մարդկանին ուժութեան:

^{*)} *Histoire de l'état présent de l'Empire Ottoman.* 1670 p. 2.

^{*)} Guizot, *Histoire de la France*, I v.

զգացումը, որ այնպէս յատուկ է արևմտեան առ պետական միջնադարի առ պարին և օրը ժամանակով, իշխան այլ գործանների, պիտի բանար գոները ժողովը բական ազատութեան:

Փնտրեցէք այդ անկախութեան ու արժանապատճեան զգացումը Արևելքում, Թիւրքիայում: Ագդրազամից մինչև յետին գիւղացին—ամենքը, բոլոր հպատակները անմոռւմչ, գեանատարած ստրուկներն են վեհապետի, անդադար քծնում են, շողոբորթում, երկրպագում:

Այս կայսրութեան մէջ ստրուկներ միայն կան—ասում է նոյն Ռիկաֆտ—և հրաշք կը լիներ, եթէ գտնեւը որևէ մէկը՝ ազատութեան սէր ունեցող»..

Հեգելի խօսքը արդարանում է մասամբ — այդտեղ, արևելեան բռնապետութեան մէջ՝ միայն ոմէկն է ազատ»—միահեծան թագաւորը: Նրա ազատութիւնն ես, սակայն, յարաբերական է... ենթակայ պալատական մշտնջնաւոր դաւերի ու ցնցումների, պարբերական մահափորձերի...

Ըմբռսացումներ լինում էին նաև Թիւրքիայում — յանաւանդ հեռաւոր նահանգների մէջ. այդպէս է վկայում Ռիկաֆտ. բայց նրանք շուտով խեղդում էին արեան հեղեղներում, և սուլթանական ջախջախիչ գերիշխանութիւնը անփոփոխ կերպով յարատեսում էր դուռերի խոր ու միապաշտպան գիշերի մէջ... Շրջապատճան փորբաթիւ կամարիլայով, յենած զինուրական նոյնպէս փորբաթիւ լէգէօնի վրայ, նա կարողացաւ երկար դարեր կանգուն պահել ասիական ողինջ բռնապետութեան պաշտամունքը ասսնեակ միլիոնաւոր ազգաբնակութեան մէջ:

Ապատամբութիւնը, զանգւածային ըմբռսացումը դիւրին բան էլ չէր: Մենք արդէն խօսեցինք այդ մարդկային նախիրների բարացած, աւանդապաշտ բարբերի ու սովորոյթների մասին: Զուտ ցեղային-հոգեբանական պատճառներին աւելանում էր և տնտեսական պատճառը Սարսափելի տուրքերը, որ գնում են մարդկանց աշխատանքի վրայ, հասցնելով նրանց ծայրագոյն աղքատութեան, անընդունակ են դարձնում այդ մարդկանց՝ ըմբռսանալու, որքան էլ շատ տանջին նրանք: — Ճիշտ է նկատում թակոն իր Փորձաբարից մէկի մէջ... «Անհնարին ե, որ հարկերի ծանրութեան տակ տնքացող մի ժողովուրդ քաջ լինի, արիստիրոտ, մի ազգ չի կարող միանդամայն լինել առիւծ և բեռի տակ հեռող էշ»...

Հոչակաւոր անգլիացու այդ իմաստուն խորհրդածութիւնը ճիշտ է մասնաւորապէս Թիւրքահայ ժողովրդի կացութեան ու հոգեբանութեան նկատմամբ՝ մինչև 1890 թւականը, մեր շարժման արշալոյսը...

Աւատականութիւնը դեռ չփթթւած՝ մարեց. նա յարտաւեց, կիսատպաւատ, միայն հայաստանում ու Թիւր-

դիստանում — բրդական գէրեբէյութեան մէկով — և մի քանի այլ գաւառներում: Ռիկաֆտի վկայութիւնը այդ մասին ևս պարզորոշ է.

Պէտք է նկատել, որ Քիւրդիստանը (la Cerdie) նւազելուց յետոյ՝ ամրողջ երկիրը բաժանւեց սանջակների, այն ասրբերութեամբ, որ այդ սանջակների հողերը փխանցւում էին ընտանիքներին ժառանգական իրաւունքով. զաւակները յաջորդում էին ծնողներին... մինչդեռ ուրիշ սանջակների մէջ աւատական հողաւերերը վճարում են որոշ տուրք թագուրին և պահում ու մշակում են իրենց հողերը այն պայմանով միայն, որ ծառայեն այդ թագաւորին և ի հարկին հետևեն նրանց՝ պատերազմների ժամանակ: ... Քրդերը, առում է Ռիկաֆտ, բացարձակ տէրեր են իրենց հողերի ու դոյլերի:

Խնչո՞ւ մարեց վէօդալական սիստեմը, ինչո՞ւ չզարդացաւ ազնւականութիւնը՝ թէ տիրապետող և թէ գրեթէ բոլոր հպատակ ցեղերի մէջ... և այդպիսով դասակարգային շերտաւորումը իր անդրանիկ և էական շրջանի մէջ առանձնայատուկ ուղղութիւն առաւ, միանդամայն տարբեր արեմտեան էլոլիւսիօնի ընթացքից և օրէնբից...

Դա մի ու շագրաւ երեսոյթ է և դժւարալոյն մի կնճիռ: Մի երեսոյթ՝ որ, անտարակոյս, ունեցել է անդրտարձութեար թիւրք կայսրութեան, ապա ուրեմն և հպատակ ժողովութեների ճակատագրի վրայ: ոջնջնջ, բացարձակ միապետութիւնը կանգուն մնաց, իրու միակ տէր հրապարակի, առանց մրցակից և հակառակորդ գասակարգերի... Զինուրականութիւնն անգամ ի վերջու նրա ձեռքով իսկ խորտակւեց: զուտ արևելեան մեթօդով... կոտորած ովագին ինչպէս բացարձալ այդ տարածերժ, ըստ երեսոյթին աննօրմալ կացութիւնը, կամ — ուրիշ խօսքով — ինչպէս խափանւեց նօրմալ, բնականոն էլոլիւսիօնը:

Եթէ կամենանք համառօտակի բանաձեւել, պիտի տանը, որ մօտաւոր պատճառները տնտեսական են, իսկ հեռաւորը՝ ցեղային գործութիւնն անդամական տէրն էր երկիրի անհուն գանձերի — և բոլոր հպատակները վայելում էին միայն նրա շնորհ հեռ կարող էրին ստանալ օրևէ դոյլ, սեփականութիւն միմիայն նրա վեհանձն առատաձեռնութեամբ: Նա չէր թոյլ տալիս անգամ զօրաւոր, իշխանազն ստորագրեալներին՝ կառելու իրենց վայելած հողերն ու հարստութիւնները իրենց ժառանգներին բռնակալի կամբը միջամտում էր ամեն պարագայում և մեռնողի դոյլերը յաճախ պարզապէս գրավում էին: Առանց ճանաչելու Մակեավելիին, սուլթանները հարազատութեամբ կիրառել են նրանշանաւոր հրահանգը:

Անհատների և խմբումների ամբարտաւանութիւնն ու

ըմբռատացումները զագելու համար, ամենապահազ եւ անաղմուկ միջոցն է՝ փակել ճամբան, որով նրանք կարագ են ուժ ձեռք ընթել և հասնել իշխանութեան...

Հարստութիւնը ուժի և իշխանութեան աղբիւրն է. հարկ էր, ուրեմն, ցամաքեցնել այն ևւ սուլթանը չէր տոկում, որ իրենից զատ՝ որևէ մէկը ժառանգաբար տէր դառնայ հարստութեան:

Դիմենք դարձեալ Ռիկաֆտին.

Համարելով ինքինը փաշաների աւագ եղբայր, ուղարկում էր այդ փաշաների ամբողջ գոյըը նրանց մահից յետոյ, իր քէփի համաձայն բաժին էր հանում մեռածի զաւակներին, մայզածը իւրացնում էր... Այդ միջոցով աւերտում էին մեծ գերգաստանները... Այդպէս լուծեց յօլդավեների ազնւականութիւնը, բազմաթիւ մեծ ընտանիքների զրկւեցին, քայլաբարեցին... Սուլթանը կործանեց ինչ ին ազնւականութիւնը:

Թերեւ չափազանցութիւն չէ Ռիկաֆտի վերջին ֆրազը եթէ Արևմուտքում հզօր, ազգեցիկ բունականները երբեմն — իրենց աշեղ անհատականութեան ու հեղինակութեան ուժով — կարողացել են խորտակել ժամանակաւորապէս, անդամալութել ամբողջ դասակարգերի բնականն զարգացումը, ապա զարմանալի չէ, որ ստրուկ ու տիրապաշտ Արևելքի մէջ նոյն դահճային պաշտօնը աւելի ևս յաջողութեամբ կատարել են սուլթանները... Եւ նրանք կատարել են յենւած այն կոյր, ընազդային պաշտամունքի, այն հլու, անասնական հնազանդութեան վրայ, որ տածում են մահմեդական Արևելքի զանգածները գէպի խալիքն ու Հրամանատարը... Մի հնազանդութիւն, որ գալիս է նոյն ասիական ստեպներից, նոյն թափառական ու պատերազմիկ համակենցաղի օրերից... Մի սոսկալի, մահաշունչ կրաւոր ականութիւն, որ դիւն, որ դարձել է ցեղի հոգերանութեան տիրապետող յատկանիշը...

Բռնաւորը ամեն ինչ էր... անգամ տէր, հրամանատար ունեսես ականութիւն գործում էր, իւր նորագոյն արդիւնաբերութեան և բաղաքակրթութեան Արևել սկսել էր ճառագայթել գէպի բոլոր, անգամ հեռուասիական հօրիզոնները Մենք տեսանք, թէ ինչպէս մի Արդիւ Համիդ կարողացաւ իր դիւային, կործանարար հանճարով իր կամբին ու բմահաճոյըին ենթարկել, հպատակեցնել կայսրութեան ամբողջ կեանքի մեքանիզմը, կարողացաւ խափանել, խեղաթիւրել, այլանդակել տնտեսական գործոնները, բովանդակ զարգացումն ու առաջադիմութիւնը...

Փաշաները, ասում է Ռիկաֆտ, կրթում էին և դաստիարակում յայտնի ոգով, արքայական պալատի մէջ դառնում էին մի մի հլու սպասաւոր և ապա ջըրկւում էին այլ ծայրեր կառավարելու Ամեն միջոց ի դործ էր դրում, որպէս զի նրանք չափից առ ելի բարձրանային և մանաւանդ հարստութիւն չ'ամբարէին:

Աշագրաւ են են 17-րդ դարի անգլիացի ուղևորի անտեսականը՝ մատերիալիստական « մեկնութիւնները թիւրբիոյ կացութեան ծանրակշիռ իրողութիւնների վեհարերմար» նա բացատրում է արևելեան արշակունյաց գույքը, ուսնին պատկանում գույքը, չունին պատճառներով:

Եւ ինչո՞ւ թիւրբերը չեն զարգացնում արևոտ, վաճառականակիմին, երկրագործութիւն, ինչո՞ւ նրանք չեն շինուած աներ... Արովչեան դիմումը որ իրենց չեն պատկանում գոյըը, չունին պատճառ ժառանգ անդին եր:

Այդ պատճառը, տարաբախտաբար, երկրորդական է, նա վերացաւ յետագյում և այսուամենանիւ տիրապետող ցեղը անզօր եղաւ — մինչև օրս էլ անզօր է զարգացնելու արւեստ, ճարտարապետութիւն, վաճառականութիւն և այլն: Աւելի խոր պատճառները կան, թագնւած ցեղային-ժառանգական խորարմատ ընազդաների մէջ, որոնց համար լուսաբանող իրողութիւններ գետ պիտի բերենք: Պահիւրբերը արհամարչում են արւեստները, գիտութիւնը և նոյնիսկ առևտուրը, նրանց մօտ յարգի է միմիայն զինւորական պետութիւնը, ասում է նոյն Ռիկաֆտը:

Ասկայն, ոզինւորական համայնքը՝ չմեաց, հարկաւ, միանգամայն հօմօժեն, միապաղապահ Աշխատանքի բաժանում և դասային շերտաւորութեր յայտնի չափով առաջ եկան և այդտեղ Տարաբախտաբար, այդ շերտաւորութերը չ'առաջազդիմեցին ոչ խորութեամբ և ոչ լայնութեամբ: Նրանք մնացին թեթև, մակերեսային Մասնաւորապէս վաճառականի առ իւնութիւն ու շփում — վաճառականութիւնը միշտ մի տեսակ խորթ ու օտար զբաղմունք մնաց թիւրբեշնող ցեղի համար: Նա մինչև օրս էլ տակաւին իր խակ, նահապետական վիճակի մէջ է...

Դաստիարակային շերտաւորումի ու խորութիւնների դէմ-յանդիման կանգնած էր, վերջապէս, մի այլ հնչող կաշկանդիւ ուժ՝ կրօնը Արքէն տեսանք մեր նախլութաց յօդւածների մէջ, թէ ինչպէս Ղուրանը ինքզինքը թշնամի էր յայտաբարում դասակարգային տարբերութերի և բարողում էր հաւասարութիւն հաւատացեալ-ների մեծ գերգաստանում: Խուլամը այդպիսով մի առանձին հակառակութիւն պիտի ցոյց տար ազնւական գասակարգի վաղաժամ անդամալու ժման մէջ նրա վրայ էր յենւում մասամբ բռնապետը, նրա տարի և հրահանգի համաձայն էր վարում, երբ խորտակում էր այդ գասակարգի գոյութեան խարիխները:

Ծատերին է ուրախացնում երևոյթը: Մասնաւորապէս, թիւրբ իդեօլոգները, իրենց կրօնի՝ համբերողութեան փաստի հետ՝ սիրում են յիշատակել և դրւատե

ազնւականութեան չգոյութիւնը թիւրբ ցեղի մէջ լաւ էր, թէ վատ՝ այդ չգոյութիւնը բարեբախտ, թէ չարաբախտ հանգամանք՝ երկրի ընդհանութիւնը, բաղաբական և սօցիալական զարգացման համար Ահա կնճիռ Բակօնն տառւմ է. ու ամեն մի պետութիւն, ուր չկայ ազնւական գասակարգ, մի զուտ բռնակալութիւն է—ինչպէս թիւրբերինը — որովհետեւ ազնւականութիւնը չափաւորում է, բարեխառնում ինքնակալութիւնը”:

Բակօն լիովին իրաւացի է, եթէ ի նկատի ունի իր սեփական հայրենիքը: Անդիհական ազնւականութիւնը, յիրաւի, շատ վաղաժամ, գեռ X III դարի մէջ կարոցաւ սանձ դնել միահեծան բռնապետութեանը, ինեց նրանից մի յայտնի սահմանագրութիւն ու ազնառութիւն, որ չուկէտն եղաւ հեռաւոր և բախտաւոր սահմանագրական զարգացումի:

Նոյնը, սակայն, դժւար է ասել ոռւսական, սպանիական, գերմանական, աւստրիական, ունգարական և մի շարք ուրիշ երկիրների ազնւականութեան մասին, ուր նա (այդ ազնւականութիւնը) ամուր պատւարն է միապետական գահի ու ուժիմի:

Ազնւականութիւնը գրեթէ ամենուրեք հանդիսացել է և այսօր էլ գեռ հանդիսանում է էապէս ձնշող ու մակարոյժ տարր: Սակայն մի հանգամանք կայ: Այդ դասակարգի մի խոշոր, պատմական ծառայութիւնը կայ, որ անկարելի է ժիտել: Գրեթէ ամեն տեղ նա զօրաւոր խթան է եղել մտաւոր գործունեութեան և գրագիտութեան և գիտութեան, գեղարվեստի և փիլիսոփայութեան: Մարդարարութիւնը շատ թէ քիչ բարգաւաճել են միմիայն այն երկիրների ու հասարակութիւնների մէջ, ուր եղել է բարեկեցիկ ազատ մակար արքա կարգ: Խիստ տեղին ու բնորոշ է թւում թիկաֆարի վերոիշեալ յայտարարութիւնը, թիւրբերը արհամարհում են արքեքների գիտութիւնը և նոյնիսկ առեւտուրը: Նրանց մօտ յարգի է միայն զինւորական պետութիւնը”..

Դժւար է պնդել, ի հարկէ, որ թիւրբական ազնւականութիւնն ես—եթէ նա ճողովրէր սուլթանների ունձնիշխանութեան ճիրաններից և կանգուն մնար արևմտեանի պէս, իրու անկախ ու բարեկեցիկ դասակարգ — դժւար է ասել, թէ նա կը նւիրէր իր ազատ ժամանակն ու միջոցները մտաւոր, գեղարւեստական, կուլտուրական մարզականների, կը ստեղծէր թիւրբ իմացական բաղաբակը թութիւն, կը չափաւորէր նաև միահեծան իշխանութիւնը... Դժւար է ենթադրել այդ բոլորը, քանի որ այնքան ձախորդ, աննպաստ են ցեղի զարգացման ու առաջադիմութեան ընդհանուր պայմանները: Կորով, տոկունութիւն, յարաւեսութիւն աշխատանքի մէջ,—ահա թէ որոնք են բաղաբակը թութեան ու առաջադիմութեան մեծագոյն խթանները: Միջավայրը զօրաւոր է և ազդեցիկ, անտարակոյս, և ոչ մի ազդ չի բաղաբակը թել ինքնիրեն,

իր սոսկական ուժերով, առանց մղումն ստանալու շրջապատող միջավայրից Սակայն, մարդկային գիտակցական, նպատակաւոր ճիգն է, մարդկային սահղագործ ու յեղափոխիչ ուժն է, որ յարաձուն կոհակներով առաջ է մղում պատմութեան անիւը, փոփոխում է միջավայրը, հակառակ զ գ ու մ է բնութեան կոյր ուժերի գէմ, շահագործում նիւթն ու ուժը, հում բերբերը, զարգացնում է գիտութիւնը և դրանով իսկ յաղթահարում տարերըները, աճեցնում, բազմապատկում նիւթական և իմացական գանձերը... Մինչդեռ բնական, տարերային ազդակները մնում են ընդհանրապէս անփոփոխ, միօրինակ: Առանց այդ գիտակցական հակազդեցութեան, չկայ մշակոյթ, բաղաբակը թութիւն. իսկ այդ արդասաւոր հակազդեցութիւնը, այդ համբերատար և կանոնաւոր աշխատանքը, այդ տոկուն ու յարաւել ճիզը, եռանդը չեն մտնում տիրապետող ուղմիկ-ցեղի հիմնական առաքինութիւնների մէջ, չեն հաշտում այդ ցեղի իշխողական, հրամայողական խառնւածքի հետ: Ահա թէ ինչու, դժւար թէ նա շատ թէ քիչ զգալի ոստիւններ անէր կուլտուրական արժէքների ասպարեզում — գրականութեան, փիլիսոփայութեան, արեւտի, ճարտարապետութեան և այլն — ե թէ ա մ զարգանար թիւրբական արքիս ս ի ս տ օ կ ր ա ս ի ա, յ բ ա ր ե կ ե ց ի կ ա զ ա ս ա կ ա ր գ, ազատ առօրեայ նիւթական կեանքի մտահոգութիւններից: Եւ այդ դասակարգը եղել է ազնւականութիւնը (նոյն պաշտօնը կատարել է մասամբ կղերը):

Դժւար է պնդել, ի հարկէ, որ թիւրբական ազնւականութիւնն ես — եթէ նա ճողովրէր սուլթանների ունձնիշխանութեան ճիրաններից և կանգուն մնար արևմտեանի պէս, իրու անկախ ու բարեկեցիկ դասակարգ — դժւար է ասել, թէ նա կը նւիրէր իր ազատ ժամանակն ու միջոցները մտաւոր, գեղարւեստական, կուլտուրական մարզականների, կը ստեղծէր թիւրբ իմացական բաղաբակը թութիւն, կը չափաւորէր նաև միահեծան իշխանութիւնը... Դժւար է ենթադրել այդ բոլորը, քանի որ այնքան ձախորդ, աննպաստ են ցեղի զարգացման ու առաջադիմութեան ընդհանուր պայմանները: Կորով, տոկունութիւն, յարաւեսութիւն աշխատանքի մէջ,—ահա թէ որոնք են բաղաբակը թութեան ու առաջադիմութեան մեծագոյն խթանները: Միջավայրը զօրաւոր է և կրօնը եկան աւելի ուժ տալու այդ ամլութեան:

Ասացինք — “ա ն օ ր ի ն ա կ”: Եւ դա հազիւ թէ չափազանցութիւն է: Բնութիւնը, ինչպէս տեսանք իր բաղամապիսի, խայտարգէտ միջավայրով և մանաւանդ բերրի, մշակելի հոգերով ուժգին խթան է եղել իր մէջ ապրող ժողովուրդների բաղաբակը թիւրբական առաջադիմութեան Յայտնի է նաև, որ նոյն բաղաբակը թութիւնը առաջանացական մեծաապէս մեծապէս նպաստում է բառաների, ցեղերի խառնուրդը: Թիւրբերը առատօրէն պարգևաւորւթ էին միջավայրի այդ անհրաժեշտ բարիքներով, երկար գարեր նրանք ապրեցին աշխարհագրական խիստ նպաստաւոր գիրբերի մէջ: Երկար գարեր նրանք անհրաժեշտ բարիքներուն իրենց հապատակ ցեղերի հետ և նրանց նախնի բա-

սային - մարդաբանական տիպագրը աշխագին փոփօնութիւն կրեց... Այդքան բարելազող պայմաններում նրանց այսօրւան յետամացութիւնը յիքաւի ապշեցուցիչ է, անօրինակ:

Ցեղական - ժառանգական դէտերմինիզմ... Անդիմադրելի *fatalité*, ճակատագրականութիւնն... Ըստունե՞լ արդեօք Վայսմանի հետ, որ ցեղի առաջին կորիզը, այն նախնական սաղմանիւթը, որ կազմւել է անդրագոյն, անյիշտատակ դարերի մէջ, գոյամարտի յորձանուաւ ալիբներում —ընդունե՞լ արդեօք՝ որ, յիրաւի այդ խորհրդաւոր սաղմանիւթը մի ցեղի մէջ յաւերժութէն փոխանցւում է սերնդէւսերունդ, առանց կրելու հական, ջաշափելի փոփոխութիւններ ժամանակի անծայրածիր հոսանքում, առանց մատնելու ցեղի սկզբնական և հիմնական բնոյթը, նկարագիրը նոր կացութեանցու պայմանների խեղաթիւրիչ աղդեցութեան...

Ընդունե՞լ արդեօք Լետուրնօի և մի շարք ուրիշ սօցիօգ-մարդաբանների հետ՝ որ ցեղային համախմբումները խորապէս անհաւասար են, որ կայ ցեղերի եր արքա (hierarchie), ոմանք օժտւած աւելի, ուրիշները նւազչափով, ոմանք կոչւած բարձրանալու բաղաքակրթութեան առնդուխի ամենավերին աստիճանները, ուրիշները դաշտապարտւած դեգերելու յետամեջ վիճակի մէջ, պիրամիդի ստորատներում, առանց ուրոյն ստեղծագործող աշխատանքը ցուցադրելու, առանց իսկ կարողանալու ընդօրինակել, մարսել աւելի բարձր ազգերի առաջա-դիմութեան արգասիքները...

Պատասխանել վճռականորեն — անհնարին է, Այսպէս
թէ այնպէս, սօցիօլօգիայի, ընկերաբանութեան ամենա-
ռաշագրաւ նիւթերից մին է այդ եղակի երևոյթը,
թիւբերի ու թաթարների այդ վիթխարի զանգւած-
ները, որ հազարաւոր տարիների իրենց գոյութեան ու
արշաւների ընթացքում ոչ մի անգամ, ոչ մի աեղ չկա-
ռողացան խարիսխ ձգել ճշմարիտ քաղաքակրթութեան,
ընդհակառակը՝ ձիերի սմբակների տակ բնացինջ արին
շաղաբակրթական ամբողջ սիստեմեր, ցամաքեցրին ստեղ-
ագործող աջնատանեցի անհամար ազրիւներ...

Եւ թւում է, թէ այսօր, օսմանեան սահմանադրում
մեան բառամեայ փորձից յետոյ, ընկերաբանական այդ
կնճիռը աւելի ևս սուր ու ցաւոտ այժմէութիւն է
ստանում... Հանդէպ այն յուրի բացասական մտայնու-
թեան, հանդէպ այն անդարմանելիօրէն անձուկ ոգու և
իներա ու ապիկար ընթացքի՝ որ մտանում է տիրապե-
տող ցեղի տիրապետող կուսակցութիւնը, —մի մարմին, որ
սերկայացնում է ցեղի ամբողջ գրեթէ ամբողջ գաղա-
փարական ու առաջադիմտկան հիւթը, որ եկել էր զար-
մացնելու աշխարհը արևմտեան գաղափարների մեծա-
չունդ ցուցադրութեամբ, և որ սակայն... միշտ աւելի և
աւելի խորացնում է անդունդը իր և այդ գաղափար-
ների միջև, միշտ աւելի սուլում է նոյն գոռոշ, յետա-

Խաղաց, ասիական ռուտինի մէջ, որ իր ծնող զանգւածի գարաւոր, անփառունակ սեփականութիւնն է...

Ազգերը քաղաքակրթուում են՝ ինքնուրոյնաբար ըստ
ու եղծ ագործ ելով կամ թէ այլոց մորի արդիւնք-
ներն ընդուրին ակելով։ մարսելով։ Այսաեղ—ոչ
մէկը և ոչ միւսը։ Մինը իսպառ բացակայում է, միւսը
կաղում է չարաչար։ Դիմենք դարձեալ հեղինակաւոր
և օտար վկայութեանց։

„Գրեթե բոլոր արևեստները՝ մանկութեան մէջ են նրանց մօտ, կամ միանգամայն անծանօթ են“,—ասում է մի նշանաւոր Փրանսիացի տուրիստ Օլիվիէ, որ ճանապարհորդել է Եւրոպական Թիւրքիոյ մէջ, XIX դարի սկզբում:

Աղաղուց ի վեր երրոպացիք և մանաւանդ Փրանսիացիք փորձել են սովորեցնել նրանց (թիւրքերին) մի բանի օգտակար արևեստները. բայց արդիւնքը թիշ բան է եղել, վասն զի ազգային գոռողութիւնը, տղիստութիւնն ու մայեռանդութիւնը արդեւք են լինում: Փրանսիացիք են սովորեցրեն նրանց՝ նաւեր, հրացաններ ու սէիններ շինել, երկաթ մշակել և սապօն պատրաստել *):

Նպաստաւոր կարծիք չունի թիւրքերի ստեղծագործական եռական եռանդի մասին նաև գերմանացի հռչակաւոր արևելագէտը, Ֆօն Համբեր, որ 30 տարի ուսում նասիրել է Թիւրքիան և որի անաշառ աշխատութիւնը գեռ այսօր ևս ամենահզեղինակաւոր ազգիւրն է այդ նիւթի նկատմամբ:

Թագթարական ծագումը ունենալով, Նրանք (օսմանյացին) դեռ պահպաննել են ստեղների կետնքի հետքերը, որ հինգ դարու Քաղաքակրթութիւնը չկարողացաւ չնշնչի Բնութիւնը սժուէ և Նրանց խելքով և արտօվի, բայց մերժել է տալ ճաշակ և Ընդունակութիւն արևեստի համար Մինչև իսկ արարու պարսիկ բանաստեղծների լաւագոյն երկերը, ընկելով թիւքերի ձեռքը, թոշնում են կամ տալիս են օտարօտի վիճմունքներ Թիւքերը պարզ են, ուղղամիտ, չափաւոր, հաւատարիմ, երախտագետ, բայց բիրտ են, տգետ, շահառէր և ծոյը՝ Նրանց մեջ նօմագի լաւ յատկութիւնները միացած են կիսաքաղաքակրթութեան կանկածելի արդիւնքների հետ Ընդհանրապէս, նրանք բարի են. վաս են միայն պաշտոնական շրջաններին պատկանող անձինք, որնց փառումը է կառավարութիւնը:

Ահա մի այլ հինաւուրց հեղինակութիւն — անդիմացի Համիլտոն — որ նոյնպէս երկար տարիներ պատել և ուսումնասիրել է Արևելքը.

Ես կըսկսեմ նրանց (թիւրքերի) լաւ յատկութիւններից: Հեւրասէր են բառի ծշղիս խմասով. առհասարակ կարեկցուան են և յաճախ զեհանձն: Ատորին դասը ընդհանրապէս ազնիւ է և ես այդ համարում եմ նրա մեծագոյն արժանիքը: Բայց այդ առաջինութիւնը յատուկ չէ բարձր գառակարգին: Միւս կողմից նրանք բոլորը տղէտ են, կասկածուա, ցուցամոլ և կեղծարար, հպարտ և առանց պատուի զգացման, շղղութը ող, առանց համեստութեան... Պետական ու վարչական գործերում՝ ըստնակալ են, կրօնի մէջ՝ գոգմապաշտ և անհամբերող: Իրենց սեփական պատմութեանը նորնբան անձանօթ են, որքան և ուրիշ ազգերի պատմութեանը: Հանդամանքը նկատելի է անդամ լաւագոյն կրթու-

* Olivier, *Voyage dans l'Empire Ottoman*, 1801—1807 [d. I *sus*. t^e. 26—27.]

թեան տէր անհատների մօտ: Նրանց առաջինութիւնները—վայրենի առաջինութիւններ են *...).

Երկու անաշառ և իրազեկ գնահատողների շեշտած պակասութիւնները մեծ յասամբ դիտելի են նաև բրիստոնեայ ու այլ ցեղերի մէջ. մենք կուզէինք այդ հեղինակաւոր բնորոշումների մէջ վեր հանել միայն մի քանի կէտեր, որ խոշոր չափով յատուկ են թիւքքերին. ո՞ծոյլ, անհոգ, անհամբերող, զինւած լոկ վայրենութեան առաքինութիւններով*. ահա թէ ինչ է ասում լաւասեղեակ, շիտակ, անկողմանպահ պատմագիրը. և նոյնը կրկնում են բազմաթիւ այլ հեղինակաւոր բերաններ, սկսած այն օրից, երբ ոչիւնադ մարդը՝ դարձել է արիւոտ կուտախնծոր միջազգային ախորժակների և մըցութիւնների կրկնում..

Չափազանց յատկանշական են Օլիվիէի հետեւալ տողերը.

Նրանք վայելում են ամենուրեք տնկեցների, վարձակալների անփութեամբ (ils jouissent partout avec l'insouciance des locataires). քանդում են ամեն ինչ և երբէք չեն շտկում:

„Քանդում են—չեն շտկում”... Այդպէս է վկայում և գերմանական մեծահամբաւ զօրավարը—Մ օ լ տ է, իր „Թիւրքական նամակներ”-ում (1835—1839 թ.): Վարձակալի հոգեբանութիւնը երևան է գալիս և քաղաքներում, որոնք ի տեղի շնչնալու և բարգաւաճելու՝ ամայանում են ու խորասուզում աւերակների փոշու մէջ.. Գեներալ Մօլտկէն գրում է կօնի այլ մէջ իր արած պտոյտի առթիւ.

Թիւրքական քաղաքները առհասարակ ամայութեան կերպարան ունին, բայց ոչ մէկը այնքան ամայի չէ, ինչպէս կանաչ Աւերումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որը առ մարդկային ձեռքը... Մայնմեղականները վերածեն են եկեղեցները մզիթների և հէնց այդ մզիթները այսօր ընկած են աւերակների մէջ. Մի բարձր ու լայնարձակ պարիսպ հարիւրաւոր աշտարակներով ընդգրիւմ է ամայի մի դաշտ, ուր թափած են մի բանի փլատակներ... Թիւրքական մի խոշոր արձանագրութիւն իւրաբանչիւր աշտարակի վրայ վկայում է այցելուին, թէ ովքեր են այդ աւերածը նիւթող բարբառները **)...

Աւելի փայլուն և նախանձելի վիճակի մէջ չե և մայրաքաղաք—Պօլիսը՝ XX դարում Քաւական է մի փոքրիկ պտոյտ, մի թեթև ակնարկ՝ տեսնելու համար աւերածի և անշարժութեան այդ աւանդական ոդին...

Ահա թէ ինչպէս է նկարագրում Օլիվիէ իշխող ցեղի աւերիչ աշխատանքը՝ Կը ե տ է ի մէջ, անցեալ գարու սկզբներում.

Նրանց (բրիստոննեանների) հունձը շարունակ յափշտակում է աղան (թիւրք կառավարիչը), սեփականութիւնը զրաւում է փաշան, մինչդեռ ենիշերները մշտապէս անարգում են ու ծեծում գաղանակով... Եւ այդ բոլորը շարունակ տեսնելով ու ապրելով՝ յոյն երկրագործները բնականարար չունին եռանդ, ցանկութիւն՝ զարկ տալու արդիւնագործու-

*). Քաղ. Լի տ տ Լ Բ օ յ ի ռ ո ւ ս ե ր է ն ա շ խ ա տ ո ւ թ ի ւ ն ի ց . Ա ւ զ ե ր ո ւ թ ի ւ ն ե ւ ր ո ւ պ ա կ ա ն և ա ս ի ա կ ա ն ն ե ր ի ս . 1878 թ. էջ 323—324.

**). Moltke, Briefe aus der Türkei, 7-րդ հրատ., էջ 336.

թեան, հողը մշակելու... քանի որ արդիւնքը պիտի անցնէ իրենց ատելի տարրի ձեռքը... Նրանց դաշտերը աւերում են օրեցօր, ձիթէնին փճանում է, խաղողը կործանւում... Յոյները վհատւած, չեն էլ այխատում շտկել, բարեւթել:

Ճարտարաբեսոր գրեթէ զերո է աղաների հսկողութեանը ենթակայ յոյն գիւղերի մէջ; Դողալով, նրանք հաղիւ կարողանում են գործել մի բանի կոշտ պաստառներ... Երբ կանայք նոր գենուտ են հագնում, սպորաբար խոյս են տալիս վայր գոյներից, վախենալով. թէ սոտիկանապետը կամ մի այլ թիւրք կը խլէ և նոյնիսկ կ'անարգէ կնոջ:

Թիւրք գիւղերի մէջ... մշակողները ապահով են, երկիւղ շունին, տուրքերն էլ աւելի թեթևեւ են... Եւ այնուամենայնիւ, ոչ երկրագործութիւնը, ոչ էլ ճարտարաբեսոր չեն զարգանում նրանց (թիւրք շինականների) մօտ:

Կարծես թէ ծոյլ ու անշուշտ ձիապիծակների պէս, նրանք եկել հաստատել են օտար հողի վրայ, սրպէս զի միայն ուտեն, սպառեն—առ անց ձիգի և հոգմի—այն բարդիշները, որ որիշներ իրենց աշխատանքով վաստակում են հողից կամ թէ իրենց ճարտարաբեսուով ստանում են զրսից:

Այդ ստարականների (թիւրքերի) բնաւորութիւնը այն ստարձան շեշտած է, որ նրանք նոյնն են կայսրութեան բոլոր կողմերում... Սակայն Պալմի և ծովեղերեայ զիլաւոր քաղաքների մէջ նրանք ընդհանրապէս վ'ըք ինչ աւելի մեղմ են, փոքր ինչ աւելի կրթւած, բան ներբին նահանգներում:

Եւ այդ մոալի, յոռետես կարծիքների արձագանքն էր Գրի գոր Արծ ք ո ւ ն ի ն, երբ նա Թիֆլիսի իր նշանաւոր հրապարակային դասախոսութեան մէջ (1879 թ.) յայտարարում էր, փոքր ինչ աւելի խացնելով գոյները.

Թիւրքը մի պարապ, անհոգ և անօգուտ կերպով սպառող էակ է... Նա ապրում է հայերի հաշեին... Հայը — այդ ասիաբնակ եւրոպացին—չի փայնում բնական հարստութիւնները, ինչ պէս առ ու ու մ ե ն մ ի ւ ս ա ս ի ա շ շ է բ (թիւրքը, բիւրդը), այլ նորոգում է բնութեան ուժերը**).

Այդ նոյն կարծիքն է (թիւրքերի տնտեսական յետամացութեան և աւերիչ հակումների մասին), որ այսօր խտացել է մի ընդհանուր ու ծանօթ բառի մէջ —

„Paschawirtschaft“ (փաշայրական տնտեսութիւն) — մի անարգական բառ, որով արևմտեան ժամանակակից տնտեսագիտութիւնը բնորոշում է բաղաբարական և սոցիալական ամեն մի սիստեմ, որ հիմնւած է կամայականութեան, թալանի և աւերածի վրայ...

Այդ աղետաւոր սիստեմն է, որ միացած կրօնական խորունկ անհամբերութեան և բարոյական սոսկալի հարւածների ու անարգանների հետ՝ ծնունդ տւեց XIX դարի ընթացքում թիւրքահպատակ բրիստոնեայ ազգերի մէջ ապստամբական շարժումների երկարածիգ և արիւոտ շարանը...

*). Քաղ. Լի տ տ Լ Բ օ յ ի ռ ո ւ ս ե ր է ն ա շ խ ա տ ո ւ թ ի ւ ն ի ց . Ա ւ զ ե ր ո ւ թ ի ւ ն ե ւ ր ո ւ պ ա կ ա ն և ա ս ի ա կ ա ն ն ե ր ի ս . 1878 թ. էջ 323—324.

**). Moltke, Briefe aus der Türkei, 7-րդ հրատ., էջ 336.

ՍԱՍՈՒԵ ԵՓՐԵՄԻ ՍԱՍԻՆ

"Times" երկարօրէն կանգ է առնում Եփրեմի անձնաւորութեան վրայ, համարում է նրան Պարսկաստանի անցեալ ուաւագոյն յօյսը":

Այլ և այլ ժամանակներ—առում է լանդանեան մեծ օրդանի թղթագիցը—ես հանդիպել եմ թրիս Արավոյին, Անդանսկին, Աթթթար խանին և ուրիշ ռազմավարների: Եփրեմը բոլորի մէջ ամենաբարձ է և ամենահրապուրիչը, իր պարզութեամբ և անկեղծութեամբ:

Մի տիսուր թիւրիմացութեամբ՝ լրագիրը Եփրեմի մահւան պատճառ է համարում հանգուցեալի ընկերներին: Յիշատակում է ողաշնակցութիւնը" և նրա ժընէքեան կօմիտէն: Նոյն թիւրիմացութիւնը և նոյն անունները կրկնում է Գրանկֆուրտի մեծ լրագիրը: Այդ առթիւ խմբագլութիւնս անմիջապէս մանրամասն հերքում զրկեց վերօյիշեալ թերթերին *): Վերջապէս, ինքը հեռագրական գործակալութիւնը եկաւ հերքելու այդ ակամայ և անչեթեթ մեղադրանքը, հազորդելով ռազմիկի մահւան ճշմարիս պարագաները:

"Frankfurter Zeitung", 21 մայիս.

Այն բոլոր գրբախոռութիւններին, որոնց վերջին տարիներու ենթարկեց Պարսկաստանը, մէկն և աւելացաւ: Եփրեմը, ամենագործօն, ամենաձեռն հաս անձնաւորութիւնը, որ նեցուին էր պարսից կառավարութեան, սպանւեց. Սամրդիմէի յաղթական արշաւի դէմ իրք լրեցին միջոց՝ զրկեցին Եփրեմին, որը անցեաւ ամսութ մի քանի անգամ ջարդել էր և յետ մղել թեհրան դիմող նախին շահին: Եւնա արդարացրեց իրեն վրայ դրւած յօյսիրը, սակայն մարդասպանի ձեռքը զրկեց Պարսկաստանը այդ վերջին ռազմիկից ևս, որը—նշանակալի հանգամանը է այդ—պարսիկ չէր, ոյլ ըրիստոնեայ հայ.. Խըրեւ սոտիկանապէտ՝ նա կորոցացաւ մեծ կորովով կարգ ու անդորրութիւն սահմանել թեհրանում երբ նրան կոչում էին պատերազմի դաշտ, նա միշտ պատրաստւած էր հապշտապ, արագօրէն: Խնտութիւնում և շրջահայեաց առաջնորդ էր, որ ժմտել էր իր գնդերը նորագոյն զինուորութեամբ ու կարգապահութեամբ: Պարսից կառավարութիւնը չունի իր տրանադրութեան տակ մի ուրիշ սուր, որ կարողանայ իր հմտութեամբ ու հաւատարծութեամբ չափւել Եփրեմի հետ... Նրա մահը Պարսկաստանի համար անփոխարինելի կորուստ է: Գիււար թէ այլ ևս գտնուի մի ուրիշը, որ կարծանայ թումբ դնել Սաւար Գովլէի յառաջնաւաց արշաւի առջև: Եփրեմի մահով ոչնչացաւ Պարսկաստանի համար և վերջին հնարաւորութիւնը՝ նորէն վերակացւելու և զիթ ժամանակաւորապէտ դիմագրելու Ռուսաստանի արշաւանքին:

"Vossische Zeitung", 25 մայիս.

Այրող պարսից ժաղովուրդը սուր է հագել իր հերոսի մահւան առթիւ, որ անգնահատելի ծառայութիւններ է յաստցել Ազատութեան և Սահմանադրութեան: Պարսիկները պատւաւոր տեղ կը տան նրան՝ իրենց մեծ մարդկանց շարբում: Նրա անունը յաւէտ կ'ապրի Պարսկաստանի պատմութեան մէջ:

"Le Siècle", 23 մայիս. Ժան Հերբետ, թերթի խմբագրապետը, որ իր արևելեան պտոյտի միջոցին տեսնել է Եփրեմի հետ, մեծ ոգեորութեամբ է խօսում նրա զինուորական կարողութիւնների մասին:

Ով որ անձամբ ճանաշել է Եփրեմին, ով որ տեսնէ է, թէ որպիսի տեղ է զրաւել նա նորագոյն Պարսկաստանում, կը

*). "Times"-ի խմբագրապետը վերջին պահուն, մի նամակով, ուղղաւած մէր խմբագլութեան, բացարում է, որ այդ ակամայ սխալին տեղիք է տեղ թեհրանի իր թղթակիցը:

Հասկանայ անմիջապէս այն անշտկելի կորուստը, որ նրա մահով կորում է խաղաղութեան դատը պարսկական արևելյան քունքութեամբ և յաղթ իրաւնական մահամական արդիւնքը: Օվերնի լեռնականներին, օժտած առաջավոր կրկնական քաջակերպ և ազգային հերոս իրամական Պարսկաստանում, մինչդեռ ինքը ոչ պարսիկ է և ոչ իսկ մահմական, այլ հայ է, քրիստոնեայ:

Ապա գծելով եփրեմեան յաղթանակների շաբանը՝ Հերբետ առում է:

Լոիկ և շաբանակ աշխատանքի վրայ, շնայեած անզոր հիւնդութեան, նա կենդանի ապացոյց էր, թէ ինչ կարող է անել մի հասիկ մարդ փոխելու համար մէկ ազգի ճակատագիրը ևթէ իր հայկական ծագումը շղագապատէր իրեն բեզերքի, վերապահ զիւքի և եթէ անդլուսուսական քաղաքականութիւնը շանդամալուծէր երկիրը վերածնող ու ժերր, Եփրեմը կրկնակ իր տեսակի մի կրօմքել կամ մի քանագարած: Ավ որ տեսնել է մի քանի տարի առաջ առաջ Եփրեմին, Խուսիսից արտաքսւած, վարպետ-բարտաշի արհետով հնզելինում, իր օրական պարէնը հազիւ հազիւ վաստակելիս—դժւար իր հաւատար իր աչքերին:

Կա ոյլ ևս չի վերապահայ թեհրան յաղթական կամարների տակից և չի գտնի իր բաղարի ամուսնուն, որ այն քան հպարտ էր նրանով...

Նման ներբողներ՝ բազմաթիւ ուրիշ թերթերում, մասնաւորապէս ուսւ մամուլի մէջ:

Խորին վշտով իմացանք մեր ընկեր Տիրան Միւն ասեանի մահը, որ տեղի է ունեցել Ֆիլիպպէի մէջ: Կենսագրականը—յաջորդով:

Լ Ո Ւ Բ Ե Բ

Խոտալական և տեղական սօցիալիստ կազմակերպութիւնների նախաձեռնութեամբ՝ գումարութեց ժրնէվի մէջ բազմամարդ միտինգ, բողոքելու համար ափրիկեան պոտերազմի գէմ: Հրաւիրաւ էր մասնակցելու և Հ. Յ. Գուշնակցութիւնը: Խոտալացի հաստորներն էին՝ Դէ Ամրը և Դէ Ֆալկո: Ունկնդիրները մեծ մասամբ իտալացներ էին: Նաև բազմաթիւ տեղացին, ուսւու, բուլղար, հայ, վրացի, թիւրքը ու այլ ուսունողները խօսք տրւեց ամենից առաջ Դրօշակի իմբագրութեան ներկայացացչներ, որ ֆրանսուրէն և առա խոտակելն ըսցարութեց ներկայ պատերազմի ծագումն ու Էռթիւնը, խալական բուրդուազիայի ընչաքաղաք ախորժակները, սմանական կառավարութեամբ, առաջնորդուած թիւրքական բաղարակութիւնների: Դիմիրը մէջ և տեղիքի մէջ և ազգերին մշտնչնապէս գրդռելով իր տարամերժ, պանթիւրքական բաղարականութեամբ, յարուցանում է շարունակական գծոհութիւնն ու խռովութիւնների:

Վերստիմ յիշեցնում եմք, որ Անրօշակուր պիտի դրկւի այսունետք միմիայն կամոմաւոր բաժանորմերիմ:

Ներկայ խամարը ուսացաւ, խմբագրաման եղանակութիւնն արտենալու: